

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՄԵՏԻ ՏԱՆՆ ԿԻՆԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԳՊՐՈՑԻ ԴԱՍԵՐ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԳՊՐՈՑԻ ԴԱՍԵՐ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Թ. ԳԻՐՔ

Ը. ԱՐԱՐՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ



Պատրաստեց՝
Նուպար Սրկ. Պերպերեան

ԱՆԹԻԼԻԱՍ - ԼԻՐԱՆԱՆ
1891

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
Երկու խօսք	3
Յառաջարկան	7
Դաս	
1.— Մարդ Արարածը Եւ Աստուծոյ Փրկագործութեան Խորհուրդը	9
2.— Աստուածաշունչ Մատեան (Ա. Մաս)	15
3.— Աստուածաշունչ Մատեան (Բ. Մաս)	20
4.— Հին Ուխտի Մարգարէները (Ա. Մաս)	25
5.— Հին Ուխտի Մարգարէները (Բ. Մաս)	30
6.— Քրիստոսի Առաքելութիւնը	37
7.— Ինը Երանիները	44
8.— Տէրունական Աղօթքը	50
9.— Յիսուսի Առակները	56
10.— Յիսուսի Հրաշքները	60
11.— Յիսուս Քրիստոսի Հակառակորդները	64
12.— Յիսուսի Խաչելութիւնն ու Յարութիւնը եւ Հրեայ Ազգին Կամակորութիւնը	70
13.— Քրիստոսի Տասներկու Առաքեալները	77
14.— Սուրբ Հոգիին Էջքը եւ Առաքեալներուն Քարոզութիւնը	83
15.— Պօղոս՝ Հեթանոսաց Առաքեալը	89
16.— Աշխարհի Լոյսն ի Հայաստան	98

17.— Քրիստոնէութիւնը Պետական Կրօնք Հոռմէական Կայսրութեան	104
18.— Ընդհանրական Եկեղեցոյ Բաժանեալ Ծիղաւորումները	109
19.— Հայաստանեայց Եկեղեցին Ընդհանրական Եկեղեցոյ Ծիրին Մէջ	119
20.— Տօներ եւ Սրբոց Յիշատակութիւններ	129
21.— Քրիստոնէական Դաստիարակութիւնը Պատճառ Հայ Գիրերու Գիտին եւ Հայ Մատենագրութեան	142
22.— Քրիստոնէական Դաստիարակութիւնն ու Հայ Մատենագրութիւնը Ժ., ԺԱ., եւ ԺԲ. Դարերուն	149
23.— Քրիստոնէական Դաստիարակութիւնն ու Հայ Մատենագրութիւնը ԺԳ. դարէն մինչեւ ԺԷ. Դար	157
24.— Քրիստոնէական Դաստիարակութիւնն ու Հայ Մատենագրութիւնը ԺԸ., ԺԹ. եւ Ի. Դարերուն:	167
25.— Կիրակնօրեայ Դպրոցը Եւ Անոր Մուտքը Հայաստանեայց Եկեղեցոյ Ծիրէն Ներս	175

Սոյն գիրքը կը հրատարակուի մեկեւնասութեամբ
ԾԱՓԻԿ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻՆ

The Tzapik Baghdasarian Charitable Trust
The First National Bank of Boston, Trustee

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Անհոն ուրախութեամբ եւ առ Աստուած գոհաբանական աղօթքի վերառարձումով կը հրատարակենք Բարշ. Նուպար Սրկ. Պերպէրեանի պատրաստած «Կիրակնօրեայ Դպրոցի Դասեր» շարքին վերջին՝ իններորդ գիրքը, Կիրակնօրեայ Դպրոցի աւարտական աշակերտներուն յատուկ: Նուպար Սրկ. Պերպէրեան անցնող աւելի քան յիսուն տարիներու ընթացքին գործեց, կը գործէ եւ վստահ ենք որ պիտի գործէ Կիրակնօրեայ Դպրոցի նուիրական անդատանէն ներս, որովհետեւ խորապէս կը հաստատայ մանուկի կրօնաբարոյական դաստիարակութեան անհրաժեշտութեան եւ անոր կատարած մեծ դերին՝ մանուկին, վաղուան եկեղեցոյ կեանքին մէջ:

Այսօր որեւէ ժամանակէ աւելի հայ դպրոցը կը տառապի կրօնական առողջ դաստիարակութեան պակասէն: Պատճառները շատ են, դասատու ուսուցիչներու պակասը, կրօնի լաւ մշակումն ու պատրաստումն դասագրքերու չգոյութիւնը, եւն:

Մարդկային ընկերութիւնը առանց կրօնական առողջ դաստիարակութեան, աւետարանական կեանքի ուղիղ ծանօթութեան ու ըմբռնման՝ անկասկած որ կը թերանայ իր առաքելութեան ու կոչումին մէջ: Կրօնական դաստիարակութիւնը ընդհանուր դաստիարակութեան անբաժանելի մէկ մասն է, առանց որուն թերի կը մնայ դաստիարակութիւնը ինք:

Գիտութիւնը — կրթութիւն — առանց Աստուծոյ վախի — կրօնքի ուսուցման — բարիքէն աւելի չարիք կրնայ հասցնել մարդկային ընկերութեան: Պօղոս Առաքեալ Տիմոթէոս իր սիրելի աշակերտին կը գրէ. — «Աստուածաշունչ ամէն գրուածք օգտակար է ուսուցման, լանդիմանութեան, ուղղելու եւ արդարութեան մէջ խրատելու համար, որպէսզի Աստուծոյ մարդը ըլլայ կատարեալ, ամբացած ամէն բարի գործի համար» (Բ. ՏԻՄՈԹ. Գ. 16-17):

Սոյն գիրքը կը հրատարակուի մեկեւնասութեամբ
ԾԱՓԻԿ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ

The Tzapik Baghdasarian Charitable Trust
The First National Bank of Boston, Trustee

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Անհոն ուրախութեամբ եւ առ Աստուած գոհաբանական աղօթքի վերառարձումով կը հրատարակենք Բարշ. Նուպար Սրկ. Պերպլերեանի պատրաստած «Կիրակնօրեայ Դպրոցի Դասեր» շարքին վերջին՝ իններորդ գիրքը, Կիրակնօրեայ Դպրոցի ասարտական աշակերտներուն յատուկ: Նուպար Սրկ. Պերպլերեան անցնող անելի քան շիտուն տարիներու ընթացքին գործեց, կը գործէ եւ վստահ ենք որ պիտի գործէ Կիրակնօրեայ Դպրոցի նուիրական անդաստանէն ներս, որովհետեւ խորապէս կը հաւատայ մանուկի կրօնաբարոյական դաստիարակութեան անհրաժեշտութեան եւ անոր կատարած մեծ դերին՝ մանուկին, վաղուան եկեղեցույ կեանքին մէջ:

Այսօր որեւէ ժամանակէ անելի հայ դպրոցը կը տառապի կրօնական առողջ դաստիարակութեան պակասէն: Պատճառները շատ են, դասատու ուսուցիչներու պակասը, կրօնի լաւ մշակուած ու պատրաստուած դասագրքերու չգոյութիւնը, եւն:

Մարդկային ընկերութիւնը առանց կրօնական առողջ դաստիարակութեան, անտարանական կեանքի ուղիղ ծանօթութեան ու ըմբռնման՝ անկասկած որ կը թերանայ իր առաքելութեան ու կոչումին մէջ: Կրօնական դաստիարակութիւնը ընդհանուր դաստիարակութեան անբաժանելի մէկ մասն է, առանց որուն թերի կը մնայ դաստիարակութիւնը ինք:

Գիտութիւնը — կրթութիւն — առանց Աստուծոյ վախի — կրօնքի ուսուցման — բարիքէն անելի չարիք կրնայ հասցնել մարդկային ընկերութեան: Պօղոս Առաքեալ Տիմոթէոս իր սիրելի աշակերտին կը գրէ. — «Աստուածաշունչ ամէն գրուածք օգտակար է ուսուցման, յանդիմանութեան, ուղղելու եւ արդարութեան մէջ խրատելու համար, որպէսզի Աստուծոյ մարդը ըլլայ կատարեալ, ամբացած ամէն բարի գործի համար» (Բ. ՏԻՄՈԹ. Գ. 16-17):

Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցները անցնող անլի քան վաթսուն տարիներուն, հայ ժողովուրդի զաւակներուն դաստիարակութեան նուիրական գործին իրենց բաժինը բերին: Կիրակնօրեայ Դպրոց յաճախող հայ աշակերտը հաղորդակից եղաւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի կեանքին եւ մեր եկեղեցւոյ սրբազան հայրապետներուն կեանքի ամբողջութիւնը կազմող աղօթքին, շարականին, պատմութեան ու գործունէութեան: Կիրակնօրեայ Դպրոցին մէջ հայ աշակերտը ինքզինք անլի սերտօրէն կապուած զգաց իր հայրերու կեանքին ու այդ կեանքէն մեզի հասած անկորնչելի գանձերուն: Կիրակնօրեայ Դպրոցը հայ աշակերտը կ'առաջնորդէ իր հայրերու քայլերով, որպէսզի ան կարենայ պաշտպանել ե՛ւ իր եկեղեցին ե՛ւ իր ուղղափառ վարդապետութիւնը ամէն տեսակի մոլոր վարդապետութեանց դէմ: Ահա այս հետանկարով է որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որ հովանաւորն է Կիրակնօրեայ Դպրոցներուն, միշտ քաջաշերած ու գնահատած է քրիստոնէական առողջ դաստիարակութեան նուիրական գործն ու Կիրակնօրեայ Դպրոցը:

Սիրելի ուսուցիչներ,

Ձեզի յանձնուած մանուկները մէյ-մէկ հրեշտակատիպ էակներ են, որոնք ձեր մէջ կը սիրեն տեսնել տիպար մարդը: Ձանացէք շահիլ այդ մանուկներուն վստահութիւնը ու այն ատեն վստահ եղէք որ ձեր գործը պիտի ճեշտանայ: Ահա ձեզի նոր դասագիրք մը, որ պիտի ծառայէ իբրեւ ուղեցոյց ձեր աշխատանքին: Հոն տեղ գրուած դասերը վստահաբար ընդլայնումի եւ թերեւ, աշակերտին հասկնալի դարձրնելու համար, անլի սերտողութեան պէտք ունին: Ձեզի կը մնայ դասը սիրցնել, իրացնել տալ աշակերտին, որովհետեւ եթէ ան սէր չունենայ իր առած դասին հանդէպ, ի զուր պիտի ըլլայ որեւէ տեսակ ջանք կամ աշխատանք: Էականը աշակերտին մօտենալու եւ անոր նիւթը փոխանցելու կերպն է, եւ ասիկա յաջողապէս ընելու համար՝ պէտք է աղօթքով ու մեր եկեղեցւոյ հայրերուն կեանքով ձեր կեանքը հարստացնէք, միտքը պայծառացնէք եւ սիրտն ու հոգին զօրացնէք, ալլեւ ձեր ձեռքին մէջ եղող դասագիրքով չբաւականանաք, մանաւանդ դասին պատրաստութեան ժամանակ:

Արտեղ, կ'ուզենք մեր ջերմ գնահատանքը յայտնել Բրշ. Նուպար Սրկ. Պէրպէրեանին իր այս աշխատանքին համար: Կը հատարանք

որ սոյն դասագիրքը կրնայ օգտակար ըլլալ նաեւ մեր առօրեայ դպրոցներուն, որոնք կրօնի դասագրքերու պակասէն կը զանգատին: Մեր եղբայրական անկեղծ շնորհակալութիւնները Գերշ. Տ. Արտաւազդ Արքեպիսկոպոսին որ բարեխղճօրէն կարդաց ամբողջ գիրքը, կատարեց անհրաժեշտ սրբագրութիւնները եւ տուաւ իր շինիչ դիտողութիւնները:

ՍԵՊՈՒՀ Ծ. ՎՐԴ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Վարիչ Տնօրէն

Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«Կիրակնօրեայ Դպրոցի Դասեր»-ու շարքը կ'ամբողջանայ սույն դասագիրքով: Այս ինններորդ գիրքը պատրաստուած է Կիրակնօրեայ դպրոցի Ը. դասարանի՝ ընթացաւարտ աշակերտներուն համար:

Քսանհինգ դասերու մէջ ջանացեր ենք ամփոփ կերպով աշակերտին ուշադրութեան յանձնել՝

ա) Մարդ արարածին մեղանշումն ու անկումը իր սրբութենէն,

բ) Անկեալ մարդուն վերականգնումին համար Աստուծոյ փրկութեան ծրագիրը,

գ) Աստուծոյ ծրագրին մէջ Իսրայէլի ազգին կոչումն ու դերը,

դ) Քրիստոսի առաքելութիւնը եւ փրկագործութեան խորհուրդը,

ե) Քրիստոսի առաքելներուն քարոզութիւնը եւ հեթանոս ազգերուն դարձը,

զ) Հայաստանեայց Եկեղեցիին կոչումն ու դերը:

Մեր փափաքն է որ հայ աշակերտը վերոյիշեալ նիւթերը ուսումնասիրելով վերահասու դառնայ Աստուծոյ ծրագրին եւ որպէս քրիստոնէայ՝ իր կոչումին, ու կիրակնօրեայ դպրոցէն շրջանաւարտ դառնալէ ետք նոյն հաստատութեան մէջ լծուի հայ մանկտոյն կրօնաբարոյական դաստիարակութեան:

Այդ հաւատքով եւ յոյսով ձեռնարկեցինք «Կիրակնօրեայ Դպրոցի Դասեր»-ու պատրաստութեան, որուն ամբողջացումին համար փառք կու տանք Աստուծոյ եւ մեր շնորհակալութիւնը կը յայտնենք մեզ քաջալերողներուն:

ՆՈՒՊԱՐ ՍՐԿ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Ա. Դաս

Մարդ Արարածը Եւ Աստուծոյ Փրկագործութեան Խորհուրդը

Մարդ արարածը Աստուծոյ ստեղծագործութիւններուն պսակն է. իր Արարիչին պատկերն ունի եւ իր ներսիդին կը կրէ անոր շունչը. հետեւաբար անմահ է հողիով: Մարդը այլ հողեղէն արարածներէն կը բնորոշուի իր բանականութեամբ, իմացականութեամբ, ազատ կամքով եւ իր Ստեղծիչին հետ յարաբերելու ձգտումով:

Աստուծոյ հանդէպ մարդ արարածին ունեցած հաւատքն ու պաշտամունքը կը կոչուի կրօնք: Կրնանք ըսել թէ կրօնքը մարդ արարածին յարաբերութիւնն ու հաղորդակցութիւնն է իր Աստուծոյն հետ:

Աստուած սէր է: Ան անհուն սէր կը տածէ մարդ արարածին հանդէպ եւ անոր վայելքին համար ստեղծած է երկիրը իր բոլոր բարիքներով. նաեւ երկնակամարին վրայ հաստատած է արեւը, լուսինն ու աստղերը:

Առաջին օրէն Աստուած հայրական սիրով խօսեցաւ մարդուն (Ադամին) հետ. անոր յանձնեց Եդեմի պարտէզը եւ զայն իշխան կարգեց երկրին ու երկրի բոլոր արարածներուն:

Եդեմի պարտէզին մէջ Ադամ կ'արժանանար իր Արարիչին տեսութեան: Ուրախութեամբ կը պաշտէր զայն եւ կը բերկրէր դրախտին վայելչութեան մէջ: Սակայն Ադամ չկրցաւ իր կոչումին տէր մնալ: Ան Աստուծոյ պատուէրը չպահելով մեղանչեց. իր սրբութիւնը կորսնցնելով չկրցաւ կանգնիլ ամենասուրբ Աստուծոյ առջեւ եւ ըստ առաջնոյն վայելել անոր քաղցր տեսութիւնը. ուստի ջանաց ծածկուիլ Անկէ:

Աստուած հայրաբար պատժեց Ադամն ու անոր կինը՝ Եւան իրենց անհնազանդութեան եւ մեղանշումին համար: Զանոնք դրախտէն դուրս վճնտեց եւ անոնց հողեղէն մարմինը մահուան դատապարտեց, որպէսզի փրկէր անոնց հոգին յաւիտենական տանջանքէ: Պատժելով հանդերձ ողորմեցաւ անոնց: Իր ինամքին տակ առաւ Ադամը, ու երկրի փուշերուն եւ տատասկներուն կողքին պտղաբերութիւն ալ բուսցուց, որպէսզի ան կարենար վայելել իր ճակտի քրտինքին ու աշխատանքին արդիւնքը:

Ադամ զղջաց իր մեղքին համար: Հաւատաց Աստուծոյ խօսքին եւ պատուիրեց իր զաւակներուն, թոռներուն եւ ծոռներուն որ իրենց արտադրութեանց լաւագոյնները գոհաբերեն Աստուծոյ եւ աստուածաժախ ու մաքուր ըլլան:

Սակայն Ադամի սերունդէն շատ քիչեր միայն պահեցին ու կատարեցին իրենց նախահօր պատուէրը: Ադամին բազմացող սերունդը իր ցանկութիւններուն ետեւէն երթալով ապականեցաւ եւ Աստուած ջրհեղեղով պատժեց մարդիկը՝ երկիրը պղծութենէն մաքրելու համար: Միայն արդար Նոյը իր ութ հոգինոց ընտանիքով փրկուեցաւ Աստուծոյ պատիժէն:

Հետագային Նոյի երեք որդիներուն՝ Սեմի, Քամի եւ Յաբէթի սերունդներն ալ թերահաւատութեամբ չուզեցին յիշել Նոյ նահապետին հետ Աստուծոյ կատարած ուխտը եւ չհաւատացին Տիրոջ տուած խոստումին, թէ այլեւս երկիրը ջրհեղեղով պիտի չպատժուէր:

Մարդիկ ամբարտաւան դարձան եւ իրենց Արարիչին դէմ ապստամբելով ձեռնարկեցին բարձր աշտարակի մը շինութեան: Աստուած անոնց չար եւ կամակոր խորհուրդը խափանելու համար խառնակեց անոնց լեզուն, ու անոնք զիրար չհասկնալով իրարմէ բաժնուեցան:

Աշխարհի զանազան կողմերը ցրու եղած մարդիկ չհետեւեցան Նոյ նահապետէն իրենց փոխանցուած ճշմարտութեան խօսքերուն ու պատուէրներուն: Մտոցան զԱստու-

ուած եւ իրենց ցանկութիւններուն համեմատ կուռքեր շինեցին ու սկսան զանոնք պաշտել:

Սեմի սերունդէն Աբրահամ նահապետ չհետեւեցաւ իր դարու կռապաշտութեան եւ անոր կենցաղին: Ան հաւատաց երկինքն ու երկիրը ստեղծող Արարիչ Աստուծոյ եւ զԱյն փնտռեց պաշտելու համար: Աստուած իրեն հանդէպ Աբրահամին հաւատքն ու սէրը տեսնելով յայտնուեցաւ անոր եւ օրհնեց զայն. ուխտ ըրաւ անոր հետ եւ խոստացաւ անոր սերունդովը օրհնել երկրի բոլոր ազգերը:

Աբրահամի մահէն ետք Աստուած իր ուխտը վերանորոգեց անոր որդւոյն՝ Իսահակի հետ եւ ապա Իսահակի որդւոյն՝ Յակոբի հետ: Տարիներ ետք, Մովսէս Մարգարէին օրով, Իսրայէլի որդիներուն հետ դարձեալ վերանորոգեց իր ուխտը եւ խոստացաւ զիրենք մեծ ազգ մը ընել ու անոնց տուաւ տասնարանեայ պատուիրաններն ու ծիսական կանոնները: Մովսէս մարգարէին պատուիրեց զրի առնել իր խօսքերը, յայտնութիւնները, կատարած ուխտը, հրաշքները, մեծամեծ գործերն ու պատուիրանները, որպէսզի Իսրայէլի ազգը իր ձեռքին մէջ ունենար իր Արարիչին գրաւոր յայտնութիւնները եւ ըստ այնմ վարէր օրինակելի սուրբ կեանք մը՝ հեռու մնալով այլ ազգերու կռապաշտութենէն ու մոլութիւններէն:

Մովսէս մարգարէն աստուածային ներշնչումով զրի առաւ Աստուծոյ ստեղծագործութեան, Ադամի անկումին, Նոյ նահապետին, Աբրահամին, Իսահակին, Յակոբին եւ անոնց սերունդ Իսրայէլի ազգին պատմութիւնը, Աստուծոյ պատուիրանները, հաստատած օրէնքներն ու կանոնները:

Հետագայ դարերուն Աստուած իր Սուրբ Հոգիովը ներշնչեց Իսրայէլի ազգին մարգարէները, որոնք իրենց կարգին զրի առին Աստուծոյ այլ պատգամները ու փոխանցեցին իրենց ժողովուրդին եւ յայտնեցին թէ Աստուծոյ Միածին Որդին պիտի մարդեղանար ու յայտնուէր՝ աշխարհին մեղքը բառնալու համար:

ժամանակներու լրումին մարգարէներուն գուշակութիւնները կատարուեցան, եւ Աստուածորդին՝ սպասուած Մեսիան* մարմնացաւ, մարդացաւ եւ ծնաւ Սուրբ Կոյս Մարիամէն: Ան որպէս Նոր Ազամ ծառայի կերպարանք առաւ եւ իր անձը ի սպաս դրաւ մեղուցեալ Ադամին եւ անոր սերունդին փրկութեան: Ամենայն հնազանդութեամբ կատարեց Հօր Աստուծոյ կամքը: Բարոզեց մարդարարածին հանդէպ Աստուծոյ տաճած անհուն սէրը եւ հրաւիրեց բոլոր մարդիկը երկինքի արքայութիւնը ժառանգելու: Բժշկեց հիւանդները, մարդոց ցաւերը ամօքեց, հրաշքներ կատարեց ու Աստուծոյ փառքը ցոյց տուաւ: Յանձն առաւ զոհուիլ խաչին վրայ եւ իր կեանքը նուիրել Հայր Աստուծոյ՝ մեղաւոր մարդկութեան քաւութիւն ընելու համար: Հայր Աստուած իր Որդւոյն միջնորդութիւնը ընդունեց եւ անոր թափած արիւնով նոր ուխտ մը հաստատեց համայն աշխարհի հետ՝ Ադամին յանցանքով յառաջացած մեղքին պատը վերցնելու եւ բանալու համար փակուած դրախտին դուռը՝ սպաշխարութեամբ դարձի եկող մեղաւորներուն առջեւ:

Յիսուս Քրիստոս հաստատեց իր սուրբ Եկեղեցին, որպէսզի անոր միջոցաւ բոլոր ազգերուն աւետարանուէր իր կատարած փրկութիւնը եւ մարդիկ դարձի դային, մկրտուէին, սրբուէին իրենց մեղքերէն ու որդեգիր ըլլային Աստուծոյ: Իր հիմնած եկեղեցիին վրայ տեսուչ դրաւ առաքեալները ու երկրի վրայ զանոնք փոխանորդ կարգեց իրեն՝ իշխանութիւն տալով անոնց աւետարանելու, մկրտուելու, հովուելու, մեղաւորները իրենց մեղքերէն արձակելու, հիւանդներու վրայ ձեռք դնելով աղօթելու եւ հաւատացեալները հաւատքի մէջ հաստատ պահելու:

Իսրայէլի ազգը իր ամբողջութեամբ տէր չեղաւ իր կոչումին: Հրեայ ղեկավար քահանայապետներն ու իշ-

*) Մեսիա կը ճշտուի Օժեպ Տէր, այսինքն՝ թագաւոր: Յունարէն բառով՝ Քրիստոս:

խանները եւ ժողովուրդին մեծամասնութիւնը մերժեցին ընդունիլ Յիսուսը որպէս Քրիստոս եւ Աստուածորդի: Չհանդուրժեցին անոր տուած աստուածային սիրոյ պատուիրաններուն, որովհետեւ իրենք չար էին, ու նախանձոտ: Ամբարտաւանութեամբ դէմ կեցան ճշմարտութեան եւ չուզեցին քննել մարգարէական գիրքերուն մէջ Քրիստոսի մասին գրուած գուշակութիւնները, որոնք կը կատարուէին Յիսուսի վրայ: Չուզեցին հաւատալ Քրիստոսի փառապանծ յարութեան ստուգութեան եւ պահակ գինուորները կաշառեցին որ սուտ վկայութիւն ընեն ճշմարտութեան դէմ: Հրեայ ժողովուրդը կամակորութեամբ ինքզինքը դուրս ձգեց Աստուծոյ թագաւորութենէն եւ չուզեց դարձի գալ ու փրկուիլ: Իսրայէլի զաւակներէն փոքր հատուած մը միայն ընդառաջեց Յիսուս Քրիստոսի հրաւերին:

Այդ հատուածը, խմբուած առաքեալներուն շուրջ, կորիզը եղաւ Քրիստոսի Սուրբ Եկեղեցիին եւ վկան հանդիսացաւ Յիսուսի փառապանծ յարութեան: Պենտէկոստէի օրը եւ անկէ ետք դարձի եկող հազարաւոր հրեաներն ալ միացան անոնց:

Առաքեալներն ու անոնց զործակիցները ցրուեցան աշխարհի ամէն կողմերը, լուսաւորեցին հեթանոս ազգերը ու անոնց վրայ աստուածային օրհնութեան հեղումին պատճառ եղան: Իրենց քարոզած երկիրներուն մէջ առաքեալները հիմնեցին եկեղեցիներ, որոնց վրայ ձեռնադրեցին եպիսկոպոսներ եւ Յիսուս Քրիստոսէ իրենց ստացած իշխանութիւնն ու պաշտօնը փոխանցեցին անոնց: Հետագային անոնք ալ իրենց ստացած շնորհները բաշխեցին իրենց յաջորդող եպիսկոպոսներուն:

Քրիստոսի հաւատացող եւ ամենասուրբ Ծրրորդութիւնը դաւանող ամէն ազգէ հաւատացեալներու փրկեալ բազմութիւնը կոչուեցաւ Նոր Իսրայէլ* եւ Աստուծոյ

*) Աստուծոյ առջեւ «Իսրայէլ» կոչումին արժանի են սրտով ուղիղ հաւատացեալները (Մաղժ. ՀՔ. (2Գ.) 1):

ընտրեալ ժողովուրդ, որուն կոչումն է Աւետարանը քարոզել աշխարհին, լուսաւորել հեթանոսները եւ զանոնք երկինք առաջնորդել:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Մարդը իր ո՞ր յատկութիւններով կը բնորոշուի երկրի վրայ ապրող այլ արարածներէն:
- 2) Ի՞նչ է կրօնքը:
- 3) Ազամ երկրի վրայ ի՞նչ կարգուած էր:
- 4) Ազամ կրցա՞ւ իր կոչումին տէր մնալ:
- 5) Աստուած Ազամին եւ անոր սերունդին մեղքերը քանցու համար ի՞նչ խոստացաւ:
- 6) Աստուած ինչո՞ւ համար ջրհեղեղով պատժեց երկրի բնակիչները:
- 7) Աստուած ինչո՞ւ համար խառնակեց մարդոց լեզուները:
- 8) Ինչո՞ւ համար Աստուած Աբրահամը օրհնեց եւ ի՞նչ խոստացաւ անոր:
- 9) Ո՞վ երկինքէն երկիր իջնելով մարդացաւ. ինչո՞ւ համար:
- 10) Հայր Աստուած որո՞ւն միջնորդութեամբ նոր ուխտ մը հաստատեց եւ փակուած դրախտին դուռը բացաւ:
- 11) Իսրայէլի ազգը իր կոչումին տէրը եղա՞ւ:
- 12) Յիսուս Քրիստոս ինչո՞ւ համար հիմնեց իր եկեղեցին:
- 13) Յիսուս ի՞նչ իշխանութիւն տուաւ իր առաքեալներուն:
- 14) Որո՞նք աշխարհի հեթանոս ազգերուն քարոզեցին Քրիստոսի փրկութեան Աւետարանը:
- 15) Ամէն ազգերէ կազմուած քրիստոնեայ հաւատացեալներու փրկեալ բազմութիւնը ի՞նչ կոչուեցաւ:
- 16) Նոր Իսրայէլի կամ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդին կոչումը ի՞նչ է:

Բ. Դաս

Աստուածաշունչ Մատեան (Ա. Մաս)

Քրիստոսի Սուրբ Եկեղեցին իր ուղղութիւնը կը ստանայ Աստուածաշունչ մատեանէն, որ 76 գիրքերու հաւաքածոյ մըն է: Այդ գիրքերը կը պարունակեն Աստուծոյ յայտնութիւններն ու խօսքերը: Աստուածաշունչը ցոյց կու տայ մարդ արարածին հետ Աստուծոյ ունեցած յարաբերութիւնները եւ կը պատգամէ անոր պատուիրանները, խրատները, օրէնքներն ու կանոնները:

Աստուածաշունչի 76 գիրքերը գրուած են մօտաւորապէս 40 հեղինակներու կողմէ, զանազան դարերու ընթացքին (չուրջ 1600 տարիներ):

Այս 76 գիրքերու ամբողջութիւնը կոչուած է Աստուածաշունչ, որովհետեւ անոնց հեղինակները զանոնք գրելու ատեն ներշնչուած են Աստուծոյ Սուրբ Հոգիէն եւ անոր կամքին համեմատ շարժած են իրենց գրիչները: Անոնց գրական, բանաստեղծական, իմաստասիրական գրուածքներուն եւ մարդկային կեանքի փորձառութիւններէն քաղուած իմաստուն խօսքերուն, մարդարէական պատգամներուն ու ապագայի գալիք դէպքերու գուշակութիւններուն մէջ ակներեւ է Սուրբ Հոգիին առաջնորդութիւնը:

Սուրբ Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Բոլոր Գիրքը Աստուծոյ շունչն է, եւ օգտակար է ստրկեցնելու, յանդիմանելու, շտկելու եւ արդարութեան խրատելու համար» (Բ.ՏԻՄ. Գ.16): Սուրբ Պետրոս առաքեալն ալ կ'ըսէ. «Մարգարէութիւն մը երբեք մարդոց կամքին պէս չտրուեցաւ, հապա Աստուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շարժած խօսեցան» (Բ.ՊԵՏ. Ա.21):

Այս մատեանը կոչուած է նաեւ Սուրբ Գիրք (սուրբ գիրքեր), որովհետեւ այդ գիրքերը կը պարունակեն ամենասուրբ Աստուծոյ սուրբ խօսքերը, որոնք մեղաւոր մարդը կ'առաջնորդեն սրբութեան:

Աստուածաշունչի բոլոր գիրքերը այլեւայլ ժամանակներու մէջ գրուած ըլլալով հանդերձ՝ իրարու լրացուցիչ են եւ կը յայտնեն Աստուծոյ անհուն սէրն ու փրկութեան ծրագիրը անկեալ մարդուն հանդէպ: Կը հրահրեն մարդ արարածը վերականգնելու, սրբանալու եւ փրկուելու:

Աստուածաշունչը բաղկացած է երկու մասերէ, որոնք կը կոչուին Հիմ Ուխտ եւ Նոր Ուխտ: Ուխտի գիրքեր կը կոչուին, որովհետեւ կը պատգամեն մարդ արարածին փրկութեան համար Աստուծոյ ուխտն ու խոստումը: Կը կոչուին նաեւ Հիմ Կտակարան եւ Նոր Կտակարան, որովհետեւ այդ մատեանները Աստուծոյ ուխտին եւ խոստումին վաւերական գիրքերն ըլլալով կտակի բնոյթ ունին:

Հիմ Կտակարան

Հին կտակարանը աւետարներն է Նոր Ուխտի շրջանին կատարուելիք դէպքերուն: Կը պարունակէ 49 գիրքեր*:

*) Քրիստոսի առաքնակներուն կողմէ ընդհանրական եկեղեցիին փոխանցուած Հիմ Կտակարանը պարունակած է 49 գիրքեր: Հետեւաբար Յոյն, Լատին, Հայ եւ այլ հին եկեղեցիներ այդ 49 գիրքերը ընդունած են Աստուծմէ ներշնչեալ: Սակայն վերջաբոյս բողոքականութիւնը անոնցմէ տասը գիրքեր դուրս ձգած է իր հրատարակութիւններուն մէջէն՝ յարելով այն հրեայ թարգմաններուն որոնք ապրեցան Երուսաղէմի կործանումէն վերջ, երբ հրեայ ժողովուրդը կամակորոպեամբ ինքզինք դուրս ձգեց Աստուծոյ թագաւորութենէն, որով իրենց կողմէ որեւէ ձեռնարկ չէր կրնար կատարուիլ աստուածային ներշնչումով:

Ներկայ հայերէն աշխարհաբար Աստուածաշունչն այլ բողոքական միութեաններու կողմէ թարգմանուած եւ հրատարակուած ըլլալով պակասատր է եւ իր մէջ չի պարունակեր Բ. Եզրասի, Տովբիթի, Յուդիթի, Իմաստութիւն Սողոմոնի, Սիրաէի, Բարուէի, եւ Ա. Բ. Գ. Դ. Մակաբայեցոց գիրքերը:

որոնց մէջ կան պատմական, մարգարէական, վարդապետական, բարեպաշտական, բարոյական գրութիւններ, Աստուծոյ մատուցուած աղօթքներ եւ օրհնութեան երգեր: Այդ մատեաններուն մէջ գրուած է պատմութիւնը տիեզերքի եւ մարդու ստեղծագործութեան ու նաեւ Իսրայէլի ազգին ծագման եւ հեթանոս ազգերը լուսաւորելու համար անոր դերին մասին:

Հին Կտակարանին մէջ ակնյայտ է թէ Աստուած աստիճանաբար, հանգրուան առ հանգրուան տուած է իր յայտնութիւններն ու պատգամները Իսրայէլի ազգին՝ իր կատարելիք փրկութեան մեծ ծրագրի մասին: Անոնց մէջ Աստուած կը խոստանայ աշխարհի բոլոր ազգերն ալ իրեն որդեգիր ընել ու ընտրեալ ժողովուրդ դարձնել իր Միածին Որդւոյն միջոցաւ:

Հին Ուխտին մէջ հաստատուած ծէսերն ու արարողութիւնները խորհրդանշաններ եղան Նոր Ուխտի Գառին՝ Քրիստոսի մարդեղութեան, մկրտութեան, աւետարանչութեան, հրաշագործութեան, չարչարանքներուն, խաչելութեան եւ հրաշափառ յարութեան. նաեւ Եկեղեցւոյ կազմութեան, Սուրբ Հոգւոյն գալստեան, առաքելական քարոզութեան եւ հեթանոս ազգերու լուսաւորութեան:

Հին Կտակարանի 49 գիրքերն են՝

Մկրտոց	Նէեմիայ	Դանիէլի
Ելից	Տովբիթ	Ուսուցիչ
Ղեւոնցուց	Յուդիթ	Յովեղեայ
Թուց	Եսթերայ	Ամովսայ
Երկրորդ Օրինաց	Յոբայ	Աբդիու
Յեսուայ	Սաղմոսաց	Յովնանու
Դասաւորաց	Առակաց	Միքիայ
Հռութայ	Փղօմպի	Նաուոմայ
Ա. Թագաւորաց	Ողբք Երեմիայ	Ամբակումայ
Բ. Թագաւորաց	Երգ Երզոց	Սոփոնեայ
Գ. Թագաւորաց	Իմաստութիւն Սողոմոնի	Անգեայ
Դ. Թագաւորաց	Սիրաբայ	Ջաբարեայ
Ա. Մնացորդաց	Եսայեայ	Մաղաբեայ
Բ. Մնացորդաց	Երեմիայ	Ա. Մակաբայեցոց
Ա. Եզրասայ	Բարուէայ	Բ. Մակաբայեցոց
Բ. Եզրասայ	Եղեկիելի	Գ. Մակաբայեցոց
		Դ. Մակաբայեցոց

Հին Կտակարանի առաջին հինգ մատեանները՝ Մնրն-
դոց, Ելից, Ղեւտացոց, Թուոց եւ Երկրորդ Օրինաց գիր-
քերը գրած է Մովսէս Մարգարէն, որոնք կը կոչուին Օրի-
նաց Գիրքեր, Հնգամատեան, Մովսէսի Գիրքեր, ու նաեւ
Ուխտի Գիրքեր:

Միւս մատեաններէն երկրորդ խումբ մը ճանչցուած
է մարգարէութիւններ անուանով: Իսկ երրորդ մատեան-
ները կոչուած են Իմաստութեան Գիրքեր:

Հին Կտակարանի մատեաններուն մէջ Սաղմոսաց
գիրքը ազօթմատեան մըն է եւ նոյն ատեն կը պարունակէ
մարգարէութիւններ Քրիստոսի մարգեղութեան եւ կատա-
րելիք փրկագործութեան մասին:

Քրիստոսի աշխարհ գալէն առաջ Հին Կտակարանի
մատեանները ի մի հաւաքուած եւ դասաւորուած էին Աս-
տուծոյ Սուրբ Հոգիէն ներշնչուած ու շարժած աստուա-
ծավախ հրեայ բարբիներու կողմէ: Յիսուս Քրիստոսի եւ
առաքեալներու օրով Հին Կտակարանի 49 գիրքերը որպէս
մէկ ամբողջութիւն խմբագրուած վիճակի մէջ էին եւ
յունարէնի թարգմանուեցան Ն. Ք. 280-ի ատենները,
Եգիպտոսի մէջ, հեթանոսներու համար:

Հին Կտակարանի այդ յունարէն թարգմանութիւնը
կոչուած է «Եօթանասնից Թարգմանութիւն», որովհետեւ
ըստ աւանդութեան զայն երբայեցերէնէ յունարէնի թարգ-
մանողները եղած են եօթանասուն երկու բարբիներ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Քանի՞ գիրքերու ամբողջութիւնն է Աստուածա-
շունչ մատեանը:
- 2) Ինչո՞ւ համար Աստուածաշունչ կը կոչուի ան:
- 3) Ինչո՞ւ համար կը կոչուի նաեւ Սուրբ Գիրք:
- 4) Աստուածաշունչը քանի՞ մասերէ բաղկացած է:
- 5) Աստուածաշունչի երկու մասերուն ի՞նչ անուններ
տրուած են:

6) Ինչո՞ւ համար անոնք Ուխտի Գիրքեր կը կոչուին:
7) Ինչո՞ւ համար անոնք կը կոչուին նաեւ Կտակա-
րաններ:

8) Հին Կտակարանը քանի՞ գիրքեր կը պարունակէ:
9) Ո՞վ գրած է Հին Կտակարանի առաջին հինգ գիր-
քերը:

10) Տո՛ւր անունները այդ առաջին գիրքերուն:

11) Այդ հինգ գիրքերուն ամբողջութիւնը ի՞նչ անուն-
ներով կը ճանչցուի:

12) Միւս գիրքերը քանի՞ խումբի բաժնուած են եւ
ի՞նչ անուն տրուած է անոնց:

13) Սաղմոսաց Գիրքը ի՞նչ է եւ որո՞ւ մասին մար-
գարէութիւններ կը պարունակէ:

14) Որո՞նք ի մի հաւաքած եւ դասաւորած են Հին
Կտակարանի 49 գիրքերը:

15) Կրնա՞ս անունները տալ Հին Կտակարանի գիրքե-
րուն:

16) Ինչո՞ւ համար Եօթանասնից Թարգմանութիւն կոչ-
ուած է Հին Կտակարանի յունարէն թարգմանութիւնը:

Աստուածաշունչ Մատեան
(Բ. Մաս)

Նոր Կտակարան

Նոր Ուխտը կատարումն է Հին Կտակարանի մարգարէութեանց եւ լրումը (ամբողջացումը) Աստուծոյ յայտնութիւններուն:

Նոր Կտակարանը կարգաւորվ կը տեսնենք թէ կէտ առ կէտ կատարուած են Հին Կտակարանի մէջ գրուած մարգարէութիւնները: Եւ Հայր Աստուած իր Որդիով խօսած ու լրացուցած է իր բոլոր պատգամները համայն մարգարէութեան. հրաւէր ուղղած է բոլոր մարդոց որ հաւատքի վան, մկրտուին, իրենց մեղքերէն սրբուին, հնազանդ ըլլան իրենց Արարիչին ու ժառանգեն երկինքի արքայութիւնը:

Նոր Կտակարանը կը պարունակէ 27 գիրքեր, որոնք են՝

- Աւետարան ըստ Մատթէոսի
- Աւետարան ըստ Մարկոսի
- Աւետարան ըստ Լուկասու
- Աւետարան ըստ Յովհաննու
- Գործք Առաքելոց
- Թուղթ Պօղոսի Առաքելոյն առ Հռովմայեցիս
- Թուղթ Պօղոսի Առաքելոյն առ Կորինացիս Ա.
- Թուղթ Պօղոսի Առաքելոյն առ Կորինացիս Բ.
- Թուղթ Պօղոսի Առաքելոյն առ Գաղատացիս
- Թուղթ Պօղոսի Առաքելոյն առ Եփեսացիս
- Թուղթ Պօղոսի Առաքելոյն առ Փիլիպպեցիս
- Թուղթ Պօղոսի Առաքելոյն առ Կողոսացիս

- Թուղթ Պօղոսի Առաքելոյն առ Թեսաղոնիկեցիս Ա.
- Թուղթ Պօղոսի Առաքելոյն առ Թեսաղոնիկեցիս Բ.
- Թուղթ Պօղոսի Առաքելոյն առ Տիմոթէոս Ա.
- Թուղթ Պօղոսի Առաքելոյն առ Տիմոթէոս Բ.
- Թուղթ Պօղոսի Առաքելոյն առ Տիտոս
- Թուղթ Պօղոսի Առաքելոյն առ Փիլիմոս
- Թուղթ Պօղոսի Առաքելոյն առ Եբրայեցիս
- Թուղթ Յակոբու Ընդհանրական
- Թուղթ Պետրոսի Ընդհանրական Ա.
- Թուղթ Պետրոսի Ընդհանրական Բ.
- Թուղթ Յովհաննու Ընդհանրական Ա.
- Թուղթ Յովհաննու Ընդհանրական Բ.
- Թուղթ Յովհաննու Ընդհանրական Գ.
- Թուղթ Յուդայի Ընդհանրական
- Յայտնութիւն Յովհաննու

Նոր Կտակարանի մատեանները դասաւորուած են հինգ մասերու մէջ.—

ա) Աւետարաններ.— Առաջին չորս գիրքերը կը կոչուին աւետարաններ, որոնք կը պարունակեն Քրիստոսի կեանքին դէպքերն ու խօսքերը՝ իր ծնունդէն մինչեւ փառաւոր յարութիւնն ու համբարձումը:

Մատթէոս աւետարանիչ տասներկու առաքեալներէն մին ըլլալով ականատես եւ ունկնդիր վկայ մը եղած է Յիսուսի կեանքին: Փրկչին ծննդեան, մոգերու գալուստին, Եզրիպտոս փախուստին եւ այլ դէպքերու մասին ալ ստուգումներ կատարած է Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածինէն եւ այլ ականատեսներու վկայութիւններէն եւ զրի առած է իր աւետարանը:

Մարկոս աւետարանիչ աշակերտ եղած է Պետրոս առաքեալին եւ մեծ նպաստ բերած է առաքելական քարոզութեանց որպէս թարգման: Նախապէս աւետարանչական ճամբորդութիւններ ալ ըրած է Պօղոս առաքեալի եւ Բառնաբասի հետ: Հետագային գացած է Եզրիպտոս: Եղած է

Աղեքսանդրիոյ Եկեղեցիին հիմնադիրը եւ հոն ալ նահատակուած է: Մարկոս իր աւետարանը գրելու համար իր ականատեսի վկայութիւններէն զատ առաւել չափով օգտուած է Պետրոս առաքեալի քարոզներէն եւ վկայութիւններէն:

Ղուկաս աւետարանիչ բժիշկ մըն էր եւ մտերիմ ընկեր Պողոս առաքեալին: Ղուկաս իր աւետարանը գրելու համար հետազոտութիւններ ըրած եւ ստուգումներ կատարած է Յիսուս կեանքին ականատես անձերէն եւ զանոնք ի մի հաւաքելով դասաւորած է: Իր գրած աւետարանը զրկած է Թէոփիլոսին, որուն տրուած պատուական տիտղոսը ենթադրել կու տայ թէ պետական բարձր դիրքի տէր անձնաւորութիւն մըն էր:

Յովհաննէս աւետարանիչ տասներկու առաքեալներէն էր եւ շատ սիրելի Յիսուսին: Ինք միշտ Յիսուսի հետն ըլլալով ականատես եղած է Յիսուսի կեանքի բոլոր դէպքերուն: Իր աւետարանին մէջ աւելի տեղ տուած է Փրկչին խօսքերուն եւ քարոզներուն:

բ) Գործք Առաքելոց.— Նոր Կտակարանի այս գիրքն ալ գրուած է Ղուկաս աւետարանիչին կողմէ, զարձեալ ուղղուած Թէոփիլոսին: «Գործք Առաքելոց»ը կը պատմէ Յիսուսի համբարձումը, Սուրբ Հոգւոյն գալուստը, առաքեալներուն գործունէութիւնն ու քարոզութիւնը եւ Քրիստոսի եկեղեցւոյն սկզբնաւորութիւնն ու ծաղկումը: Իր այս գիրքին մէջ Ղուկաս կը պատմէ Պողոս առաքեալին դարձը, կատարած առաքելական ճամբորդութիւններն ու կրած հալածանքները: Ղուկաս աւետարանիչ մասնակցած է Պողոս առաքեալի ճամբորդութեանց եւ աջակցած անոր:

գ) Պողոս Առաքեալին թուղթերը.— Պողոս առաքեալ գրած է 14 թուղթեր կամ նամակներ՝ ուղղուած այլեւայլ քաղաքներու մէջ իր հիմնած եկեղեցիներուն եւ նաեւ հաւատացեալ անհատներուն: Ան իր թուղթերուն մէջ կը խօսի Քրիստոսի կատարած փրկութեան մասին եւ յաճախ

վկայութիւններ կը բերէ Հին Կտակարանի մարգարէութիւններէն՝ եկեղեցիները հաւատքի մէջ զօրացնելու եւ հաւատացեալները ճշմարտութեան մէջ հաստատելու համար: Յաճախ կը քաջալերէ, կը յորդորէ եւ երբեմն ալ կը յանդիմանէ անոնց սխալ ընթացքը: Պողոս առաքեալի թուղթերը թէեւ ուղղուած են որոշ եկեղեցիներու եւ անհատներու, սակայն բոլոր քրիստոնեաներուն եւս ուղղուած կը սեպուին:

դ) Ընդհանրական Թուղթեր.— Յակոբոս, Պետրոս, Յովհաննէս եւ Յուդա առաքեալներ գրած են իրենց ընդհանրական թուղթերը բոլոր եկեղեցիներուն համար: Ընդհանրական թուղթերու ընթերցումը հաւատացեալները կը հաստատէ հաւատքի մէջ, սիրոյ մէջ կը պահէ, կը մխիթարէ, Քրիստոսով կը յուսադրէ ու վստահութիւն կը ներշնչէ:

ե) Յայտնութիւն Յովհաննու.— Յիսուսի սիրելի աշակերտ Յովհաննէս առաքեալին տեսիլքն է, որու ընթացքին Աստուած յայտնած է իրեն վերջին օրերուն ընդհանրական Եկեղեցիին կրելիք նեղութիւններուն, Յիսուս Քրիստոսի ահաւոր գալստեան, վերջին դատաստանին, սատանայի ու չար մարդոց դատապարտութեան եւ սուրբերու երանութեան մասին: Գիրքը կոչ կ'ուղղէ բոլոր հաւատացեալներուն որ համբերութեամբ սպասեն եւ սրբութեամբ դիմաւորեն Տիրոջ փառաւոր գալուստը:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Նոր Ուխտը ի՞նչ բանի կատարումն ու լրումն է:
- 2) Նոր Կտակարանը կարդալով ի՞նչ կը տեսնենք ու կ'իմանանք:
- 3) Նոր Կտակարանը բանի՞ գիրքեր կը պարունակէ:
- 4) Նոր Կտակարանի գիրքերը բանի՞ մասերու մէջ դասաւորուած են:

5) Յիսուսի կեանքն ու գործունեութիւնը ո՞ր գիրքերուն մէջ գրուած են:

6) Ղուկասի աւետարանը որո՞ւ ուղղուած է:

7) Ո՞վ է հեղինակը «Գործք Առաքելոց» գիրքին:

8) Պօղոս առաքեալ իր թուղթերը որո՞նց ուղղած է:

9) Ընդհանրական թուղթերը որո՞նց ուղղուած են:

10) Ո՞վ է հեղինակը «Յայտնութիւն Յովհաննու» գիրքին:

11) Նոր կտակարանի գիրքերուն անունները շարժով կրնա՞ս տալ:

Դ. Դաս

Հին Ույստի Մարգարէները

(Ա. Մաս)

Աբրահամ նահապետ իր սերունդին համար եղաւ առաջին մարգարէն: Ան Աստուծոյ ճամբուն մէջ քալեց ուղղամտութեամբ եւ արդարութեամբ: Կատարեց Աստուծոյ բոլոր պատուէրները եւ զանոնք փոխանցեց իր զաւակներուն ու պատուիրեց անոնց որ հաւատարմօրէն ծառայեն Անոր:

Աբրահամի որդին Իսահակ իր հօր նման հաւատարիմ եղաւ Աստուծոյ եւ պատուիրեց իր զաւակներուն չշեղիլ Աստուծոյ ճամբէն: Իսահակի որդիներէն Յակոբ եւս հետեւեցաւ իր հօր եւ մեծ հօր օրինակին: Աստուած անոնց հաւատքն ու հաւատարմութիւնը տեսնելով օրհնեց զանոնք, ուխտ բրաւ անոնց հետ: Խոստացաւ բազմացնել անոնց սերունդը, եւ իրեն սեփական ժողովուրդ դարձնել ու հեթանոս ազգերը լուսաւորել անոր միջոցաւ:

Յակոբ եւս իր կարգին պատուիրեց իր զաւակներուն որ զԱստուած պաշտեն, յիշեն անոր ուխտը եւ տէր ըլլան իրենց կոչումին: Աստուած Յակոբ նահապետին տուաւ նաեւ Իսրայէլ անունը եւ անոր բազմացող սերունդն ալ նոյն անունով ճանչցուեցաւ:

Աստուած իր սեփական եւ ընտրեալ ժողովուրդը դաստիարակելու եւ զայն իր կոչման գիտակից դարձնելու համար զրկեց իր մարգարէները եւ անոնց միջոցաւ յայտնուեցաւ եւ տուաւ իր պատգամները:

Մարգարէ կոչուեցան այն անձերը որոնք Աստուծմէ պատգամ ընդունեցին եւ զայն փոխանցեցին ժողովուր-

դին: Աստուած յաճախ անոնց ձեռքով հրաշքներ ալ կը գործէր եւ դայիք օրերու մէջ պատահելիք դէպքերու մասին յայտնութիւններ կ'ընէր:

Մարգարէները կը կոչուէին նաեւ տեսանող, որովհետեւ յաճախ Իսրայէլի ազգին առաջնորդներուն եւ հաւատացեալներուն հարցերը Տիրոջ ներկայացնելով պատգամներ կը ստանային Անկէ ու զանոնք կը փոխանցէին խնդրարկուներուն:

Իսրայէլի ազգին մարգարէները նախանձախնդիր էին Աստուծոյ օրէնքներուն գործադրութեան եւ արդարութեան կիրարկումին համար: Բուն կերպով կը ձաղկէին կուսպաշտութիւնը, անբարոյութիւնը, անօրէնութիւնը եւ միայն ձեւականութեամբ կատարուող կեղծ աստուածպաշտութիւնը: Կը զգուշացնէին ժողովուրդը մոլութիւններէ եւ մեղսալից ընթացքէ, որոնք պատճառ կը դառնային Իսրայէլի ազգին տկարացումին եւ կործանումին: Անոնք յաճախ կը յանդիմանէին օրուան առաջնորդ իշխաններն ու քահանայական դասը եւ նոյնիսկ չէին խնայեր թագաւորներուն՝ եթէ երբեք Աստուծոյ օրէնքներուն եւ կանոններուն հակառակ շարժած ըլլային անոնք: Կը յորդորէին բոլորը որ հաւատարմօրէն ծառային ամենակարող Եհովա Աստուծոյն եւ վստահին Անոր, որպէսզի չմատնուին իրենց թշնամիներուն ձեռքը:

Մարգարէները ջերմեռանդ աղօթողներ էին եւ կը բարեխօսէին Աստուծոյ ու կ'աղերսէին իրենց ազգին բարօրութեան եւ հոգեւոր վերազարթումին համար:

Մարգարէները ունէին իրենց հետեւող աշակերտներ, որոնք կը կոչուէին Մարգարէից որդիներ: Անոնք յաճախ երգերով ու նուագարաններով զԱստուած կը փառաբանէին եւ երբեմն ալ Սուրբ Հոգիէն ներշնչուած Աստուծոյ պատգամները կու տային ժողովուրդին: Սամուէլ մարգարէի դատաւորութեան ատեն եւ անկէ ետք թագաւորաց շրջանին որոշ թիւ մը կը կազմէին մարգարէից որդիները:

Մարգարէները եղան Իսրայէլի ազգին հոգեւոր դաստիարակները եւ զայն սնուցին բարոյական վեհ սկզբունքներով: Յոյց սուրին թէ Իսրայէլի ապաւէնը Աստուած է եւ առանց անոր առաջնորդութեան ազգը կրնայ կործանիլ ու չվերականգնիլ: Յիշեցուցին թէ Աստուծոյ փրկութեան եւ օրհնութեան արժանանալու համար չէր բաւեր անոր սեփական ու ընտրեալ ժողովուրդը կոչուիլը. այլ՝ անհրաժեշտ էր հոգիով եւ ճշմարտութեամբ զԱյն պաշտել՝ կատարելով անոր պատուիրանները:

Իսրայելացիներ Քանանու երկրին մէջ հաստատուելէ ետք յաճախ մոռցան Աստուծոյ մեծամեծ գործերն ու իրենց կոչումը եւ հակամէտ եղան կուռքեր պաշտելու եւ գարշելի մեղքեր գործելու: Աստուած միշտ պատժեց զիրենք եւ իր մարգարէներուն բերնով յանդիմանեց եւ զգաստութեան հրաւիրեց:

Թագաւորներ եղան, որոնք մարգարէներուն պատգամներուն հետեւելով բարեկարգութիւններու ձեռնարկեցին եւ ժողովուրդը Աստուծոյ առաջնորդեցին: Սակայն դոնուեցան նաեւ թագաւորներ, իշխաններ եւ ժողովուրդէն զանդուածներ որոնք Աստուծոյ խօսքին դիմաց իրենց ականջը դոցելով հալածեցին Տիրոջ ծառաները, անոնցմէ ոմանք ծեծեցին խոչտանգեցին, եւ մի քանիներն ալ սպաննեցին: Սակայն չկրցան լռեցնել անոնց ձայնը որ Աստուծոյ ձայնն էր:

Աստուծոյ սուրբ մարգարէներուն հակառակ, հրապարակ եկած են նաեւ կեղծ մարգարէներ, որոնք իրենց սուտ գուշակութիւններով խաբած եւ մոլորեցուցած են ժողովուրդը, իշխաններն ու թագաւորները:

Իսրայէլի ազգին փրկութեան եւ կազմաւորման համար Աստուած իրեն մարգարէ ընտրեց Մովսէսը: Անոր հետ դէմ առ դէմ խօսեցաւ եւ պատգամներ տուաւ. անոր ձեռքով հրաշքներ գործեց ու Իսրայէլի ժողովուրդը ազատեց Եգիպտոսի զերութենէն:

Մովսէս մարգարէն Աստուծոյ պատուէրները գործադրեց. եղաւ մեծ առաջնորդ ու օրէնսդիր Իսրայէլի ազգին: Ժողովուրդին բացատրեց Աստուծոյ ուխտն ու ծրագիրը: Տիրոջ պատուիրանները հաղորդեց եւ պատուիրեց որ զգուշութեամբ պահեն զանոնք, որպէսզի կարենան արժեցնել իրենց ընտրեալ ազգ ըլլալու երկնային կոչումը:

Մովսէս մարգարէացաւ նաեւ Աստուծոյ Միածին Որդւոյն մարդեղութեան եւ փրկագործութեան մասին եւ ըսաւ. «Քու Տէր Աստուածդ Քու հորայրմերուդ մէջէն ինձի պէս մարգարէ մը պիտի հանէ քեզի. Անոր մտիկ ըրէ՛ք» (Բ. ՕՐԻՆ. ԺԸ. 15):

Հետագային Մովսէսի նման այլ մարգարէներն ալ Սուրբ Հոգիէն ներշնչուելով մարգարէացան թէ Աստուած իր Միածին Որդին պիտի ղրկէր աշխարհ եւ Ան պիտի զոհուէր ու իր արիւնը թափելով քառութիւն պիտի ընէր մարդոց մեղքերուն:

Աստուածաշունչի զանազան զիրքերուն մէջ գրուած են մարգարէներու խօսքերն ու գործերը: Այդ զիրքերէն ոմանք գրուած են պատգամաբեր մարգարէներուն իսկ ձեռքով: Անոնք Աստուծոյ հրամանով զրի առած են իրենց տեսիլքներն ու պատգամները եւ զանոնք կտակ թողած են Իսրայէլի ազգին Հետագայ սերունդներուն ու առաքեալներու քարոզութեամբ հեթանոսութենէ Քրիստոնեայ դարձող ժողովուրդներուն:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Աստուած ինչո՞ւ համար օրհնեց Արքայազանն ու անոր սերունդը եւ ի՞նչ խոստացաւ:
- 2) Ո՞ր նահապետը Իսրայէլ կոչուեցաւ:
- 3) Աստուած ի՞ր պատգամները որո՞նց միջոցաւ կը հաղորդէր Իսրայէլի ազգին:

- 4) Մարգարէներուն ուրիշ ի՞նչ անուն կը տրուէր:
- 5) Որո՞նք էին մարգարէից որդիները:
- 6) Մարգարէները ի՞նչ բանի նախանձախնդիր էին:
- 7) Իսրայէլի ազգը յանախ ի՞նչ բանի կը միտէր:
- 8) Մարգարէները ժողովուրդին կոպաշտութիւնը եւ գարշելի մեղքերը տեսնելով ի՞նչ կ'ընէին:
- 9) Մարգարէները ի՞նչ եղան Իսրայէլի ազգիմ համար:
- 10) Ո՞ր մարգարէն եղաւ Իսրայէլի ազգիմ առաջնորդն ու օրէնսդիրը:
- 11) Ի՞նչ էր կոչումը Իսրայէլի ազգիմ:
- 12) Իսրայէլի ժողովուրդը ի՞նչ դիրք բռնած է իր մարգարէներուն հանդէպ:
- 13) Մովսէս մարգարէն Քրիստոսի մարդեղութեան մասին ի՞նչ ըսաւ:
- 14) Ուրիշներ ալ մարգարէացա՞ն Քրիստոսի աշխարհ գալուն մասին:
- 15) Ո՞վ կը ներշնչէր մարգարէները:

**Հին Ուխտի Մարգարեները
(Բ. Մաս)**

Դատաւորաց շրջանին նշանաւոր հանդիսացաւ Սամուելը մարգարէն: Ան ժողովուրդին սիրտը Աստուծոյ դարձուց եւ հիմը դրաւ Իսրայէլի ազգին թագաւորութեան՝ օծելով նախ Սաւուղը եւ ապա Դաւիթը:

Թագաւոր ըլլալով հանդերձ Դաւիթ նաեւ մարգարէ էր: Աստուծոյ Սուրբ Հոգիին ներշնչումով վրեց բազմաթիւ սաղմոսներ, որոնց մէջ մարգարէացաւ Յիսուս Քրիստոսի կատարելիք փրկութեան մասին: Դաւիթ իր գրած սաղմոսներով ու երգերով ձօնացուց Աստուծոյ տաճարին արարողութիւնները:

Նշիա մարգարէն ծառայաւ Իսրայէլի Աքաաթ թագաւորին կռապաշտութեան եւ անիրաւ գործերուն դէմ ու յանդիմանեց Իսրայէլի ազգը՝ կռապաշտութեան հակած ըլլալուն համար: Նշիա Աքաաթն ու ժողովուրդը գիտակցութեան բերելու համար Աստուծմէ խնդրեց որ իր անձրեւը կեցնէր: Եւ Աստուած երկար ժամանակ անձրեւ չղրկեց: Երեք ու կէս տարի ետք Նշիա Կարմեղոս լեռը կանչեց թագաւորը, եւ բազմահազար ժողովուրդին առջեւ ծաղրեց կուռքերն ու չաստուածները, ամօթահար ըրաւ անոնց պաշտօնեաները, աղօթեց եւ խնդրեց Աստուծմէ որ երկինքէն կրակ իջեցնելով այրէր իր գոհը, ընդունէր իր աղօթքը եւ անձրեւ զրկէր երկրին: Աստուած ընդունեց Նշիային աղօթքը, երկինքէն կրակ իջեցնելով այրեց մատուցուած գոհը եւ ապա անձրեւ զրկեց, ու բոլոր բազմութեան յայտնի եղաւ թէ միայն Եհովան է ճշմարիտ Աստուածը եւ կուռքերը փուճ են:

Նշիա մարգարէն իր գործած հրաշքներով, բժշկութեամբ եւ յորդորներով Իսրայէլի ազգին ցոյց տուաւ Աստուծոյ զօրութիւնը, եւ նաեւ սէրն ու զուժք իր ժողովուրդին հանդէպ:

Ամուլս մարգարէն քաջաբար խօսեցաւ եւ մատնանիշ ըրաւ մարդոց մեղքերը եւ անոնց պատճառով գալիք պատիժը, ու նաեւ ցոյց տուաւ զղջումի եւ ապաշխարութեան միջոցաւ Տիրոջ ողորմութեան հեղումը իր ժողովուրդին վրայ:

Նսայի մարգարէն իր յանդիմանութիւններով եւ յորդորներով ժողովուրդը զգուշացուց մեծ վտանգներէ: Եգեկիա թագաւորին խնդրանքին միացուց իր-աղօթքը առ Աստուած՝ Երուսաղէմի պաշտպանութեան եւ ապահովութեան համար: Աստուած լսեց իրենց աղաչանքը եւ իր հրեշտակը զրկելով զարկաւ Ասորեստանի չար թագաւոր Սենեքերիմի հազարաւոր զօրքերը ու փրկեց Երուսաղէմը: Նսայի մարգարէացաւ նաեւ Քրիստոսի մարդեղութեան եւ փրկագործութեան մասին:

Երեմիա մարգարէն Սեղեկիա թագաւորն ու իշխանները զգուշացուց գալիք վտանգներէն եւ յորդորեց զիրենք որ իրենց չար գործերը մէկդի ձգեն ու Աստուծոյ դառնան: Մակայն անոնք չանսացին իրեն եւ կինք հալածեցին, բանտարկեցին ու բռնադատեցին որ Տիրոջ պատգամը չհաղորդէր իրենց: Թագաւորին եւ ժողովուրդին անօրէնութեան պատճառով Աստուած պատժեց զիրենք նարուզողոնսոր թագաւորին ձեռքով եւ կործանել տուաւ Երուսաղէմն ու անոր հոյակապ տաճարը, իսկ մնացորդ ժողովուրդը վերի քշուեցաւ դէպի Բաբելոն:

Երեմիա եղաւ իր ազգին դժբախտութեան վրայ լացող, ժողովուրդին կարեկցող, ուղղութիւն տուող եւ անոր վերականգնումին համար Աստուծոյ աղօթող ու բարեխօսող մարգարէ մը:

Եգեկիել մարգարէն իր պատգամները տուաւ Բաբելոն:

լոնի գերութեան ատեն: Իսրայէլի ազգին ցոյց տուաւ իր թշուառութեան պատճառները եւ ապա յուսադրեց թէ Աստուած պիտի վերականգնէր զիրենք եթէ անդրադառնալու ըլլային իրենց մեղքերուն եւ դարձի գային: Եզեկիէլ մարգարէացաւ նաեւ Քրիստոսի եւ անոր Եկեղեցւոյն կազմութեան մասին:

Իսրայելի գերութեան շրջանին Աստուած ներշնչեց Դանիէլ մարգարէն: Ան իր տեսիլքներով եւ հաղորդած պատգամներով հրաւիրեց նաբուգոզոնոսոր թագաւորը որ ճանչնայ երկինքն ու երկիրը ստեղծող Եհովա Աստուածը:

Դանիէլ իր ժողովուրդին մեղքերը խոստովանեցաւ Աստուծոյ առջեւ եւ անոր ողորմութիւնը հայցեց: Իսրայէլի ազգը յուսադրեց, մխիթարեց եւ մարգարէացաւ ժողովուրդին Երուսաղէմ վերադարձին, վերականգնումին, Քրիստոսի թագաւորութեան հաստատումին եւ ապագային պատահելիք դէպքերու մասին:

Նշանաւոր մարգարէներ հանդիսացան նաեւ Նաբան, Ովսէէ, Յովէլ, Արդիաս, Յովնան, Միֆիա, Նաոււմ, Ամբակում, Սոփոնիա, Անգէ, Զաւարիա եւ Մադաֆիա, որոնք քաջաբար խօսեցան Աստուծոյ խօսքը ու յայտնեցին անոր կատարելիք մեծամեծ գործերը Իսրայէլի ազգին եւ համայն աշխարհի ժողովուրդներու փրկութեան համար:

Հին Ուխտի վերջին եւ ամենամեծ մարգարէն եղաւ Յովհաննէս Եկրտիչ, որուն համար Մադաֆիա մարգարէն չորս հարիւր տարի առաջ գուշակած էր ըսելով. «Ահա ես իմ դեսպանս կը դրկեմ, ու իմ առջեւ անաբայ պիտի պատրաստէ» (ՄԱՂ. Գ. 1):

Յովհաննէս Եկրտիչի քարոզութեամբ եւ կատարած մկրտութեամբ իր լրումին հասաւ Հին Ուխտի մարգարէներուն պատգամախօսութիւնը եւ ապա յայտնուեցաւ աշխարհի Փրկիչը Յիսուս Քրիստոս՝ փրկելու մեղաւոր մարդկութիւնը մեղքէն:

Յովհաննէս Եկրտիչ Իսրայէլի ազգը ապաշխարու-

թեան հրաւիրելով եւ իրեն եկողները մկրտելով մարդոց սիրտերը Աստուծոյ դարձուց ու գետին պատրաստեց Քրիստոսի առաքելութեան համար:

Ան քարոզեց փրկչին մօտալուստ գալստեան եւ անոր հաստատելիք նոր մկրտութեան մասին: Ու երբ Յիսուս իրմէ մկրտուեցաւ Յորդանան գետին մէջ, իր աչքերուն առջեւ բացուած տեսաւ երկինքը ու Աստուծոյ Սուրբ Հոգւոյն աղանակերպ էջքը Անոր վրան. նաեւ ականջաւոր եղաւ Հօր Աստուծոյ վկայութեան ձայնին որ կ'ըսէր. «Ատիկա է իմ սիրելի Որդիս, որու հաւնք եմ»: Այնուհետեւ Յովհաննէս Եկրտիչ բարձրադաղակ յայտարարեց թէ մարգարէական զիրքերուն մէջ խոստացուած Մեսիան Յիսուսն է, եւ ինք տեսած է Սուրբ Հոգիին էջքը Անոր վրայ զԱյն մկրտած ատեն: Միեւնոյն ատեն Յովհաննէս թելադրեց իր աշակերտներուն եւ ժողովուրդին՝ որ հետեւին Յիսուս Քրիստոսի:

Եսայի մարգարէն եօթը հարիւր տարի առաջ Սուրբ Հոգւոյն ներշնչումով գուշակած էր Քրիստոսի կուսածին ըլլալուն մասին եւ գրած՝ «Ահա կոյսը պիտի յղանայ, ու որդի պիտի ծնի եւ անոր անունը էմանուէլ պիտի կոչէ» (ԵՍԱՅԻ Է. 14):

Նաեւ Քրիստոսի Աստուծոյ Որդին ըլլալուն մասին Եսայի մարգարէն ըսած է. «Մեզի մանուկ մը ծնաւ, մեզի որդի մը տրուեցաւ, եւ իշխանութիւնը անոր ուսիմ վրայ պիտի ըլլայ, ու անոր անունը պիտի կոչուի՝ Սփանջելի, Խորհրդակից, Հօր Աստուած, Յաւիտեականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան» (ԵՍԱՅԻ Թ. 6):

Միջիա մարգարէն եօթը հարիւր տարի առաջ Քրիստոսի ծննդավայրին մասին գրած է. «Եւ դո՛ւն, ո՛վ Բեթղեհէմ Եփրաթա, թեւ Յուդայի հազարաւորներուն մէջ ըլլալու պատիկ ես, քայց քեզմէ պիտի ելլէ Ան, որ Իսրայէլի վրայ իշխան պիտի ըլլայ, ու անոր ելքը ի հնուց, յաւիտեական օրերէն է» (ՄԻՔ. Ե. 2):

Երուսաղէմէն ներս Յիսուսի յաղթական մուտքին մասին Զաքարիա մարգարէն հինգ հարիւր տարի առաջ գրած է. «Մեծապէս ուրախացիր, ո՛վ Սիոնի դուստրը, ցնծութեամբ աղաղակէ, ո՛վ Երուսաղէմի դուստրը: Ահա քու թագաւորդ քեզի կու գայ: Անիկա արդար ու փրկիչ է, հեզ է, ու իշու վրայ հեծած, եւ իշու ձագի, աւանակի վրայ» (ԶԱԲ. Թ. 9):

Քրիստոսի կրելիք չարչարանքներուն, զսհարեթեան, Հօր Աստուծոյ առջեւ կատարելիք քաւութեան, միջնորդութեան եւ անոր թաղման պարագաներուն մասին Եսայի մարգարէն գրած է՝ «Անիկա մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ, եւ մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ. մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ, եւ անոր վերքերով մեկն բժշկուեցանք: Ամէնքս ոչ-խարնբու պէս մոլորեցանք. ամէն մէկս իր ցամբան դարձաւ, եւ Տէրը մեր ամենուն անօրէնութիւնը անոր վրայ դրաւ: Անիկա անիրաւութիւնը կրեց ու չարչարուեցաւ, բայց իր բերանը չբացաւ մորթուելու տարուող ոչխարի պէս, ու իր խուզողներուն առջեւ մունջ կեցող մաքիի պէս, այնպէս իր բերանը չբացաւ: Նեղութեամբ եւ դատապարտութեամբ վերցաւ. ու անոր ազգատոհմը ո՞վ պիտի պատմէ. քանզի անիկա կենդանիներուն երկրէն կտրուեցաւ, անիկա իմ ժողովուրդիս յանցանքին համար զարնուեցաւ»:

«Եւ անոր գերեզմանը ամբարիշտներուն հետ դրուեցաւ. բայց երբ մեռաւ, հարուստին հետ եղաւ. քանզի անիկա անօրէնութիւն մը չգործեց, ու անոր բերնին մէջ նեկութիւն մը չգտնուեցաւ: Բայց Տէրը հանեցաւ որ զանիկա ծեծելով ցաւերու մատնէ: Անոր անձը մեղքի համար գոհ ըլլալէն ետքը՝ անիկա սերունդ պիտի տեսնէ, իր օրերը պիտի երկնցնէ, ու Տիրոջ կամքը անոր ձեռքով պիտի յաջողի: Իր անձին աշխատութեան պատուը տեսնելով պիտի կշտանայ: Իմ արդար ծառաս իր գիտութեամբ շատերը պիտի արդարացնէ, քանզի ամոնց անօրէնութիւն-

ները ինք պիտի կրէ: Անոր համար մեծերուն հետ բաժին պիտի տամ անոր, եւ հօրներուն հետ աւարէն բաժին պիտի առնէ. քանզի իր անձը մահուան մատնեց ու յանցաւորներուն հետ սեպուեցաւ եւ շատերուն մեղքը վերցուց, ու յանցաւորներուն համար միջնորդութիւն ըրաւ» (ԵՍԱՅԻ ԾԳ. 5-12):

Քրիստոսի յարութեան մասին Դաւիթ մարգարէն հազար տարի առաջ գրած է. «Իմ անձս գերեզմանին մէջ պիտի չբողուս, ու քու սուրբիդ այ ապականութիւն տեսնել պիտի չտաս» (ՍԱՂՄ. ԺԵ. (ԺԶ.) 10):

Հին Ուխտի մարգարէները լիովի կատարեցին իրենց պարտականութիւնը եւ Աստուծոյ խօսքն ու պատգամները փոխանցեցին Իսրայէլի ազգին, որպէսզի ան հոգեւորապէս պատրաստուէր Աստուծոյ Որդին՝ Յիսուս Քրիստոսը դիմաւորելու, Անով լուսաւորուելու եւ իր կարգին ստացած լոյսը ճառագայթելու աշխարհի հեթանոս ազգերուն:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ո՞վ էր Սամուէլ մարգարէն. ի՞նչ ըրաւ:
- 2) Դաւիթ թագաւոր ի՞նչ բաներ գրեց:
- 3) Ո՞ր մարգարէին աղօթքով երկինքէն կրակ իջաւ մատուցուած գոհը այրելու համար:
- 4) Աստուած ո՞ր թագաւորին ու մարգարէին աղօթքը լսելով Երուսաղէմը ազատեց Ասորեստանի Սենեֆերիմ թագաւորի ձեռքէն:
- 5) Սեղեկիա թագաւորն ու իշխանները ի՞նչ դիրք բռնեցին Երեմիա մարգարէին խօսքերուն հանդէպ:
- 6) Ո՞ր թագաւորը կործանեց Երուսաղէմն ու անոր տաճարը:
- 7) Երուսաղէմի բնակիչները ո՞ւր գերի տարուեցան:
- 8) Ո՞ր մարգարէն գուշակած էր թէ Քրիստոս Բեթղեհէմի մէջ պիտի ծնէր:

9) Ո՞ր մարգարէն գուշակած էր թէ Քրիստոս իշու աւանակի վրայ նստած Երուսաղէմ պիտի մտնէր:

10) Ո՞ր մարգարէն գուշակած էր Քրիստոսի չար-չարանքներուն, գոհաբերութեան եւ միջնորդութեան մասին:

11) Ո՞վ էր Դանիէլ:

12) Ո՞վ էր Եզեկիէլ:

13) Ո՞վ եղաւ Հիւսիտի շրջանի վերջին մարգարէն եւ ի՞նչ ըրաւ:

Զ. Դաս

Քրիստոսի Առաքելութիւնը

Աւետարանի քարոզութենէն առաջ Հրեաներէն գաստ աշխարհի բոլոր ազգերը հեթանոս ըլլալով հոգեւորապէս խաւարի մէջ էին ու բարոյապէս անկեալ վիճակ ունէին: Կը կարծէին թէ տիեզերքի մէջ դոյութիւն ունին մեծ ու պզտիկ աստուած-աստուածուհիներ, եւ երեւակայութեամբ շինած էին անոնց պատկերներն ու արձանները: Կը պաշտէին զանոնք ու անոնցմէ զօրութիւն եւ օգնութիւն կը խնդրէին իրենց զանազան փափաքներուն համար:

Անհաւասար էր մարդոց ընկերային կեանքը: Հօր-ները կը պաշտուէին, իսկ տկարները կ'անգոսնուէին: Ազատութիւնը զօրաւորներու մենաշնորհն էր: Անոնք ի մտի ունէին միայն իրենց փառքը, հաճոյքը, ու կը կարծէին զանոնք գտնել բռնութեան, յափշտակութեան եւ շուայտութեան մէջ:

Հեթանոսները Աստուծոյ խօսքէն ու օրէնքներէն զուրկ ըլլալով զանազան մոլութիւններու եւ մեղքերու մէջ կ'ապրէին: Անոնք տարտամ ու ենթադրական գաղափար մը միայն ունէին հոգիի անմահութեան մասին եւ անմխիթար կը մնային իրենց սիրելիներու մահուան ատեն, ու յաճախ վէրքեր կը բանային իրենց մարմնին վրայ ու մազերնին փետտելով անվերջ կ'ողբային:

Քրիստոսէ առաջ ապրած էին կարգ մը փիլիսոփաներ, որոնք ջանացեր էին կեանքը եւ անոր նպատակը վերլուծել: Իմաստուն ճանչցուած կարգ մը մարդիկ ալ ջանացեր էին իրենց ապրած միջավայրերուն հանրային կեանքը փոփոխութեան ենթարկել իրենց տեսութիւններով. սա-

կայն անոնցմէ ոեւէ մէկը չէր կրցած վերանորոգել մարդ արարածը եւ հեռու պահել զայն իր մոլութիւններէն ու խաղաղեցնել անոր խռոված հոգին:

Աշխարհ պէտք ունէր ամենակարող փրկիչի մը որ լուսաւորէր մարդ արարածին հոգին, վերականգնէր զայն, փրկէր մեղքի գերութենէն ու մխիթարէր յաւիտենական կեանքի յոյսով:

Հեթանոս ազգերու կողքին ապրող Իսրայէլի ազգը՝ հրեայ ժողովուրդը միակն էր որ իր ձեռքին մէջ ունէր Աստուծոյ պատգամներն ու պատուիրանները, որոնց վրայ դեռ եւս պիտի աւելնային աստուածային սէրէն բղխեալ նոր պատուիրաններ Քրիստոսի բերնով, որ պիտի յայտնուէր աշխարհին, մարգարէներուն գուշակութեանց համաձայն:

Հրեայ ժողովուրդը Բաբելոնի գերութենէն վերադառնալէ ետք այլևս կոապաշտութեան չէր հակած եւ իր հաւատքին համար ճակատամարտներ ալ մղած էր եւ անկախութիւն ձեռք ձգած:

Քրիստոսի ծնունդէն կէս դար առաջ հրեաներ ենթարկուած էին Հռոմի գերիշխանութեան, սակայն իրենց ներքին կրօնական եւ ընկերային կեանքը կը վարէին Հին Կտակարանի օրէնքներով: Աշխարհի զանազան շրջաններուն մէջ ցրուած հրեայ զաղութներ իրենց հաւատքով, աւանդութիւններով եւ սովորութիւններով կը զատորոշուէին այլ ժողովուրդներէն ու ազգերէն: Ամէն տեղ ունէին իրենց ժողովարանները ուր կը յաճախէին Շաբաթ օրերուն եւ կ'ունենդրէին Հին Կտակարանի Օրինաց Գիրքերէն, Մարգարէական պատգամներէն ու Սողոմոններէն հատուածներ:

Հրեայ ազգը մարգարէական գիրքերու հետեւողութեամբ կը սպասէր Մեսիայի յայտնութեան: Սակայն ժողովուրդին մեծամասնութիւնը ազգայնամոլ ըլլալով կ'ակնկալէր երկրաւոր իմաստով Մեսիա մը, որ զին-

ուորական ոյժ մէջտեղ բերէր եւ հրեայ ժողովուրդը ազատագրէր հռովմէական իշխանութեան լուծէն: ապա հիմնէր աշխարհակալ թագաւորութիւն մը եւ հեթանոս ազգերը ենթարկէր հրեաներու տիրապետութեան: Այդ հոսանքին կողքին կային նաեւ սրբութեան կեանքի նախանձախնդիր մարդիկ, որոնք կը սպասէին հոգիներու քարեկարգիչ Մեսիայի մը գալստեան, որ երկնային իմաստութեամբ լուսաւորէր զիրենք, հոգեւոր արթնութիւն մը յառաջացնէր ժողովուրդին մէջ եւ Իսրայէլի ազգը աստուածպաշտութեամբ պանծացնէր հեթանոս ազգերուն առջեւ:

Մեսիայի գալուստէն առաջ Աստուած Իսրայէլի ազգին նախ դրկեց անոր կարապետ (յառաջընթաց) մարգարէն՝ Յովհաննէս Մկրտիչը, որուն քարոզը ազդեց շատերուն վրայ եւ անոնք իրենց մեղքերը խոստովանեցան, ապաշխարեցին, մկրտուեցան ու հոգիով պատրաստուեցան դիմաւորելու Մեսիան, որ երկինքէն երկիր իջած էր, սակայն տակաւին չէր յայտնուած Իսրայէլի ազգին:

Յովհաննէս Մկրտիչի քարոզութենէն երեսուն տարի առաջ Քրիստոս ծնաւ Բեթղեհէմի մէջ շատ համեստ պայմաններու տակ՝ անբան կենդանիներու մսուրի մը մէջ: Հրեշտակներ անոր ծննդեան աւետիսը տուին հովիւներուն: Հեռաւոր Արեւելքէն մոգեր եկան ու երկրպագեցին Անոր: Իսկ Սիմէոն ծերունի քահանան զԱյն Աստուծոյ ընծայելու ատեն ներշնչուեցաւ Սուրբ Հոգիէն եւ յայտարարեց Անոր աշխարհի լոյսն ու Փրկիչն ըլլալը: Սակայն հայր Յովսէփ Եգիպտոսէ վերադարձին Յիսուս մանկան ապահովութեան համար հաստատուեցաւ Գալիլիոյ Նազարէթ քաղաքը եւ ջանաց մարդոց ուշադրութենէն հեռու պահել մանուկ Մեսիային ինքնութիւնը:

Յիսուս իր մանկութիւնը, պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը անցուց Նազարէթի մէջ եւ իր քաղաքացիներէն ճանչցուեցաւ որպէս որդի հիւսն Յովսէփի:

Յովհաննէս Մկրտիչ թէեւ կը քարոզէր Մեսիային մօտալուտ յայտնութիւնը եւ կը վկայէր թէ ինք անոր կօշիկներուն կապը քակելու արժանի չէր, սակայն ինք ալ չէր գիտեր անոր ինքնութիւնը մինչեւ այն պահը՝ երբ տեսաւ՝ երկինքը բացուած՝ Աստուծոյ Սուրբ Հոգիին իջնելը մկրտուող նազովրեցի Յիսուսին վրայ:

Յովհաննէս Մկրտիչ հրեայ ղեկավարներու կողմէ իրեն ներկայացող քահանաներուն եւ ղեւտացիներուն յայտնեց Մեսիային եկած ըլլալը ու նաեւ իր քով հաւաքուած ժողովուրդին մատնանիչ ըրաւ Յիսուսը եւ աղաղակեց ըսելով. «Ասիկա է Աստուծոյ Որդին»: «Ահա Աստուծոյ Գառը որ աշխարհի մեղքը կը վերցնէ»: (ՅՈՎՀ. Ա. 22)

Յովհաննէս Մկրտիչի վկայութենէն ետք անոր աշակերտներէն երկու հոգի Յիսուսի հետեւեցան եւ Անոր աշակերտ դարձան: Այդ երկուքէն մէկը՝ Անդրէաս իր եղբայրը՝ Սիմոնը առաջնորդեց Յիսուսի: Յաջորդող օրերուն Յիսուս ուրիշներ ալ կանչեց եւ հետագային իր աշակերտներուն թիւը բարձրացուց տասներկուքի: Անոնցմէ զատ ընտրեց եօթանասուն երկու աշակերտներ ալ: Պտտեցաւ քաղաքներ եւ գիւղեր եւ քարոզեց երկինքի արքայութեան աւետարանը (բարի լուրը):

«Լրացած է ժամանակը եւ հասած է Աստուծոյ արքայութիւնը. ապաշխարեցէ՛ք ու հաւատացէ՛ք աւետարանին» պատգամով ներկայացաւ Յիսուս հանրութեան (ՄՐԿ. Ա. 15): Ան իր քարոզներուն մէջ շեշտը դրաւ հոգիի անմահութեան եւ անոր փրկութեան վրայ ու հրաւէր ուղղեց բոլորին որ երկինքի արքայութիւնը ժառանգելու հոտելէ ըլլան:

«Ես եկայ որ կեանք ունեցնան» (ՅՈՎՀ. Ժ. 10), ըսաւ Յիսուս ու յայտնեց իր առաքելութեան նպատակը: Իր ուսուցումներով դաստիարակեց աշակերտները եւ իր քարոզներով ու առականերով Աստուծոյ խօսքը ցանեց գինք

ունկնդրող բազմութիւններուն մէջ: Յայտնեց անոնց մարդ արարածին հանդէպ Աստուծոյ տաճած անհուն սէրն ու հոգածութիւնը, մեղաւորներու փրկութեան համար անոր ծրագիրը եւ իր աշխարհ գալուսն նպատակը:

Յիսուսի հրապարակային արտայայտութիւններուն մէջ ուշադրաւ է լերան քարոզը, որու ընթացքին տուաւ սիրոյ, ներողամտութեան, անկեղծութեան եւ բարոյական նկարագրի կերտումին վերաբերեալ նոր պատուէրներ:

Աստուծոյ օրէնքներն ու պատուիրանները մարդոց սրտին մէջ գեանդելու համար Յիսուս ըսաւ. «Ամէն ինչ որ կ'ուզէ՛ք որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց այնպէս ըրէ՛ք» (ՄԱՏԹ. 5. 12):

Մարդոց ընկերային յարաբերութիւնը սիրոյ բարձրագոյն մակարդակին հասցնելու համար տուաւ սիրոյ նոր պատուիրան մը, ըսելով՝ «Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէ՛ք ձեզ ատողներուն, աղօթք ըրէ՛ք անոնց համար որոնք կը չարչարեն ու կը հալածեն ձեզ, որպէսզի ըլլա՛ք որդիներ ձեր Հօր որ երկինքն է, վասնզի իր արեգակը կը ծագէ չարերուն եւ բարիներուն վրայ, եւ անձրեւ կը դրկէ արդարներուն ու մեղաւորներուն հաւասարապէս» (ՄԱՏԹ. 5. 44-45):

Մարդ արարածը իր մեղքերու ծանրութենէն ազատելու եւ իր հովանաւորութեան տակ անոր սրտի խաղաղութիւն պարգեւելու համար Յիսուս ըսաւ. «Եկէ՛ք ինձի, բոլոր յոգնածներ ու բեռնաւորուածներ, եւ ես ձեզի հանգիստ պիտի շնորհեմ: Իմ լուծս ձեր վրայ առէ՛ք եւ ստրկեցէ՛ք ինձմէ, վասնզի ես հեզ եմ ու սիրտով խոնարհ. եւ ձեր հոգիներուն խաղաղութիւն պիտի գտնէ՛ք. վասնզի իմ լուծս քաղցր է եւ բոսս՝ թեթեւ» (ՄԱՏԹ. ԺԱ. 28-30):

Յիսուս իր քարոզութեանց առընթեր կարեկից դարձաւ թշուառներուն: Բժշկեց իրեն դիմող հիւանդները. անդամալոյժները ոտքի հանեց, կոյրերուն աչքերը բա-

ցաւ. համբերու. ւն խօսիչ տուաւ եւ դիւահարները ազատեց սատանայի կապանքներէն:

Ժողովուրդէն շատեր Յիսուսի խօսքերը լսելով եւ անոր հրաշքները տեսնելով հաւատացին թէ Ան Իսրայէլի ազգին սպասած Մեսիան էր. սակայն քահանայապետներն ու ազգին ղեկավար իշխանները չհանդուրժեցին Յիսուսի բերած լուսատու պատգամներուն, որոնք ի յայտ կը բերէին իրենց չար արարքներն ու մեղքերը. ուստի որոշեցին զԱյն սպաննել եւ մարել երկնառաք Լոյսը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1) Աւետարանի փարոզութեանն առաջ հեթանոս ժողովուրդներ ի՞նչ կը պաշտէին:

2) Հեթանոս ազգերու ընկերային կեանքը ինչպէ՞ս էր:

3) Ո՞ր ազգը միայն կը պաշտէր Տիեզերքի Արարիչ Աստուածը:

4) Հրեայ ժողովուրդին մեծամասնութիւնը ինչպիսի՞ Մեսիա մը կը փափաքէր ունենալ:

5) Ի՞նչ կ'ակնկալէին բարեպաշտ հրեայ հաւատացեալները գալիք Մեսիայէն:

6) Աստուած Քրիստոսէ առաջ ո՞վ դրկեց Իսրայէլի ազգին փարոզելու համար:

7) Յովհաննէս Մկրտիչ ժողովուրդը ի՞նչ բանի հրաւիրեց:

8) Յիսուս ո՞ր քաղաքին մէջ մեծցաւ եւ մարդիկ որպէս ի՞նչ կը նանչնային զԱյն:

9) Յովհաննէս Մկրտիչ ինչպէ՞ս ստուգեց Յիսուսի Մեսիա ըլլալը:

10) Յովհաննէս Մկրտիչ ժողովուրդին ի՞նչ ըսաւ Յիսուսի մասին:

11) Առաջին անգամ որո՞նք հետեւեցան Յիսուսի:

12) Յիսուս ինչո՞ւ համար աշխարհ եկած էր:

13) Յիսուս ի՞նչ բնաբանով ներկայացաւ հանրութեան փարոզելու:

14) Յիսուս իր տասներկու առաքեալներէն զատ քանի՞ աշակերտներ եւս ընտրեց:

15) Հրեայ ազգին ղեկավարները ի՞նչ դիրք բռնեցին Յիսուսի հանդէպ:

Ինը Երանիները

(Մատթ. Ե. 3-12)

«Արդ, կատարեալ եղէ՛ք գու՛գ, ինչպէս որ կատարեալ է ձեր երկնաւոր Հայրը», ըսաւ Յիսուս իր լերան քարոզին մէջ (ՄԱՏԹ. Ե. 48):

Յիսուսի այս խօսքը խտացումն է իր բոլոր պատուէրներուն: Կատարեալ եղէ՛ք կը նշանակէ՝ սուրբ եղէ՛ք:

Մարդ արարածը սրբանալու համար պարտի սիրել իր ամենասուրբ Արարիչը բոլոր սրտով եւ հնազանդիլ Անոր: Աստուծոյ հնազանդելով պարտաւոր է սիրել նաեւ իր նմանները իր անձին պէս եւ անոնց բարօրութեան փափաքիլ, ու հարկ եղած պարագային օգտակար հանդիսանալ:

Սակայն կատարելութեան ու սրբութեան ձգտումը ենթակայէն կը պահանջէ զոհողութիւն եւ համբերութիւն, որովհետեւ շար մարդիկ չեն հանդուրժեր սրբութեան ու արդարութեան տարածումին, որպէսզի անոնց ճառագայթած լոյսին պատճառով երեւան չելլեն իրենց անօրէնութիւնները: Ուստի կը պայքարին սուրբերուն դէմ. կը ծաղրեն, կը հալածեն ու կը ջանան ամէն տեսակ նեղութիւններ տալ անոնց: Հետեւաբար հաւատացեալներուն կեանքը պայքար մըն է ընդդէմ սատանային ու չարին: Սակայն այս պայքարը կը տարբերի աշխարհային մարտնչումներէն: Հաւատացեալը անոնց դէմ պիտի ճակատամարտի Աստուծոյ խօսքով, իր հեղութեամբ ու մաքուր նկարագրով: Յիսուսի օրինակին հետեւելով պիտի ներէ իրեն նեղութիւն տուողներուն ու աղօթէ անոնց դարձին համար, որպէսզի կարենայ բարիով յաղթել չարին ու Աստուծոյ լոյսը ցոլացնել իր շրջապատին:

Յիսուս լերան քարոզին մէջ իր աշակերտներուն եւ հետեւորդներուն տուած ինը երանիներով ցոյց տուաւ կատարելութեան ու սրբութեան ճամբուն հետեւողներուն պաշտօնը, զոհողութիւնը, համբերութիւնն ու ստանալիք վարձքը հանդերձեալ կեանքի մէջ:

ԵՐԱՆԻՆԵՐԸ

- 1) Երանի՛ հոգիով ազատներուն, որովհետեւ անո՛նց է երկնքի արքայութիւնը:
- 2) Երանի՛ սգաւորներուն, որովհետեւ անոնք պիտի մխիթարուին:
- 3) Երանի՛ հեզերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը:
- 4) Երանի՛ անոնց, որոնք արդարութեան կը տենչան ու կը ձգտին, որովհետեւ անոնք գոհացում պիտի գտնեն:
- 5) Երանի՛ ողորմածներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ ողորմութիւն պիտի գտնեն:
- 6) Երանի՛ անոնց, որոնք սրտով մաքուր են, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն:
- 7) Երանի՛ անոնց, որոնք խաղաղութեան հաստատումին համար կ'աշխատին, որովհետեւ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին:
- 8) Երանի՛ անոնց, որոնք կը հալածուին արդարութեան համար, որովհետեւ անոնց է երկնքի արքայութիւնը:
- 9) Երանի՛ ձեզի, երբ մարդիկ նախատեն եւ հալածեն ձեզ, կամ ձեր մասին ամէն տեսակի զրպարտութիւն ընեն իմ հետեւորդներս ըլլալուդ համար: Յնծացէ՛ք եւ ուրախացէ՛ք, որովհետեւ Աստուած առատօրէն պիտի վարձատրէ ձեզ երկնքի մէջ: Յիշեցէ՛ք, որ նոյն ձեւով հալածանքի ենթարկուեցան ձեզմէ առաջ ապրող մարգարէներն ալ:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԻՆՐ ԵՐԱՆԻՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

1) Երանի՛ հոգիով աղփատներուն, որովհետեւ անո՛նց է երկնքի արքայութիւնը. — Հոգիով աղքատ կը կոչուին այն անձերը, որոնք իրենց կեանքը նիւթական հարստութենէն կախեալ չեն սեպեր, այլ կ'ընդունին թէ Աստուծոյ առջեւ աղքատ եւ տնանկ են ու միշտ կը կարօտին անոր ողորմութեան: Ինքզինքնին իմաստունի տեղ չեն դնել, այլ կը փնտռեն Տիրոջ առաջնորդութիւնը ամէն ատեն ու Անոր կ'ապաւինին: Խոնարհ սրտով կը խոստովանին իրենց մեղաւոր մահկանացու ըլլալը, երկիւղածութեամբ կը պահեն Աստուծոյ պատուիրանները, ու յաւիտենական կեանքը ժառանգելու համար կը յուսան Տիրոջ գութին եւ շնորհքին:

2) Երանի՛ սգաւորներուն, որովհետեւ անոնք պիտի մխիթարուին. — Սգաւոր կը կոչուին անոնք որոնք սուգ կը պահեն իրենց սիրելիներու կորուստին համար: Սակայն Յիսուս այստեղ կ'ակնարկէ այն անձերուն, որոնք բոլոր մեղաւորները սիրելի կը համարեն իրենց եւ անոնց անկեալ վիճակին համար կը տրտմին, ցաւ կը քաշեն, կ'ողբան, անոնց կորուստին համար կը սգան, կը ճգնին ու յաճախ ծոմապահութեամբ կ'աղերսեն Աստուծոյ որ անոնց դարձին եւ զղջումին համար առաւել առիթներ շնորհէ:

3) Երանի՛ հեզերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը. — Հեզ կը կոչուին այն անձերը որոնք անկեղծ եւ խոնարհ սրտով քաղցր վերաբերում կ'ունենան ամէն մարդու հանդէպ: Անոնք իրենց գիրենք գերադաս չեն սեպեր ուրիշներէն եւ չեն արհամարհել իրենցմէ ստորադաս անձերը ու կը յարգեն անոնց արժանապատուութիւնը:

4) Երանի՛ անոնց, որոնք արդարութեան կը տենչան ու կը ձգտին, որովհետեւ անոնք գոհացում պիտի

գտնեն. — Արդարութեան համար անօթի եւ ծարաւ կը սեպուին անոնք որոնք միշտ կը ցանկան տեսնել Աստուծոյ օրէնքներուն եւ պատուիրաններուն կատարումը երկրի վրայ: Կը սիրեն ու կը պահեն զանոնք. Աստուծոյ կամքին համաձայն ուղղամտութեամբ կ'ապրին, անաչառ դատողութիւն կ'ընեն բոլորին հանդէպ, եւ արդարութիւնն ու իրաւունքը կը պաշտպանեն ամէն տեղ:

5) Երանի՛ ողորմածներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ ողորմութիւն պիտի գտնեն. — Ողորմածներ կը համարուին այն անձերը, որոնք Աստուծոյ կողմէ իրենց շնորհուած նիւթական թէ բարոյական շնորհներէն բաժին կը հանեն կարօտեալներուն: Անօթիին տրուած հացը, մերկին տրուած հանդերձը, հիւանդին եղած այցելութիւնը, անկեալին երկարած ձեռքը, սգաւորներուն տրուած մխիթարական խօսքերը, գերիներուն շնորհուած ազատութիւնը եւ որեւէ բարի ծառայութիւն ողորմութիւն կը համարուին ու զանոնք կատարողներուն վարձքը շատ պիտի ըլլայ երկինքի մէջ:

6) Երանի՛ անոնց, որոնք սրտով մաքուր են, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն. — Այն անձերը որոնք զԱստուած կը սիրեն բոլոր սրտով, կը պահեն անոր պատուիրանները եւ անկեղծ սէր կը ցուցաբերեն իրենց նմաններուն՝ թէ՛ խօսքով եւ թէ՛ զործով, կը նկատուին մաքուր սիրտ ունեցողներ Աստուծոյ առջեւ:

7) Երանի՛ անոնց, որոնք խաղաղութեան հաստատումին համար կ'աշխատին. որովհետեւ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին. — «Խաղաղարար» են այն մարդիկը որոնք սխալալ չեն ըլլար եւ կ'աշխատին բարիով յաղթել չարին: Միեւնոյն ատեն մեղմ խօսքերով կը փնտռեն խռովարարներուն բարկութիւնը իջեցնել եւ քինախնդիր անձերն ու զանգուածները իրարու հետ հաշտեցնել: Խաղաղարար կը կոչուին նաեւ անոնք որոնք անկեալ մեղա-

ւորները խոստովանութեան եւ ապաշխարութեան կը հրաւիրեն եւ պատճառ կը դառնան անոնց փրկութեան ու սրտի անդորրութեան:

8) Երանի՛ անոնց, որոնք կը հալածուին արդարութեան համար, որովհետեւ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին. — Ամէն անոնք որոնք իրենց աստուածապաշտութեան, ուղղամտութեան, ճշմարտախօսութեան եւ անաչառութեան համար նեղութեան կը մատնուին եւ զբրկանքներ կը կրեն մարդոցմէ, կը համարուին արդարութեան համար հալածուածներ:

9) Երանի ձեզի, երբ նախատեն եւ հալածեն ձեզ, կամ ձեր մասին ամէն տեսակի զրպարտութիւն ընեն իմ հետեւորդներս ըլլալուդ համար: Յնծացէ՛ք եւ ուրախացէ՛ք, որովհետեւ Աստուած առատօրէն պիտի վարձատրէ ձեզ երկնքի մէջ: Յիշեցէ՛ք, որ նոյն ձեռով հալածանքի ենթարկուեցան ձեզմէ առաջ ապրող մարգարէներն ալ. — Այս վերջին երանին Յիսուս ուղղած է իր աշակերտներուն եւ Աստուծոյ խօսքին պաշտօնեաներուն, որոնք իր փրկութեան եւ յարութեան աւետարանը քարոզելու ատեն Հին Ուխտի մարգարէներուն նման պիտի զրպարտուէին որպէս օրինազանցներ, խոտվարարներ եւ առ այդ պիտի ենթարկուէին հալածանքի, շարժարանքի եւ մահուան. սակայն աւետարանի քարոզութիւնը պիտի յաղթանակէր եւ հասնէր իր նպատակին ու բիւրաւոր մարդիկ պիտի ժառանգէին երկինքի արքայութիւնը:

Յիսուսի յարութենէն ետք առաքելներ իրենց գործունէութեամբ, զոհողութեամբ, համբերութեամբ եւ նահատակութեամբ ձգտեցան հասնելու կատարելութեան ու սրբութեան եւ արժանացան յաւիտենական կեանքի երանութեան պսակին:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ի՞նչ կը նշանակէ կատարեալ եղէք:
- 2) Ո՞վ ըստ կատարեալ եղէք:
- 3) Կատարելութեան կամ սրբութեան ձգտումը ի՞նչ բաներ կը պահանջէ:
- 4) Յիսուս լերան փարօզին մէջ քանի՞ երանիներ տուաւ:
- 5) Որո՞նք կրնան հոգիով աղքատ կոչուիլ:
- 6) Յիսուս սգաւոր ըսելով որո՞նց կ'ակնարկէր:
- 7) Որո՞նք կրնան հեղ կոչուիլ:
- 8) Որո՞նք արդարութեան համար անօթի ու ծարաւ կը սեպուին:
- 9) Որո՞նք ողորմած կը համարուին:
- 10) Որո՞նք մաքուր սիրտ ունեցող կը նկատուին եւ ո՞վ պիտի տեսնեն:
- 11) Խաղաղարար մարդիկը ի՞նչ պիտի կոչուին:
- 12) Որո՞նք կը կոչուին արդարութեան համար հալածուածներ:
- 13) Յիսուս իր վերջին երանին որո՞նց ուղղեց:
- 14) Կրնա՞ս գոց արտասանել ինչ երանիները:

Տէրունական Աղօթքը

(Մատթ. 2. 5-15)

Յիսուսի ուսուցումներուն մէջ ուշագրաւ է իր սոր-
վեցուցած աղօթքը որ ընհանրական Եկեղեցւոյ կողմէ կոչ-
ուած է Տէրունական Աղօթք: Հայ հաւատացեալներ Տէ-
րունական Աղօթքը անոր սկզբնատառերով Հայր Մեր կո-
չած են: Այս աղօթքը ուղեցոյց եւ առաջնորդ է բոլոր հա-
ւատացեալներուն՝ Աստուծոյ հետ յարաբերելու եւ Անոր
չնորհներուն արժանանալու համար: Տէրունական աղօթքը
կորիզն է սուրբ սիրտերէ Աստուծոյ մատուցուած աղա-
չանքներուն եւ մաղթանքներուն: Հաւատացեալներ զայն
սերտելով կը սորվին ու կ'իմանան թէ ո՞վ է Աստուած, ո՞ր
է Ան, ի՞նչ պէտք է խնդրեն իրմէ եւ ի՞նչ պարտականու-
թիւններ ունին կատարելիք իրենց Արարիչին հանդէպ:

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ (Գրաբար)

Հայր մեր որ յերկինս,
սուրբ եղիցի անուն քո.
եկեցե՛տ արքայութիւն քո.
եղիցի՛ն կամք քո
որպէս յերկինս եւ յերկրի:
Ձեաց մեր համապագորդ սուր մեզ այսօր.
եւ թող մեզ գպարտիս մեր,
որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց:
Ու մի՛ տանիր գմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա գմեզ ի չարէն.
զի քո է արքայութիւն եւ զօրութիւն
եւ փառք յաւիտեանս. ամէն:

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԻՆ
(Աշխարհաբար թարգմանութիւնը)

Հայր մեր երկնաւոր,
սրբաբանութի՛ անունդ.
Թող գա՛յ արքայութիւնդ,
Թող կատարուի քու կամքդ,
ինչպէս որ երկնքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ:
Ամենօրեայ մեր հացը այսօ՛ր եւս մեզի տուր:
Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք
անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործեն:
Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք.
այլ մեզ չարէն ազատէ՛:
Որովհետեւ քո՛ւկդ են միշտ
արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը, ամէն:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

1) Հայր մեր երկնաւոր.— Աստուած արարիչն ու
հայրն է բոլոր մարդոց: Ան ամէն տեղ ըլլալով հանդերձ
երկինքի մէջ ունի յատուկ տեղ, փառաց Աթոռ, ուր Սե-
րովբէներ, Քերովբէներ եւ երկնային զօրքեր կ'երկրպա-
ղեն Անոր ու կ'երգեն. «Սուրբ, սուրբ, սուրբ է զօրաց
Տէրը. բոլոր երկիր անոր փառքովը լեցուն է» (ԵՍԱՅԻ
2-3):

Մարդ արարածը իր մեղանշումին պատճառով թէեւ
կորսնցուցած էր Տիրոջ սրբութեան առջեւ կանգնելու վա-
յելքը, սակայն Աստուած որպէս հայր սիրեց մարդը եւ իր
Որդիովը առիթ շնորհեց անոր՝ վերանորոգուելու եւ որ-
դեզիր դառնալու իրեն: Ուստի ամէն անոնք որոնք կը հա-
ւատան Աստուծոյ Միածին Որդւոյն՝ Յիսուս Քրիստոսի
եւ կը մկրտուին ամենասուրբ Երրորդութեան անունով,
կը կոչուին Աստուծոյ որդիներ եւ համարձակութիւն
կ'ունենան զԱստուած Հայր կոչելու իրենց:

2) Սրբաբանուի՛ անունըդ. — Աստուած ամենասուրբ է: Ինքն է աղբիւրը սրբութեան եւ պէտք չունի սրբանալու: Սակայն կ'ուզէ որ մարդիկ սրտով իրեն մօտենան, ճանչնան իր սրբութիւնը եւ սրբութիւն իրենց մեղքերէն: Հաւատացեալները «Քու անունդ սուրբ ըլլայ» մաղթանքով իրենց իղձն ու փափաքը յայտնած կ'ըլլան Աստուծոյ, որ իրենք արժանի ըլլան իր անունը սուրբ սեպելու եւ փառաւորելու իրենց սրտին մէջ: Այս խնդրանքով աղօթած կ'ըլլան բոլոր հեթանոսներուն, անհաւատներուն եւ մուրեքներուն համար ալ, որպէսզի անոնք ալ ճանչնան զԱստուած եւ անոր սուրբ անունը իրենց վրան հովանի առնեն:

3) Թող գա՛յ արքայութիւնըդ. — Երկինքի թագաւորութիւնը Աստուծոյ սրբութեան իշխանութիւնն է: Երկինքի թագաւորութենէն ներս սատանան եւ մեղքը չեն կրնար թափանցել: Աստուծոյ ծրագիրն է որ երկինքի թագաւորութիւնը հաստատուի նաեւ երկրի վրայ: Քրիստոսի փրկագործութեամբ երկինքի թագաւորութիւնը թափանցած է մարդոց սրտերէն ներս եւ իւրաքանչիւր քրիստոնեայ հաւատացեալ քաղաքացի ու ժողովուրդ դարձած է անոր. սակայն երկրի վրայ սատանան կը շարունակէ մուրեքները շատերը:

Քրիստոսի երկրորդ գալուստէն վերջ սատանան, չար հրեշտակներն ու բոլոր անօրէնութիւն գործողները պիտի նետուին դժոխքի մէջ: Երկիրը պիտի մաքրուի իր պղծութենէն. պիտի ստեղծուի նոր երկինք ու նոր երկիր. Քրիստոս փառաց թագաւորը իր հրեշտակներով ու փրկեալներով պիտի հաստատէ իր արքայութիւնը երկրի վրայ եւ թագաւորէ յաւիտեան:

Հաւատացեալներ «Քու թագաւորութիւնդ գայ» աղաչանքով խնդրած կ'ըլլան բոլոր մարդոց փրկութիւնը, Քրիստոսի երկրորդ գալուստեան փութացումը, սատանային ու մեղքին չքացումը եւ երկինքի արքայութեան վերջնական հաստատումը երկրի վրայ:

4) Թող կատարուի՛ քու կամքըդ, ինչպէս որ երկնքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ. — «Սուրբ եղէ՛ք. քանզի ես սուրբ եմ» ըսած է Աստուած ու յայտնած իր կամքը բոլոր մարդոց: «Թողոս առաքեալն ալ Թեսաղոնիկէի Եկեղեցիին իր գրած առաջին թուղթին մէջ կ'ըսէ, «Աստուծոյ կամքը այս է, այսիմե՛ն ձեր սուրբ ըլլալը»:

Երկինքի մէջ կը տիրէ Աստուծոյ կամքը եւ սրբութիւնը կը շողայ բոլոր հրեշտակներուն վրայ: Երկնային զօրքերը զԱստուած կը պաշտեն ցնծութեամբ ու կը կատարեն անոր բարի կամքը:

Հաւատացեալներ «Քու կամքդ ըլլայ երկրի վրայ» արտասանելով կը խնդրեն Աստուծմէ որ իր խօսքը անցնէ ամէն տեղ, որպէսզի մեղաւոր մարդիկ հաւատքի գան, իրենց մեղքերէն սրբութիւն ու փրկուին: Միեւնոյն ատեն Աստուծոյ խոստում տուած կ'ըլլան թէ իրենք միշտ պատրաստ են խոնարհելու իր կամքին ու կարգադրութիւններուն առջեւ:

5) Ամենօրեայ մեր հացը այսօ՛ր եւս մեզի տուր. — Հաց բառը այստեղ կը նշանակէ մարմինի աճումին եւ կենսունակութեան համար անհրաժեշտ սնունդը: Մարդ արարածը Աստուծոյ թագաւորութիւնն ու անոր կամքը խնդրելէ ետք՝ արտօնուած է նաեւ խնդրելու իր մարմինին ամենօրեայ կարիքը, որ Աստուած պատրաստ է տալու իր բոլոր զաւակներուն:

Աստուած է սնուցիչը իր բոլոր արարածներուն: Իր ողորմութեան եւ օրհնութեան արդիւնքն է երկրի պտղաբերութիւնը: Բոլոր մարդիկ, նամանաւանդ հաւատացեալներ Աստուծոյ խնամքին տակ կը գտնուին: Հետեւաբար հաւատացեալներ «Մեր ամենօրեայ հացը մեզի այսօր տուր» խնդրանքով Աստուծոյ յայտնած կ'ըլլան թէ իրենց մարմնական սնունդին համար կարօտ են իր ողորմութեան ու պատրաստ են երախտագիտութեամբ եւ դժուանակութեամբ ընդունելու իրենց շնորհուած պարգեւը:

6) Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մեզ կը ներբնէ անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործեն.— Բոլոր մարդիկ հակամէտ են մեղանշելու: Աստուծոյ խօսքն ու պատուէրներն են որ մարդը կը զգուշացնեն մեղքէն եւ չարութենէ:

Աստուծոյ զաւակները թէեւ կը ձգտին սրբութեան, սակայն կեանքի ընթացքին յաճախ թերութիւններ ու սխալներ կ'ունենան եւ այդ պատճառով պարտական կը մնան Աստուծոյ առջեւ: Այս աշխարհի մէջ ապրող ոեւէ հաւատացեալ, նոյնիսկ Աստուծոյ թագաւորութեան համար տուն-տեղ ձգող եւ իրենց անձը Տիրոջ ծառայութեան ընծայող անհատներ անթերի չեն: Հետեւաբար բոլորն ալ պարտաւոր են Աստուծոյ ներում խնդրելու: Սակայն թողութիւն ստանալու համար պայման է որ մարդ ներէ զինք վշտացնողներուն յանցանքները եւ անյիշաչար ըլլայ անոնց հանդէպ: Ուստի հաւատացեալներ ի սրտէ պէտք է ներած ըլլան իրենց պարտապաններուն, որպէսզի կարենան համարձակօրէն թողութիւն խնդրել իրենց մեղքերուն համար:

7) Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք. այլ մեզ չարէն ազատէ՛.— Այստեղ յիշուած փորձութիւնը չի նմանիր Աստուծոյ կողմէ իր զաւակներուն հաւատքին գորութիւնը ի յայտ բերելու համար ի գործ դրուած փորձութեան: Աստուած իր զաւակները չար բաներով չի փորձեր: Ընդհակառակը՝ Աստուած ամէն բանի բարին կը գործածէ զինք սիրողներուն համար:

Աստուծոյ մատուցուած այս խնդրանքին մէջ փորձութիւնը սատանային կողմէ յարուցուած որոգայթն է, հաւատացեալները մեղքի մէջ ձգելու համար:

Սատանան ինքն իսկ է չարը եւ իրմէ կը բղխի չարութիւնը: Չարը՝ սատանան ամէն միջոցի կը գիտէ որ մարդիկ չարբանան եւ չժառանգեն երկինքի թագաւորութեան երանութիւնը: Հաւատացեալներ «այլ փրկեա զմեզ

ի չարէն» աղաղակելով՝ կ'աղաչեն Աստուծոյ որ զիրենք ազատէ սատանայի որոգայթներէն եւ մեղքի զերութենէն:

8) Որովհետեւ քննիչ եւ միշտ արքայութիւնը, գորութիւնը եւ փառքը՝ ամէն.— Տէրունական Աղօթքի այս վերջին նախադասութիւնը փառաբանական օրհնաբանութիւն է ամենակարող երկնաւոր Հօր: Հաւատացեալներ այս օրհնաբանութեամբ իրենց բացարձակ վստահութիւնը յայտնած կ'ըլլան Աստուծոյ յաւիտենական թագաւորութեան, գորութեան եւ փառքին:

Ամէն կը նշանակէ՝ եղիցի, թող ըլլայ:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Ո՞վ սորվեցուց Տէրունական Աղօթքը:
- 2) Կրնա՞ս գոց արտասանել զայն:
- 3) Ի՞նչո՞ւ համար հաւատացեալներ զԱստուած հայր կը կոչեն:
- 4) Ի՞նչ կը նշանակէ «Քու անունդ սուրբ ըլլայ»:
- 5) Աստուծոյ արքայութիւնը ի՞նչ է:
- 6) Որո՞նք քաղաքացի դարձած են երկինքի թագաւորութեան:
- 7) Աստուծոյ կամքը ի՞նչ է մարդ արարածին համար:
- 8) Ի՞նչ կը նշանակէ՝ «Թող կատարուի՛ քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ»:
- 9) Ի՞նչո՞ւ համար հաւատացեալը իր ամենօրեայ հացը խնդրելու է Աստուծոյ:
- 10) Հաւատացեալը իր մեղքերուն ներում խնդրելու առաջ ի՞նչ ընելու պարտաւոր է:
- 11) Ի՞նչ ըսել կ'ուզենք «Փրկէ՛ մեզ չարէն» աղաչելով:
- 12) Ի՞նչ կը նշանակէ ամէն:

Յիսուսի Առակները

Առակ կը նշանակէ փոխաբերուած խօսքերով եւ օրինակներով տրուած դէպք կամ պատմութիւն, որ կը բացայայտէ ճշմարտութիւն մը: Առակը պատկերաւոր բացատրութիւնն է իրողութեան մը, ճշմարտութեան մը:

Մարդիկ յաճախ իրենց գաղափարները ուրիշներուն փոխանցելու ատեն լուսաբանութեան համար առակներով կը խօսին: Զգայացունց դէպքի մը կամ անակնկալ պատահարի մը մասին լուր տալէ առաջ ալ յարմար կը դատեն նախ դիմացինին միտքը պատրաստել եւ ապա հաղորդել:

Առակները առհասարակ կ'ըլլան խորհրդաւոր եւ ունկնդիրները կը մղեն հետաքրքրուելու, մտածելու, խորհելու եւ եզրակացութիւններ հանելու:

Աստուած իր մարդարէներուն միջոցաւ խօսելու ատեն շատ անգամ անոնց բերնին մէջ առակներ դնելով տուաւ իր պատգամները, որպէսզի Իսրայէլի ազգին զաւակները լաւ հասկնային իր կամքը եւ տնօրինութիւնները:

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս ալ իր քարոզներուն մէջ բազմաթիւ առակներ խօսեցաւ իր առաքելութիւնն ու վարդապետութիւնը բացատրելու համար: Ան իր ունկնդիրները տպաւորելու եւ իր խօսքերը ըմբռնելի դարձնելու համար յաճախ պատկերաւոր արտայայտութիւններով ինքզինք նմանցուցած է լոյսի, ճամբու, հովիւի, ոչխարներու դրան, սերմնացանի, ցորենի հատիկի, որթատունկի, մայր հաւու, փեսայի, տանուտէրի, կոչնաստէրի, եւայլն:

Յիսուս իր առակներով լուսաւորեց ու հոգեւորապէս զօրացուց բարեպաշտ մարդիկը, մեղաւորները ապաշ-

խարութեան հրաւիրեց, անուղղաները յանդիմանեց եւ կոչ ուղղեց հրեայ ազգին ղեկավարներուն որ ընդունին Հօր Աստուծոյ իրենց զրկուած օծեալ Փրկիչը:

Յիսուսը ունկնդրող բազմութեանց մէջ կային կամակոր անձեր, որոնք չէին ուզեր ճանչնալ ճշմարտութիւնը եւ կը մերժէին Յիսուսի հրաւերը: Կային նաեւ ծանծաղամիտներ, որոնք նոյն վայրկեանին կ'ընդունէին Աստուծոյ խօսքը, սակայն անհոգ ըլլալով անտարբեր կը մնային Յիսուսի հրաւերին հանդէպ: Կային երրորդ դասակարգի մարդիկ, որոնք Աստուծոյ խօսքը ընդունելով հանգերձ չէին ուզեր ձերբազատուիլ նիւթապաշտութենէ, մեղսալի ցանկութիւններէ եւ իրենք զիրենք դուրս կը ձգէին Աստուծոյ թագաւորութենէն: Սակայն ժողովուրդին մէջ կային փոքրաթիւ մարդիկ, որոնք իրենց սիրտերը բացած էին Աստուծոյ խօսքին առջեւ եւ կ'ուզէին սրբուիլ ու երկինքի թագաւորութեան քաղաքացի դառնալ ի զին ամէն զոհողութեանց: Ուստի անոնք Յիսուսի կը մօտենային ու անոր աշակերտներուն հետ միասին կը ջանային իմանալ տրուած առակներուն մեկնութիւնը՝ հոգեւորապէս ածելու եւ զօրանալու համար:

Յիսուս Աստուծոյ փրկադորձութեան ծրագիրը բազմութեան իմանալի դարձնելու համար յաճախ առակներով կը խօսէր անոնց. սակայն յետոյ զանոնք կը մեկնէր իր աշակերտներուն եւ իրեն մօտէն հետեւողներուն:

Աշակերտները զարմանալով կը հարցնեն իրեն թէ ինչո՞ւ համար ժողովուրդին առակներով միայն կը խօսի: Յիսուս կը պատասխանէ անոնց. «Ձեզի տրուած է երկիւրքի արքայութեան խորհուրդները գիտնալ, իսկ անոնց չէ տրուած. վասնզի ով որ ունի պիտի տրուի անոր եւ պիտի աւելնայ. իսկ ով որ չունի, ունեցածն ալ պիտի առնուի: Անոր համար առակներով կը խօսիմ անոնց. վասնզի թէեւ կը նային, բայց չեն տեսներ. թէեւ մտիկ կ'ընեն, բայց չեն լսեր եւ չեն ըմբռներ» (ՄԱՏԹ. ԺԳ. 10-13): Յիսուս իր այս պատասխանով ըսել կ'ուզէ թէ Աստուծոյ պատգամ-

ները ընդունելու պատրաստակամութիւն ունեցողներուն աւելիով պիտի բացայայտուին աստուածային խորհուրդները եւ անոնք լուսաւորուելով պիտի մտնեն երկինքի արքայութենէն ներս. իսկ ամէն անոնք որոնք ինքնահաւանութեամբ եւ կամակորութեամբ կը լսեն Աստուծոյ խօսքը եւ զայն ընդունելու յօժարութիւն ցոյց չեն տար, չեն ուզեր տեսնել ու լսել ճշմարտութիւնը, ինքնաբերաբար մերժած կ'ըլլան իրենց մատուցուած երկնային իմաստութիւնը որ կրնայ գիրենք առաջնորդել ճշմարտութիւնը ճանչնալու:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ի՞նչ կը նշանակէ առակ:
- 2) Ինչո՞ւ համար մարդիկ յաճախ առակներ կը խօսին:
- 3) Յիսուսէ առաջ որո՞նք յաճախ Աստուծոյ պատգամները տալու ատեն առակներով խօսած են:
- 4) Յիսուս քարոզելու ատեն յաճախ ինքզինքն ի՞նչ բաներու նմանցուցած է:
- 5) Յիսուս որո՞նց կը մեկնէր իր առակները:
- 6) Յիսուս ինչո՞ւ համար առակներով կը խօսէր:
- 7) Յիսուսի հետեւեալ առակները կարդացէ՛ք եւ պատմեցէ՛ք.—
 - ա) Սերմնացանին առակը (Մատթ. ԺԳ. 4-23: Մարկ. Դ. 3-20: Ղուկ. Ը. 5-15):
 - բ) Որովներուն առակը (Մատթ. ԺԳ. 24-30, 36-48):
 - գ) Բարի Սամարացիին առակը (Ղուկ. Ժ. 30-37):
 - դ) Կորսուած ոչխարին առակը (Ղուկ. ԺԵ. 3-7):
 - ե) Անառակ որդիին առակը (Ղուկ. ԺԵ. 11-32):
 - զ) Մեծատունին եւ աղքատ Ղազարոսին առակը (Ղուկ. ԺԶ. 19-31):
 - է) Անպտուղ թզենիին առակը (Ղուկ. ԺԳ. 6-9):

- ը) Չար մշակներուն առակը (Մատթ. ԻԱ. 33-44: Մարկ. ԺԲ. 1-11: Ղուկ. Ի. 9-19):
- թ) Տասը կոյսերուն առակը (Մատթ. ԻԵ. 1-18):
- ժ) Քանքարներուն առակը (Մատթ. ԻԵ. 14-30):

Յիսուսի Հրաշքները

Հրաշք կը նշանակէ Աստուծոյ զօրութեամբ կատարուած գերբնական ուժէ գործ կամ բժշկութիւն, որ բնութեան օրէնքներէն անկախ ըլլալով անբացատրելի կը մնայ մարդկային միտքին ու տրամաբանութեան: Որեւէ հրաշք ցոյց կու տայ Աստուծոյ ամենակարողութիւնն ու ամենազօրութիւնը:

Աստուած յաճախ հրաշքներ կատարած է իր մարգարէներուն ձեռքով՝ իր զօրութիւնը ցոյց տալու, իր խօսքին ճշմարտութիւնը ապացուցանելու, իր ընտրեալները փրկելու, մեղաւորները զգաստացնելու եւ մարդ արարածը ուղիղ շաւղներու մէջ առաջնորդելու համար: Տիրոջ հրաշքները կոչուած են նաեւ աստուածային նշաններ, սեանչելիքներ եւ մեծամեծ գործեր:

Աստուածային այս հրաշքներուն դիմաց աշխարհի վրայ կան նաեւ սուտ մարգարէներ եւ կախարդներ, որոնք սատանայի ու դեւերու իշխանութեան ներքեւ աճաբարութիւններ եւ զանազան ձեւերով նշաններ կ'ընեն ու կ'ապշեցնեն մարդիկը: Անոնք այդ բաները կը կատարեն դրամ եւ համբաւ շահելու համար, ու կը մոլորեցնեն իրենց հետեւորդները: Աստուածաշունչը կը զգուշացնէ հաւատացեալները այդպիսիներէն, որպէսզի չիյնան անոնց թակարդին մէջ:

Աստուածային որեւէ հրաշք կը կատարուի մարդոց բարիքին համար եւ կը յայտնէ Տիրոջ պատգամն ու կամքը:

Հին Ուխտի շրջանին Աստուած Իսրայէլի ժողովուրդը եգիպտոսի գերութենէն ազատելու համար կատարեց բազմաթիւ հրաշքներ Մովսէս մարգարէին ձեռքով: Ան կար-

միր ծովը երկուքի բաժնեց եւ անդունդները ցամքեցուց ու անոնց մէջէն քալել տուաւ իր ժողովուրդին, ապա ծովուն ջուրերը ետ միացնելով պատփեց իսրայէլացիները հետապնդող չար փարաւոնը իր զօրքերով: Անապատին մէջ երկինքէն մանանայ իջեցուց Իսրայէլի որդիները կերակրելու համար: Յետուի օրով արեւը կեցուց: Եղիա մարգարէին աղօթքով երկինքէն կրակ իջեցուց, իրեն մատուցուած զոհը այրեց ու ետքը անձրեւ դրկեց: Եղիսէ մարգարէին ձեռքով հրաշքներ եւ բժշկութիւններ կատարեց: Սեդրաքը, Միսաքն ու Աբեղնագովը կրակի հնոցին բոցերէն ազատելով յայտնեց իր ամենազօրութիւնը նարուզողոնոսոր թագաւորին եւ Բաբելոնի բնակիչներուն:

Աշխարհի Փրկիչը Յիսուս իր առաքելութեան ընթացքին կատարեց բազմաթիւ հրաշքներ: Ան գլխաց իրեն դիմող թշուառներուն, բժշկեց հիւանդները, մաքրեց բորոտները ու զանազան ախտերէ վարակուածները:

Յիսուս կոչրերուն աչքերը բացաւ, կաղերն ու անդամալոյծները ոտքի հանեց, խուլ-համրերուն խօսիլ տուաւ, դիւահարները ազատեց իրենց տանջանքներէն ու նաեւ մեռելները կենդանացուց: Կատարեց նաեւ այլ հրաշքներ՝ Աստուծոյ սէրը, ողորմութիւնն ու անօրինութիւնները ցոյց տալու համար, որպէսզի մարդիկ տեսնէին Հին Կտակարանի մարգարէական խօսքերուն կատարումը եւ հաւատային իր առաքելութեան:

Յիսուս երբեմն իր բժշկութիւնները կատարելէ վերջ ենթականերուն կը պատուիրէր որ մարդու չյայտնէին, որովհետեւ կը խուսափէր աշխարհիկ համբաւէ ու ամբոխավարութենէ:

Կանայի հարսնիքին Յիսուս կատարեց իր առաջին հրաշքը՝ ջուրը դինիի փոխելով ու իր աշակերտներուն յայտնեց իր աստուածային փառքը:

Հինգ հազարներու եւ չորս հազարներու կերակրումով ցոյց տուաւ իր գութը, ողորմութիւնն ու հոգածութիւնը մարդոց հանդէպ:

Մովը խաղաղեցնելով ցոյց տուաւ իր աստուածային զօրութիւնը, ու նաեւ հովանաւորութիւնը իր թեւարկութեան ներքեւ եղողներուն:

Մովուն վրայ քաշելով ցոյց տուաւ հաւատքի զօրութիւնը:

Իր այլակերպութեամբ Յիսուս ցոյց տուաւ իր աստուածային փառքը ու աշակերտներուն լսելի դարձուց Հօր Աստուծոյ վկայութիւնը իր մասին:

Չորս օրուան մեռեալ Ղազարոսը յարուցանելով ցոյց տուաւ թէ ինքն է յարութիւնը եւ կեանքը, եւ ո՞վ որ իրեն հաւատայ, յաւիտենական կեանքը պիտի ժառանգէ:

Հրեաներու իշխաններէն Նիկողեմնոս Յիսուսի հրաշքներուն մէջ Աստուծոյ զօրութիւնը տեսնելով խոստովանեցաւ եւ ըսաւ. «Գիտեմք որ դուն Աստուծմէ վարդապետ եկած ես, վասնզի ոչ ոք կրնայ ընել այն հրաշքները զորս Դուն կ'ընես, եթէ Աստուած անոր հետ չըլլայ» (ՅՈՎՀ. Գ. 2):

Թէեւ հրեայ իշխանաւորներուն մեծամասնութիւնը Յիսուսի ժողովրդականութիւնը տեսնելով՝ կամակորութեամբ չէին ուզեր հաւատալ անոր առաքելութեան, սակայն ժողովուրդէն շատեր անոր հրաշքները տեսնելով կը հաւատային եւ զԱստուած փառաւորելով կ'ըսէին. «Այսպիսի բան մը չէր տեսնուած Իսրայէլի մէջ» (ՄԱՏԹ. Թ. 33):

Ղազարոսի յարութիւնը տեսնելով հրեաներէն շատեր Յիսուսի հաւատացին եւ Անոր Երուսաղէմ մտած ատեն բարձրաձայն աղաղակեցին թէ Աստուծոյ կողմէ զրկուած Մեսիան էր Ան:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ի՞նչ կը նշանակէ հրաշք:
- 2) Աստուած յանախ որո՞նց ձեռքով կատարած էր իր հրաշքները:
- 3) Աստուած որո՞ւ ձեռքով կարմիր ծովը նեղեցելով ցամաքի մամբայ բացաւ. ինչո՞ւ համար:
- 4) Աստուած ո՞ր մարգարէին աղօթքով երկինգէն կրակ իջեցնելով իրեն մատուցուած գոհը այրեց եւ ապա անձրեւ զրկեց:
- 5) Աստուած որո՞նք ազատեց կրակի հնոցի բոցերէն:
- 6) Յիսուս ինչո՞ւ համար բժշկութիւններ եւ հրաշքներ կատարեց:
- 7) Յիսուսի հետեւեալ հրաշքները կարդացէ՛ք եւ պատմեցէ՛ք.—

- ա) Յիսուսի առաջին հրաշքը (Յովհ. Բ. 1-11):
- բ) Կափառոնաւմի անդամալուծին բժշկութիւնը (Մարկ. Բ. 3-12):
- գ) Նայիմի պատանհին յարութիւնը (Ղուկ. Է. 11-17):
- դ) Պրոքատիկէի անդամալուծին բժշկութիւնը (Յովհ. Ե. 1-15):
- ե) Հինգ հազարներու կերակրուիլը (Մատթ. ԺԴ. 15-21):
- զ) Ալեկոծ ծովուն խաղաղիլը (Մարկ. Դ. 35-41):
- է) Յայրոսի աղջկան բժշկութիւնը (Մարկ. Ե. 21-24, 35-43):
- ը) Յիսուսի այլակերպութիւնը (Մատթ. ԺԷ. 1-8):
- թ) Ի ծնէ կոյրին բժշկութիւնը (Յովհ. Թ. 1-38):
- ժ) Ղազարոսի յարութիւնը (Յովհ. ԺԱ. 1-46):

Յիսուս Քրիստոսի Հակառակորդները

Յիսուսի Մեսիական գործունեութեան շրջանին Հրէաստանի կառավարիչն էր Հոռոմի կայսեր կողմէ նշանակուած Պոնտացի Պրոզատոս կուսակալը. իսկ Գալիլիոյ վրայ կ'իշխէր Հոռոմի հարկատու Հերովոդէս Անտիպաս Թադաւորը:

Հրեաներ Հոռոմի գերիշխանութեան ենթակայ ըլլալով հանդերձ իրենց քահանայապետին նախագահութեամբ ունէին Սիմետրիոն կոչուած ծերակուտականներու ժողովը եւ ատեանը, ուր կրնային լուծել իրենց կրօնական-ազգային ներքին հարցերը՝ հրէական օրէնքներուն համաձայն:

Մերակուտական ժողովին մէջ իրենց ներկայացուցիչներն ունէին հրեաներու քահանայական դասը, իշխաններն ու դպիրները:

Դպիր կը կոչուէին այն մտաւորականները որոնք կը զբաղէին Հին կտակարանի ուսումով եւ գրչագրութեամբ: Միեւնոյն ատեն անոնք կը դաստիարակէին հրեայ մանուկները եւ անոնց կը սորվեցնէին Սուրբ Գրային օրէնքներն ու պատուիրանները: Դպիրները կը կոչուէին նաեւ Օրինաց վարդապետ կամ Օրինական: Հրեաներու ժողովարաններուն մէջ անոնք կը կարդային Հին կտակարանէն ընթերցուածներ եւ կը մեկնաբանէին: Դպիրները որպէս մտաւորական եւ Աստուծոյ խօսքին մեկնիչ՝ կը յարգուէին հրեայ ժողովուրդին կողմէ եւ կը յորջորջուէին րարուծի որ կը նշանակէ՝ վարդապետ, ուսուցիչ:

Այդ օրերուն հրեայ ազգին մէջ գոյութիւն ունէին Փարիսեցի եւ Սադուկեցի աղանդներ, որոնք տիրական

դիրքեր զբաւած էին հրէական ծերակոյտի ժողովին մէջ: Քահանայական դասը, ժողովուրդին իշխաններն ու օրինաց վարդապետ դպիրները մեծաւ մասամբ այս երկու աղանդներուն մաս կը կազմէին:

Այս երկու աղանդները իրարու ներհակ համոզումներ ու տեսակէտներ ունէին կրօնական հաւատալիքներու եւ քաղաքական հարցերու շուրջ:

Փարիսեցիները կ'ընդունէին Հին կտակարանի բոլոր գիրքերուն աստուածային ներշնչումով գրուած ըլլալը: Կը հաւատային հրեշտակներու գոյութեան, մեռելներու յարութեան, վերջին դատաստանի եւ յաւիտենական կեանքի:

Սադուկեան շրջանին բարեպաշտական շարժում մը եղած է փարիսեցիական աղանդը ու անոր անդամները հետամտած են ջերմօրէն փարելու հրէական օրէնքներուն եւ սովորութիւններուն: Սակայն հետազային անոնց մեծամասնութիւնը շեղած է աստուածապաշտութեան ճշմարիտ ուղիէն: Յիսուսի ժամանակ փարիսեցիները դարձած էին ինքնահաւան, հպարտ, փառասէր, նիւթապաշտ եւ կեղծաւոր: Աստուածաշունչի օրէնքներուն արտաքին ծէսերն ու ձեւակերպութիւնները միայն կատարելով կը ջանային ինքզինքնին բարեպաշտ ցուցնել հանրութեան եւ գովեստ ու յարգանք ընդունիլ մարդոցմէ: Միեւնոյն ատեն կ'արհամարհէին պարզ ժողովուրդը՝ զանոնք տգէտ եւ մեղաւոր համարելով:

Փարիսեցիները ազգայնամոլ էին ու հաշտ աչքով չէին դիտեր Հոռոմէական տիրակալութիւնը. Թէեւ պարազաններուն համեմատ կեղծաւորութեամբ հաւատարմութիւն ալ կը ցուցաբերէին:

Սադուկեցիները Հին կտակարանի մատեաններէն միայն Մովսէսի Օրինաց հինգ գիրքերը կ'ընդունէին որպէս աստուածային ներշնչումով գրուած գրութիւններ: Անոնք չէին հաւատար հրեշտակներու գոյութեան, մեռելներու յարութեան, վերջին դատաստանի եւ յաւիտենական

կեանքի: Անոնք բժարանդիր չէին Մովսէսի Օրինաց գիրքերէն դուրս գտնուող հրէական ասանդութիւններուն եւ սովորութիւններուն հանդէպ: Համակերպող էին հռոմէական տիրապետութեան: Սաղուկեցիներն ալ փարիսեցիներուն պէս ամբարտաւան ու կեղծաւոր էին: Քահանայական դասի անդամները առհասարակ այս սղանդին հետեւող էին:

Յիսուս որպէս Մեսիա յայտնուելէ ետք պատգամեց երկինքի թագաւորութեան մօտալուս ըլլալը եւ հրաւիրեց Իսրայէլի որդիները անկէ ներս մտնելու՝ ապաշխարութեամբ եւ վերստին ծնունդով: Քարոզեց անոնց զԱստուած պաշտել հոգիով եւ ճշմարտութեամբ ու տէր ըլլալ իրենց ազգային կոչումին: Միեւնոյն ատեն ձաղկեց կեղծ աստուածապաշտութիւնը, ազահութիւնը, անիրաւութիւնն ու այլազան մոլութիւնները:

Հրեայ ազգին ղեկավարները չհանդուրժեցին Յիսուսի քարոզներուն, որովհետեւ անոր հատու խօսքերը կը յայտնաբերէին իրենց ծածուկ մեղքերն ու կեղծաւորութիւնը: Անոնք ինքնահաւան ըլլալով չուզեցին անդրադառնալ իրենց մեղքերուն եւ մոլութիւններուն: Թէեւ տեսան աստուածային զօրութեամբ Յիսուսի կատարած հրաշքները եւ լսեցին անոր երկնային խորիմաստ պատգամները, սակայն կամակորուրթեամբ չընդունեցին Յիսուսը որպէս Օծեալ Փրկիչ, որովհետեւ իրենք աշխարհային փառքի, դիրքի եւ հարստութեան հետամուտ ըլլալով կ'ակնկալէին ունենալ Մեսիա մը որ յագուրդ տար իրենց ցանկութիւններուն՝ հիմնելով աշխարհակալութեան ձգտող թագաւորութիւն մը, երուսաղէմի մէջ, փ պարծանս հրեայ ազգին:

Նախապէս ալ անոնք չէին ուզած հաւատալ Յովհաննէս Մկրտիչի մարդարեութեան երբ ան կը յայտարարէր Յիսուսին Մեսիա ըլլալը եւ կը վկայէր թէ ինք տեսած էր Աստուծոյ Սուրբ Հոգւոյն էջը Անոր վրան:

Յիսուսի խօսքերն ու պատգամները առաւելաբար տեղ գտան ժողովուրդի խոնարհ խաւերուն մէջ: Բարեպաշտ մարդիկ կատարուող հրաշքներն ու բժշկութիւնները տեսնելով փառք տուին Աստուծոյ, հետեւեցան Յիսուսի եւ անոր խօսքերը մտիկ ընելով հոգեւոր զարթօնք ունեցան: Եղան նաեւ մեղաւորներ՝ Զակքէոսի նման՝ որոնք իրենց մեղքերը խոստովանելով ապաշխարեցին:

Հրեայ իշխաններէն երկու հոգի՝ Նիկողեմոս՝ եւ Յովսէփ Արեմաթացի, հրեայ ծերակուտականներէն վախնալով՝ քողարկուած հաւատքով աշակերտեցան Յիսուսի:

Հրեայ ամբոխն ալ, իր ղեկավարներէն ազդուած, կ'ակնկալէր ունենալ Մեսիա մը որ երկրաւոր թագաւորութիւն մը հիմնէր եւ մեծ փառքի հասցնէր Իսրայէլի ազգը. ու երբ տեսաւ Յիսուսի կատարած հրաշքները, ուզեց զԱյն թագաւոր հռչակել ընդդէմ հռոմէական իշխանութեան. սակայն Յիսուս խուսափեցաւ եւ իր խօսքերովն ու առակներովը բացատրեց թէ ինք առաքուած է Հօր Աստուծոյ կողմէ՝ մեղաւոր մարդկութիւնը իրենց մեղքերէն փրկելու համար:

Փարիսեցիներն ու Սաղուկեցիները Յիսուսի ժողովրդականութիւնը տեսնելով վախցան որ Ան կ'ընար հրեայ ազգին ղեկը ձեռք առնել եւ զիրենք վար ձգել իրենց աթոռներէն: Ուստի թշնամական դիրք բռնեցին եւ ջանացին թերութիւններ ու յանցանքներ գտնել Անոր վրան, որպէսզի կարենային մեղաւոր հռչակել զԱյն ժողովուրդին առջեւ: Սակայն չյաջողեցան մեղքի բիծ մը նշմարել: Ընդհակառակը՝ Յիսուսի սրբութիւնն ու անմեղութիւնը ցոյն կու տային զինք ղատապարտողներուն մեղքերը:

Իրենց չար դիտաւորութեան մէջ չյաջողելով սկսան զրպարտել զԱյն եւ ըսել թէ Յիսուս ղեւերու Բէեզզեբուզ իշխանին զօրութեամբ ղեւերը կը հանէր այսահարներէն:

Մաղկազարդի օրը՝ երուսաղէմի մէջ՝ բազմահազար

ժողովուրդին կողմէ Յիսուսի հանդէպ ցուցաբերուած ցնծութեան ազադակները հրեայ քահանայապետներուն եւ իշխաններուն նախանձն ու ատելութիւնը աւելի զրգռեցին: Իրարու հակադիր Փարիսեցի ու Սադուկեցի իշխանաւորները միացեալ ճակատ կազմեցին Յիսուսի դէմ: Անոր բերած պատգամն ու վարդապետութիւնը խափանելու համար որոշեցին զաղտնօրէն սպաննել եւ անյայտացնել զԱյն ժողովուրդին աչքէն: Իրենց ծրագիրը յաջողցնելու համար երեսուն կտոր արծաթ դրամ խոստացան Յիսուսի տասներու աշակերտներէն Յուդա Իսկարիովտացիին, որպէսզի յարմար ատեն մը՝ մարդոց աչքէն հեռու վայրի մը մէջ իր վարդապետը մատնէր իրենց: Սակայն աստուածային տնօրինութիւնը տարբեր էր: Քրիստոս որպէս անարատ դառ պիտի զոհուէր Գողգոթայի բարձունքին վրայ՝ Երուսաղէմի աչքին առջեւ եւ իր սուրբ արիւնով պիտի կատարէր մարդկութեան փրկութիւնը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ո՞ր կայսրութեան գերիշխանութեան ներքեւ էին հրեաները Յիսուսի ժամանակ:
- 2) Հրեաներ իրենց կրօնական-ազգային հարցերը ո՞ր եւ ինչպէ՞ս կը լուծէին:
- 3) Որո՞նք էին դպիրները, ի՞նչ էր իրենց պաշտօնը:
- 4) Ի՞նչ տէսակէտներով իրարմէ կը զատորոշուէին Փարիսեցի եւ Սադուկեցի աղանդները:
- 5) Հրեայ ազգին մեծամասնութիւնը ի՞նչ կ'ակնկալէր Մեսիայի յայտնութենէն:
- 6) Յիսուս որպէս Մեսիա ի՞նչ պատգամեց:
- 7) Փարիսեցիներն ու Սադուկեցիները ինչո՞ւ համար ընդդիմացան Յիսուսի բարոգութեանց:
- 8) Առհասարակ ո՞ր խաւի մարդիկը հետեւեցան Յիսուսի:

9) Ո՞ր երկու իշխանները հաւատացին Յիսուսի վարդապետութեան:

10) Ինչո՞ւ համար հրեայ ազգին դեկավարները Յիսուսը սպաննել ուզեցին:

11) Անոնք ի՞նչ ձեւով սպաննել կ'ուզէին:

12) Աստուածային տնօրինութեամբ Յիսուսի զոհաբերութիւնը ո՞ւր պիտի կատարուէր:

**Յիսուսի Խաչելութիւնն ու Յարութիւնը
Եւ Հրեայ Ազգին Կամակորութիւնը**

Հրեայ իշխանաւորները թէեւ որոշած էին Յիսուսը գաղտնօրէն մեռցնել եւ զԱյն անյայտացնել, սակայն չյաջողեցան: Երբ իմացան Անոր Գեթսեմանիի պարտէզին մէջ ըլլալը, ապահովութեան համար զինուորներ ալ միացուցին զայն հետապնդող անձերուն:

Յիսուս իր դէմ իւրեւրեւ զաւին տեղեակ էր եւ կրնար դիւրութեամբ ինքզինք ազատել՝ հեռանալով Երուսաղէմէն, ինչպէս որ ըրած էր անկէ առաջ այլ առիթներով: Սակայն իր ժամը հասած ըլլալով՝ կամաւորութեամբ յանձնուեցաւ իր վրան եկող ամբօխին, որպէսզի կատարէր իր զոհարարութիւնը մարդոց մեղքերուն քաւութեան համար:

Յիսուսի ձերբակալութիւնը մեծ բազմութեամբ կատարուելով՝ ձախողեցաւ զԱյն գաղտնօրէն մեռցնելու եւ մէջտեղէն անյայտացնելու ծրագիրը: Դէպքերուն ընթացքը ստիպեց հրեայ քահանայապետներն ու իշխանները որ շուտով դատական ատեան մը կազմեն, Յիսուսի վրան յանցանք մը բեռցնեն, դատեն եւ հրէական օրէնքին համաձայն զԱյն մահուան մատնեն: Իրենց այդ արարքով անոնք կը ջանային ցոյց տալ ժողովուրդին, թէ Աստուծոյ ու անոր օրէնքին դէմ հայհոյող մեղաւոր անձ մըն էր որ կը դատապարտէին մահուան: Սակայն հակառակ սուտ վկաններուն ամբաստանութեանց՝ չկրցան Յիսուսի վրայ յանցանք մը բեռցնել: Ի վերջոյ Կայիափա քահանայապետը ճարհատ ըսաւ. «Կեանքանի Աստուծմով երդում ընել կու տամ քեզի, որ ըսես մեզի թէ դո՞ւն ես Քրիստոսը՝

Աստուծոյ Որդին»: Յիսուս հաստատական պատասխան տուաւ եւ ըսաւ. «Ասկէ յետոյ պիտի տեսնէք Մարդու Որդին նստած Զօրութեան աջ կողմը եւ եկած ամպերու վրայ»:

Յիսուսի այս պատասխանը մահացու յանցանք մը համարելու զայրոյթով քահանայապետը իր հանգերձները պատռեց եւ ըսաւ. «Հայիոյեց, ալ ի՞նչ պետք ունիմք վկաներու. ահա հիմա լսեցիք ատոր հայիոյութիւնը: Ի՞նչ է ձեր կամքը»: Ատեանի մէջ նստողները քահանայապետին ձայնակցելով լացաղանջեցին՝ «Մահապարտ է», ու սկսան անարգել Յիսուսը, թքնել Անոր վրան, ծեծել եւ ապտակել: Անոնք Յիսուսի կողմէ իր անձին համար «Աստուածորդի եմ» վկայութիւնը մահացու մեղք համարեցին. մինչդեռ Հին Կտակարանի մէջ մարգարէական գրութիւնը «Հօր Աստուած» կոչած էր աստուածառաք Մեսիան:

Ժողովականները Յիսուսը անարդարօրէն մահապարտ հռչակելէ ետք, առաւօտուն, ամբօխի մը զլուխն տնցած՝ զԱյն կապուած տարին Պիղատոս կուսակալին առջեւ եւ ամբաստանեցին որպէս խռովարար անձ մը, որ ինքզինք թագաւոր կը հռչակէր Հռոմի կայսեր դէմ, ու պահանջեցին որ խաչի մահուան դատապարտուի:

Յիսուս Պիղատոսին ըսաւ. «Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ: Եթէ իմ թագաւորութիւնս այս աշխարհէն եղած ըլլար՝ իմ սպասաւորներս կը կոուէին անշուշտ որ ես հրեաներուն ձեռքը չմատնուէի... Արդարեւ ես թագաւոր եմ. ես այս բանին համար ծնած եմ, եւ ատոր համար աշխարհ եկած եմ, որպէսզի վկայեմ ճշմարտութեան մասին: Ով որ ճշմարտութեանէն է՝ իմ ձայնս կը լսէ» (ՅՈՎՀ. ԺԸ. 36-37):

Պիղատոս Յիսուսը մտիկ ընելէ եւ խնդիրը քննելէ ետք չուզեց անարդար վճիռ արձակել ու յայտարարեց թէ Ան անմեղ էր: Հրեայ քահանայապետները զայրացան Յիսուսի անմեղ հռչակուելուն դէմ եւ ամբօխը զրգռեցին, որպէսզի պոռչտայ ու Անոր համար մահուան վճիռ պա-

հանջէ: Իսկ իրենք ալ Պիղատոսին սպառնալով ըսին. «Եթէ գԱյն արձակես, կայսեր բարեկամ չես. ով որ ինքզինքն քաղաւոր կը կոչէ՝ կայսեր հակառակ է»: Այս խօսքին վրայ Պիղատոս վախցաւ որ քաղաքին մէջ կրնար խռովութիւն ծագիլ եւ իր դիրքը խախտէր Հռոմի կայսեր առջեւ. ուստի հրեաներուն հաճելի ըլլալու եւ իր պաշտօնը չկորսնցնելու սիրոյն վճռեց Յիսուսը խաչել ու ինքնարդարացումի համար ալ իր ձեռքերը լուալով ըսաւ. «Ես անպարտ եմ այդ արդարից արիւնէն. դուք մտածեցէք»: Մոլեգնած հրեաները պոռայցին. «Ամոր արիւնը մեր ու մեր ողիներուն վրայ ըլլայ», եւ կամակորուրթեամբ իրենց վրայ անէծք բերին:

Պիղատոսի վճիռէն ետք զինուորներ Յիսուսի գլխուն փռուցէ պսակ դրին, ծաղրեցին, մտրակեցին ու շարչարեցին. ապա անոր հետ ուրիշ երկու աւազակներ ալ միասին առնելով Երուսաղէմէն դուրս հանեցին եւ Գողգոթա բլուրին վրան խաչեցին:

Մինչ Յիսուս խաչին վրայ իր սուրբ արիւնը կը թափէր, երեք ժամ խաւար տիրեց: Իսկ երբ բարձր ձայնով հոգին աւանդեց, երկիրը շարժեցաւ, ժայռեր պատառեցան եւ գերեզմաններ բացուեցան, ու Երուսաղէմի տաճարին Սրբութիւն Սրբութեանց սրահին վարագոյրը վերէն վար երկուքի ճեղքուեցաւ:

Սրբութիւն Սրբութեանց կոչուած սրահը Աստուծոյ ներկայութիւնը կը խորհրդանշէր: Այս սրահը վարագոյրով մը բաժնուած ու զատուած էր Սրբութիւն կոչուած այլ սրահէ մը, ուր քահանաները արտօնուած էին պաշտամունք կատարելու: Սակայն Սրբութիւն Սրբութեանց սրահին մէջ արտօնուած էր միայն քահանայապետին մուտքը՝ տարին մէկ անգամ՝ զոհին արիւնը Աստուծոյ մատուցանելով քաւութիւն ընելու իր եւ իր ժողովուրդին մեղքերուն համար:

Սրբութիւն Սրբութեանց սրահին վարագոյրը նշանակ

էր աշխարհի մեղքին պատճառով յառաջ եկած այն արգելքին, որ մարդ արարածին առջեւ կը ցցուէր եւ թոյլ չէր տար անոր՝ իր Արարիչին սրբութեան առջեւ նեկայանալու: Իսկ մատուցուած զոհին արիւնը, որ քահանայապետին կողմէ Սրբութիւն Սրբութեանց սրահին մէջ կը սրսկուէր, կը խորհրդանշէր Քրիստոսի անարատ արիւնը որ պիտի սրսկուէր Հօր Աստուծոյ առջեւ՝ մարդ արարածին մեղքերը քաւելու համար:

Տաճարի վարագոյրին վերէն վար պատուելիլը աստուածային նշան մըն էր, որով ցոյց կը տրուէր հրեայ ազգին, թէ այդ վայրկեանին Յիսուս Քրիստոսի զոհագործութեամբ կատարուած էր մարդ արարածին համար Աստուծոյ ծրագրած փրկագործութիւնը եւ վերջուած էր մեղքին պատը, որ արգելք կ'ըլլար մարդուն Աստուծոյ մօտենալու: Ու Հայր Աստուած իր Միածին Որդւոյն արեան հեղումով հաստատած էր Նոր Ուխտ մը համայն աշխարհի մարդոց հետ, զանոնք դրախտէն ներս ընդունելու համար:

Յիսուս Քրիստոսի զոհաբերութեամբ եւ անոր արեան հեղումով վերջ կը դրուէր Հին Ուխտին եւ անոր արարողութիւններուն: Այլեւս կարիք չէր մնար ոչխարներ զոհելու եւ անոնց արիւնը Աստուծոյ նուիրելու, որովհետեւ անոնք նշանակ էին Նոր Ուխտի արեան հեղումին, որ Յիսուս քահանայապետարար մատոյց իր Հօր:

Հրեայ քահանայապետներն ու իշխանները աստուածային այդ երեւոյթներն ու նշանները տեսնելով հանդերձ՝ չուզեցին զգաստանալ եւ անդրադառնալ իրենց սխալ արարքներուն, մինչ խաչելութեան հսկող հարիւրապետն ու զինուորները եղած դէպքերը տեսնելով վախով-դողով խոստովանեցան ու ըսին. «Այս մարդը արդար էր... Այս մարդը Որդի Աստուծոյ էր»:

Յովսէփ Արեմաթացի եւ Նիկողոսիոս խոր ցաւով համակուեցան Յիսուսի խաչելութեան եւ մահուան վրայ:

կատարուած եղւոյութեան կսկիծը քաջութիւն ներշնչեց իրենց եւ այլեւս նկատի չառին հրեաներուն վախազդեցութիւնը: Անոնք Պիղատոսէն առնուած մասնաւոր հրամանով Յիսուսի մարմինը խաչէն վար իջեցուցին եւ հրէական օրէնքին համեմատ խունկերով, զմուռսով եւ մաքուր կտաւով պատեցին ու զրին ժայռափոր նոր գերեզմանի մը մէջ:

Հրեայ քահանայապետները Յիսուսի գերեզմանին դուռը կնքեցին եւ հոն պահապան զինուորներ զրին, որպէսզի որեւէ մէկը չհամարձակէր Յիսուսի մարմինը վերցնել: Անոնց նպատակն էր երեք օր ետք Յիսուսին մեռած մարմինը ցուցադրել ժողովուրդին եւ յայտարարել թէ ան խարեբայ մըն էր եւ իր յարութեան մասին ըրած մարգարէութիւնը չէր իրականացած:

Սակայն ի դերու ելաւ քահանայապետներուն ակնկալութիւնը: Երրորդ օրը՝ Միաշաբաթին (կիրակի) Յիսուսի անշնչացած մարմինը վերակենդանացաւ, յարութիւն առաւ եւ զոց գերեզմանէն դուրս ելաւ: Պահապան զինուորները, որոնք իրենց պարտականութեան գլուխը կեցած կը հսկէին գերեզմանին դուռը, զարհուրեցան, որովհետեւ երբ Յիսուս յարութիւն առաւ, երկիրը շարժեցաւ եւ գերեզմանի դրան հսկայ քարը մէկընի գլորող Տիրոջ հրեշտակին փայլակի նմանող երկւոյթէն խռովեցան ու իրենց վախէն մեռելի պէս եղան: Ելը ուշքի եկան ու գերեզմանը պարապ գտան, հասկցան թէ իրենք աստուածային զօրութեան եւ գերբնական հրաշքի մը առջեւ կը պտնուէին: Ուստի քաղաք վերադառնալով քահանայապետներուն ներկայացան ու պատմեցին եղածը:

Քահանայապետները զինուորներուն վկայութիւնը լսելէ ետքն ալ մերժեցին ճշմարտութիւնը եւ իրականութիւնը մարդոցմէ ծածկելու համար կաշառեցին զինուորները ու սրտուիրեցին անոնց որ ըսեն թէ գիշերը՝ իրենց քնացած պահուն՝ Յիսուսի աշակերտները առիթէն

օգտուելով եկած ու գողցած են իրենց վարդապետին մարմինը:

Յարութեան առաջին օրը Յիսուս երեւցաւ իւզաբեր կիներուն, Պետրոս առաքեալին, Էմմաուսի ճամբորդներուն եւ երեկոյեան ալ՝ վերնատան մէջ փակուած առաքեալներուն: Անոնց ցոյց տուաւ իր ձեռքերուն եւ ոտքերուն զամուած տեղերն ու խոցուած կողը:

Այնուհետեւ քառասուն օրերու ընթացքին՝ մինչեւ իր համբարձումը Յիսուս յաճախ երեւցաւ իր աշակերտներուն. ցուցմունքներ տուաւ անոնց՝ հետազային իրենց կատարելիք աւետարանական քարոզութեան եւ առաքելական գործունէութեանց մասին, ու ըսաւ. «Գացէ՛ք ամբողջ աշխարհ եւ քարոզեցէ՛ք աւետարանը բոլոր հեթանոսներուն»: «Ինչպէս Հայրը զիս դրկեց, ես ալ ձեզ կը դրկեմ: Գացէ՛ք ուրեմն, աշակերտ դարձուցէ՛ք բոլոր ազգերը. մկրտեցէ՛ք զանոնք Հօր եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Սորվեցուցէ՛ք անոնց պահել այն ամէնը, ինչ որ պատուիրեցի ձեզի. եւ տեսնուիք եւ ձեզի հետ եմ բոլոր օրերը՝ մինչեւ աշխարհի վախճանը»:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Ինչո՞ւ համար Յիսուս յանձն առաւ խաչուիլ:
- 2) Հրեաներ կրցա՞ն յանցանք մը գտնել Յիսուսի վրան:
- 3) Կայիափա քահանայապետը ինչո՞ւ համար իր հանդերձները պատեց:
- 4) Հրեաներ Պիղատոսին առջեւ ի՞նչ ամբաստանութիւն ըրին Յիսուսի մասին:
- 5) Յիսուս Պիղատոսին ի՞նչ ըսաւ իր թագաւորութեան մասին:
- 6) Պիղատոս ի՞նչ պայմաններու տակ վտեց Յիսուսի խաչելութիւնը:

7) Ի՞նչ դեպքեր պատահեցան Յիսուսի խաչելութեան ատեն:

8) Երուսաղէմի տաճարին Սրբութիւն Սրբութեանց սրահէն ներս ո՞վ միայն կրնար մտնել, ե՞րբ եւ ինչպէ՞ս:

9) Տաճարի վարագոյրին վերէն վար երկուքի նեղ-
փուխը ի՞նչ քանի նշանակ էր:

10) Որո՞նք կատարեցին Յիսուսի թաղումը:

11) Ի՞նչ դեպքեր պատահեցան Յիսուսի յարութեան ատեն:

12) Հրեայ ֆահանայապետները ի՞նչ ըրին եւ ի՞նչ պատուիրեցին զինուորներուն:

13) Յիսուս իր յարութենէն ետք որո՞նց երեւցաւ:

14) Յիսուս երկինք համբառնալէ առաջ ի՞նչ պատուիրեց իր աշակերտներուն:

ԺԳ. Դաս

Քրիստոսի Տասներկու Առաքեալները

Հին Ուխտի շրջանին մարգարէները եղան Աստուծոյ խօսքին պատգամախօսները Իսրայէլի ազգին համար: Իսկ Նոր Ուխտի քարոզիչներն ու աւետարանիչները եղան առաքեալները, որոնք Յիսուս Քրիստոսի կողմէ զրկուեցան աշխարհի բոլոր ազգերուն՝ զանոնք լուսաւորելու համար:

Յիսուսի առաքեալները Իսրայէլի ազգին խոնարհ դասին զուակներն էին: Անոնց մէկ մասը ձկնորսներ եւ ումանք ալ իրենց առօրեայ ապրուստը ճակտի քրտինքով վաստկող պարզ մարդիկ էին: Իրենց մաս կը կազմէր նաեւ մաքսատան պաշտօնեայ Ղեւին որ ընդառաջած էր Յիսուսի հրաւերին եւ կոչուած Մատթէոս:

Առաքեալները ուսման բարձր մակարդակ չունէին, սակայն ուշադրութեամբ հետեւած էին Հին Կտակարանի պատգամներուն, որոնք Շաբաթ օրերուն կը կարդացուէին ժողովարաններուն մէջ: Նախանձախնդիր էին իրենց կրօնական եւ ազգային օրէնքներուն: Անոնցմէ ումանք հետեւած էին Յովհաննէս Մկրտիչի ուսուցումներուն եւ ազդուած անոր քարոզներէն: Բոլորն ալ սպասող էին Փրկչի Մեսիայի յայտնութեան եւ Անոր միջոցաւ Իսրայէլի ազգին փրկութեան: Պատրաստ էին Մեսիայի թագաւորութեան հաստատումին համար իրենց անձր ի սպաս զննելու:

Բարեդէպ օր մը, Յովհաննէս Մկրտիչի աշակերտներէն Անդրէաս եւ իր ընկերը իրենց վարդապետէն վկայութիւն առին թէ Յիսուս Նազովրեցին սպասուած Փրկչի Մեսիան էր, որ պիտի վերցնէր աշխարհի մեղքը: Անմիջապէս հետեւեցան Յիսուսի եւ փափաք յայտնեցին աշա-

կերտիլ իրեն: Յաջորդ օր Անդրէաս իր եղբայրը՝ Սիմոնն ալ առաջնորդեց նորայայտ Մեսիային: Յիսուս Սիմոնին զօրաւոր հաւատքը տեսնելով զայն անուանեց Պետրոս որ կը նշանակէ՝ վէճ, ժայռ:

Անոնցմէ ետք Յիսուս գտաւ Փիլիպպոս անունով երիտասարդ մը ու զայն ալ կանչեց իրեն աշակերտելու: Փիլիպպոս իրեն ուղղուած հրաւէրը ընդունելէ վերջ իր կարգին զնաց ու կանչեց իր բարեկամներէն՝ Նաթանայէլը եւ զայն ներկայացուց Յիսուսին:

Յիսուսի աշակերտեցան նաեւ Սիմոնի ընկերներէն Յակոբոս Զեբեդեան եւ անոր եղբայրը՝ Յովհաննէս: Հետագային Յիսուս ուրիշներ ալ կանչեց եւ ունեցաւ տասներկու աշակերտներ, որոնք անմիջական գործակիցներ պիտի ըլլային իրեն՝ իր մեսիական գործունէութեան ընթացքին: Իսկ իր յարուստներէն ետքն ալ պիտի դառնային առաջնախմբի՝ աշխարհի ամէն կողմերը երկինքի արքայութեան աւետարանը քարոզելու առաքուածներ:

Առաջնախմբի կը նշանակէ պաշտօնական մեծ գործի մը համար զրկուած բանազնաց, պատգամախօս կամ զեսպան: Յիսուս իր տասներկու աշակերտները առաքելէ առաջ անոնց իշխանութիւն տուաւ քարոզելու, հիւանդները օծելու եւ բժշկելու, այսահարներէն շար ոգիները հանելու եւ խոստովանող մեղաւորները իրենց մեղքերէն արձակելու:

Յիսուսի տասներկու առաքեալներն էին՝ Սիմոն-Պետրոս, Յովհաննէս, Յակոբոս Զեբեդեան, Անդրէաս, Փիլիպպոս, Բարթոլոմէոս (Նաթանայէլ), Թովմաս, Մատթէոս, Յակոբոս Ալիքեան, Թադէոս, Սիմոն Կանանացի եւ Յուդա Իսկարիովտացի:

Առաքեալները երեք տարի պտրտեցան Յիսուսի հետ: Տեսան անոր հրաշքները, լսեցին անոր պատգամները եւ քարոզած սիրոյ նոր պատուիրանը: Յիսուս դաստիարակեց

զանոնք իր ուսուցումներով: Յայտնեց անոնց իր առաքելութեան նպատակը եւ իրենց կատարելիք զերը երկրի բոլոր ազգերուն լուսաւորութեան համար:

Յիսուս իր աշակերտները նախ զրկեց Իսրայէլի ազգին քարոզելու: Անոնք ետանդով լծուեցան իրենց պաշտօնին եւ քաղաքներն ու գիւղերը պտրտելով քարոզեցին որ մարդիկ ապաշխարեն իրենց մեղքերուն համար:

Առաքեալներ հաւատարմօրէն կատարեցին Յիսուսի պատուէրները եւ տէր դաժան իրենց կոչումին: Սակայն իրենց մէջէն Յուդա Իսկարիովտացին երկրի վրայ զանձեր գիւղելու ցանկութենէն տարուած՝ անձնատուր եղաւ ագա-հութեան եւ շեղեցաւ: Ան չկրցաւ իր սրտին մէջ ամեցնել Աստուծոյ խօսքին սերմերը: Արծաթսիրութիւնը մուրեցուց զինք եւ մղեց մասնելու իր վարդապետը երեսուն արծաթի փոխարէն: Ան ինկաւ իր առաքելական Աթոռէն-թէեւ զղջաց իր ըրածին վրայ, սակայն չապաշխարեց իր մեղքերուն թողութիւն ստանալու համար: այլ զնաց ինքզինք կախնց ծառէ մը, ու անձնասպան ըլլալով դարձաւ կորստեան որդի:

Տասնմէկ առաքեալները մինչեւ Գեթսեմանի հետեւեցան Յիսուսի. սակայն հոն տկարացան, թմրեցան ու քնացան եւ չկրցան ճայնակցիլ իրենց սիրելի վարդապետին տազնապալի վայրկեաններու աղօթքին: Իսկ անոր ձերբակալութենէն ետքն ալ ցրուեցան եւ հրեաներու զայրոյթէն վախնալով չուզեցին երեւիլ ու ճանչցուիլ որպէս աշակերտ Յիսուսի:

Վերջին ընթրիքի ատեն կատարուած դէպքերն ու Յիսուսի արտայայտած խօսքերը անակնկալի բերած էին աշակերտները: Իսկ Գեթսեմանի մէջ իրենց վարդապետին ձերբակալութիւնը բոլորովին շփոթեցուց զիրենք: Անոնք ալ մինչեւ այդ պահը ուրիշներու նման կ'երեւակայէին մօտ օրէն ականատես ըլլալ Երուսաղէմի մէջ Յիսուսի հաստատելիք հզօր թագաւորութեան, եւ Անոր

Երուսաղէմ մուտքի ատեն ժողովուրդին կողմէ կատարուող ցնծութեան աղաղակներուն թողած տպաւորութեան ներքեւ պահ մը յուսադրուած էին թէ շուտով պիտի կարենային տեսնել իրենց վարդապետը թագաւորական փառքի մէջ: Սակայն վրայ հասնող զէպքերը հակառակ արդիւնք ցոյց տուած էին եւ Յիսուս թագաւորական գահու վրայ բազմելու տեղ առաջնորդուած էր զէպի Գողգոթա՝ խաչի անարգ մահուան:

Առաքեալները տակաւին ի վիճակի չէին հասկնալու չին կտակարանի մարգարէական խօսքերը, որոնք կը յայտնէին թէ Քրիստոս պիտի չարչարուէր ու իր սուրբ արիւնը թափէր մարդոց փրկութեան համար եւ ապա յարութիւն առնէր: Անոնք դառնապէս լացին ու ողբացին իրենց սիրելի վարդապետին կրած տառապանքին ու մահուան համար: Պահ մը յուսահատեցան եւ կարծեցին թէ ամէն ինչ վերջացած էր: Հրեաներու վախէն պահուրտեցան՝ իրենց վրան գոցելով դռներն ու պատուհանները: Այնքան շշմած էին, որ չկրցան վերջիչել Յիսուսի այն խօսքը, թէ ինք պիտի խաչուէր, մեռնէր, թաղուէր եւ երրորդ օրը յարութիւն առնէր:

Առաքեալները սթափեցան ա՛յն ատեն միայն, երբ փակ սենեակին մէջ յանկարծ յայտնուեցաւ յարուցեալ վարդապետը. ցոյց տուաւ իրենց իր գամուած ձեռքերուն, ոտքերուն եւ խոցուած կողին վէրքերուն նշանները ու պատգամեց մահուան վրայ իր տարած յաղթանակը:

Այնուհետեւ Յիսուս քառասուն օրերու ընթացքին յաճախ երեւցաւ իր առաքեալներուն եւ այլ հաւատացեալներու, որոնք իրեն անմիջական հետեւորդներ եղած էին իր երկրաւոր կեանքի ընթացքին:

Քառասուներորդ օրը Յիսուս դարձեալ երեւցաւ տասնըմէկ աշակերտներուն եւ զանոնք Երուսաղէմէն դուրս՝ Զիթենեաց լեռը հանեց: Պատուիրեց անոնց որ Երուսաղէմէն չհեռանան, այլ՝ սպասեն Սուրբ Հոգւոյն գալստեան ու հոքը սկսին առաքելական քարոզութեան՝ նախ Երուսաղէմի մէջ եւ ապա աշխարհի ամէն կողմերը: Յիսուս իր

պատուէրները տալէ վերջ սկսաւ օրհնել զանոնք. եւ մինչ կ'օրհնէր, յանկարծ իր ոտքերը երկրէն վեր բարձրացան ու ինք անոնց աչքին առջեւ երկինք համբարձաւ:

Տասնմէկ առաքեալները Զիթենեաց լեռնէն իջնելով գացին վերնատունը: Հոն այլ հաւատացեալներու, Յիսուսի մօր՝ Մարիամի եւ ուրիշ բարեպաշտ կիներու հետ միասին՝ շուրջ հարիւր քսան հոգի, աղօթքի մէջ եղան եւ սպասեցին Սուրբ Հոգւոյն գալստեան, որ Յիսուս խոստացած էր իրենց զրկել:

Այդ օրերուն առաքեալներն ու իրենց հետ եղողները ներկաներու մէջէն ընտրեցին Յուստոսը եւ Մատթիան, ու որոշեցին անոնցմէ մէկը Յուդա Իսկարիոժտացիին տեղ առաքեալներու դասին մէջ առնել: Ուստի աղօթելով անոնց վրայ վիճակ ձգեցին. եւ վիճակը Մատթիային ելլելով՝ անցաւ առաքեալներու դասին մէջ:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

1) Որո՞նք էին Հիմ Ուխտի շրջանի պատգամախօսները:

2) Որո՞նք եղան Նոր Ուխտի քարոզիչները եւ ո՞ր անտարանեցին:

3) Ի՞նչ դիրքի տէր մարդիկ էին առաքեալները:

4) Ի՞նչ կը նշանակէ առաքեալ:

5) Յիսուսի տասներկու առաքեալներուն անունները կրնա՞ս տալ:

6) Յիսուս ի՞նչ բաներ ընելու իշխանութիւն տուաւ առաքեալներուն:

7) Ո՞ր առաքեալը շնորհեցաւ իր կոչումէն եւ ի՞նչ ըրաւ:

8) Յիսուսի ձերբակալութենէն ետք տասնմէկ աշակերտները ի՞նչ վիճակի մատնուեցան:

9) Յարուցեալ Յիսուս առաքեալներուն երեւցալով ի՞նչ պատգամեց:

10) Յիսուս համբառնալէ առաջ ի՞նչ պատուիրեց իր աշակերտներուն:

11) Յուդա Իսկարիովտացիին տեղ ո՞վ անցաւ առաքելալներու դասին մէջ:

ԺԴ. Դաս

Սուրբ Հոգիին Էջըը Եւ Առաքելներուն Քարոզութիւնը

Համբարձման լեռնէն իջնելու ատեն առաքելները վերջնականապէս հասկցած էին թէ Յիսուս Քրիստոսի թագաւորութիւնը երկրային չէր, այլ՝ երկնային: Այլեւ ըմբռնած էին թէ ինչո՞ւ իրենց Վարդապետը կամաւորապէս յանձն առած էր խաչին վրայ մեռնիլ եւ ապա յարութիւն առնել: Լիովին զիտակից էին իրենց առաքելական պաշտօնին վեհութեան: Միեւնոյն ատեն ալ կը զգային իրենց մարդկային տկարութիւնը՝ դիմագրաւելու աւետարանի քարոզութեան թշնամիներուն յարուցանելիք հալածանքները: Սակայն յուսով կը սպասէին Յիսուս Քրիստոսի խոստումին թէ իրենց պիտի զրկէր ամենազօր Սուրբ Հոգին որ զիրենք պիտի սրբէր, զօրացնէր, լուսաւորէր, մխիթարէր, ոգեւորէր, լեզու հանէր եւ առաջնորդէր: Ուստի վերնատան մէջ հաւաքուած բազմութեան հետ միատեղ անդադար կ'աղօթէին Սուրբ Հոգին ընդունելու եւ անոր շնորհներուն արժանանալու ակնկալութեամբ:

Քրիստոսի Համբարձումէն տասը օր ետք, Պենտէկոստէի* տօնին առթիւ մինչ առաքելներն ու հաւատացեալներու բազմութիւնը աղօթքի կեցած էին, յանկարծ երկինքէն սաստկաշունչ հովի ձայնին պէս հնչիւն մը լսուեցաւ ու ամբողջ վերնատունը լեցուց եւ ցնցեց: Բոլոր ներկաները լեցուեցան Սուրբ Հոգիով եւ անոր զօրութեամբ սկսան զԱստուած փառաւորել զանազան լեզուներով:

*) Պենտէկոստէ կը նշանակէ յիսուներորդ: Հրեաներ Ձատիկէն յիսուն օր ետք կը կատարէին Քունձքի Երախայրեաց տօնը:

Առաքեալներն ու անոնց միաբանակիցները Սուրբ Հոգիին գորութիւնը ստանալէ ետք չկրցան պարփակուիլ վերնատան մէջ եւ ոգեւորութեամբ դուրս ելան բարձրաձայն արտասանելով Աստուծոյ մեծամեծ խօսքերը այլ ազգերու բարբառներով:

Կատարուող նորօրինակ դէպքին լուրը ցնցեց Երուսաղէմը եւ շուտով մեծ բազմութիւն մը հաւաքուեցաւ առաքեալներուն եւ անոնց միաբանակիցներուն շուրջ, որոնք տակաւին կը շարունակէին զԱստուած բարեբանել:

Հետաքրքիր բազմութեան մէջ կային օտար երկիրներէ Երուսաղէմ ուխտի եկած հրեաներ, որոնք այդ անուս Գալիլիացիներու բերնէն կը լսէին Աստուծոյ պատգամները իրենց բնակած երկիրներու բարբառներով, ու կը զարմանային եւ կը սքանչանային եղած հրաշալի երեւոյթին վրայ: Սակայն Երուսաղէմաբնակ հրեաներու մէջէն ատեւապա մարդիկ առաքեալներն ու անոնց ընկերակիցները ծագելով կ'ըսէին թէ անոնք գինիով արբեցած են եւ անոր անգղեցութեան տակ կը խօսին եւ օտար բառեր կ'արտասանեն:

Այս թիւր խօսքերուն ի պատասխան՝ Պետրոս միւս տասնմէկ առաքեալներուն հետ միատեղ բազմութեան առջեւ ելաւ ու իր ձայնը բարձրացնելով ըսաւ.

— Ո՛վ հրեայ մարդիկ եւ դուք ամենդ որ Երուսաղէմի մէջ կը բնակիք. ձեզի յայտնի թող ըլլայ ասիկա եւ ականջ դրէք իմ խօսքերուս. ասոնք գինովցած չեն, ինչպէս կը կարծէք դուք, քանի որ դեռ օրուան երրորդ ժամն է. այլ ասիկա այն է, որ ըսուեցաւ Յովէլ մարգարէին բերնով. «Եւ ասկէ ետք, վերջին օրերուն պիտի ըլլայ որ իմ հոգիէս պիտի թափեմ ամէն մարմնի վրայ, եւ ձեր տղաքն ու աղջիկները պիտի մարգարէականան, եւ ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն, եւ ձեր ծերերն ալ՝ երազներ. եւ իմ ծառաներուս եւ աղայիս հետը պիտի մարգարէականան...»: Ո՛վ իսրայէլացի մարդիկ, Յիսուս նազովրեցիկն, Աստուծովէ ցուցուած մարդ մը՝ զօ-

րութիւններով, հրաշքներով եւ նշաններով, զոր Աստուած անոր ձեռքով ըրաւ ձեր մէջ, ինչպէս դուք գիտէք: Անիկա Աստուծոյ որոշած խորհրդովը եւ կանխագիտութեամբը մատնուած ըլլալով՝ սոիք եւ անօրէններուն ձեռքով փայտի վրայ գամելով սպաննեցիք, զոր Աստուած յարոյց:

Պետրոս նաեւ մէջբերումներ ըրաւ Սաղմոսաց գիրքին մէջ Դաւիթ թագաւորին կողմէ գրուած մարգարէական խօսքերէն՝ Քրիստոսի յարութեան մասին (ՍԱՂՄ. ԺԵ. (ԺԶ.) 10, ՃԹ. (ՃԺ.) 1): Ապա բազմութեան յայտնեց թէ իրենք Յիսուս Քրիստոսի յարութեան վկաններն են, որովհետեւ քանիցս տեսան իրենց յարուցեալ Վարդապետը:

Պետրոս առաքեալին խօսքերը խոր տպաւորութիւն ձգեցին ներկաներէն շատերուն վրայ, որոնք Աստուծոյ Օծեալ Յիսուսին խաչելութիւնը պահանջած էին Պիղատոսէն: Անոնք իրենց ըրածին վրայ զղջալով մօտեցան առաքեալներուն եւ ըսին.

— Մարդիկ, եղբայրներ, ի՞նչ ընենք:

Պետրոս առաքեալ ըսաւ.

— Ապաշխարեցէք, ու ձեզմէ ամէն մէկը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերու թողութեան համար, եւ Հոգւոյն Սրբոյ պարգեւը պիտի ընդունիք...

Այդ օր երեք հազարի չափ մարդիկ Աստուծոյ խօսքը ընդունելով դարձի եկան ու մկրտուեցան:

Այնուհետեւ առաքեալներուն ձեռքով շատ հրաշքներ եղան եւ Յիսուս Քրիստոսի հաւատացողներուն թիւը հետզհետէ սկսաւ բազմանալ Երուսաղէմի եւ Հրէաստանի այլ շրջաններուն մէջ:

Սուրբ Հոգին միշտ կ'առաջնորդէր առաքեալները եւ անոնք եռանդով կը քարոզէին Քրիստոսի կատարած փրկութեան աւետարանը (բարի լուրը): Հրեայ քահանայապետներուն յարուցած հալածանքները չկրցան կասեցնել աւետարանի քարոզութեան յառաջադասքը եւ Աստուծոյ խօսքը տարածուեցաւ նաեւ Հրէաստանէն

դուրս՝ Սամարիոյ ու Սիւրիոյ մէջ եւ հասաւ մինչեւ Անտիոք:

Հրեայ իշխանաւորները կը զարմանային անուս եւ սղէս համարուած առաքեալներուն քաջութեան եւ իմաստութեան, նամանաւանդ Սուրբ Գրոց մասին անոնց ցուցաբերած հմտութեան:

Առաքեալները չգոհացան միայն հրեայ ազգին քարոզելով: Անոնք ցրուեցան աշխարհի ամէն կողմերը ու հեթանոս ազգերն ալ հրաւիրեցին զԱստուած ճանչնալու եւ Յիսուս Քրիստոսով յաւիտենական կեանքը ժողովելու: Անոնց քարոզութեամբ բազմաթիւ երկիրներու մէջ յառաջ եկան քրիստոնեայ համայնքներ ու հիմնուեցան եկեղեցիներ: Առաքեալները այդ եկեղեցիներուն համար ձեռնադրեցին եպիսկոպոսներ, երէցներ եւ սարկաւազներ:

Առաքեալները իրենց քարոզութեանց ընթացքին շատ նեղութիւններ կրեցին, սակայն չընկճուեցան, այլ ի յայտ բերին կամքի տոկոնութիւն եւ համբերութիւն: Ուրախութեամբ եւ սրտի խաղաղութեամբ դիմաւորեցին ամէն տեսակ նախատինք ու շարժարանք՝ վստահ ըլլալով որ իրենց կողմէ ցանուած Աստուծոյ խօսքին սերմերը պիտի աճէին Տիրոջ գորութեամբ: Բացի Յովհաննէսէն, միւս տասնմէկ առաքեալները նահատակութեամբ վերջացուցին իրենց ընթացքը: Թէեւ Յովհաննէս խոր ծերութեան մէջ բնական մահով աւանդեց իր հոգին, սակայն նախապէս՝ Դոմեաթիանոս կայսեր հանած հալածանքներուն ատեն զինք նետած էին եռացած ձէթի կաթսային մէջ, բայց Աստուծոյ տնօրինութեամբ չէր մահացած: Այդ դէպքէն վերջ աքսորուեցաւ Պատմոս կղզին, ուր գրեց իր «Յայտնութիւն» գիրքը:

Տասներկու առաքեալներէն Չերեղէոսի որդին՝ Յակոբոս սուրով սպաննուեցաւ Հերովդէս Թազաւորին կողմէ:

Պետրոս առաքեալ նահատակուեցաւ Հռոմի մէջ՝ Նե-

րոն կայսեր հրամանով՝ գլխիվայր խաչուելով:

Թաղէոս եւ Բարթողոմէոս առաքեալներ սուրով ըսպաննուեցան Հայաստանի մէջ, Սանատրուկ Թազաւորին կողմէ:

Միւս առաքեալներն ալ այլեւայլ տեղերու մէջ նահատակուեցան Յիսուս Քրիստոսի անուան համար:

Առաքեալները իրենց կրած շարժարանքներով եւ թափած արիւնով կցորդ եղան Յիսուս Քրիստոսի շարժարանքներուն եւ արժանացան Անոր փառքին հաղորդակից դառնալու երկինքի մէջ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ինչո՞ւ համար առաքեալները միաբանութեամբ կ'աղօթէին վերնատան մէջ:
- 2) Վերնատան մէջ ուրիշ որո՞նք ներկայ էին ու կ'աղօթէին:
- 3) Ի՞նչ կը նշանակէ Պենտէկոստէ, եւ ո՞ր տօնին համար ըսուած է:
- 4) Պենտէկոստէի տօնին առթիւ ի՞նչ պատահեցաւ վերնատան մէջ:
- 5) Առաքեալներն ու իրենց աղօթակից բազմութիւնը վերնատունէն դուրս ելլելով ի՞նչ ըրին:
- 6) Օտար երկիրներէ որո՞նք եկած էին Երուսաղէմ:
- 7) Դուրսէն եկող ուխտաւորները առաքեալներու բերնէն ի՞նչ կը լսէին:
- 8) Երուսաղէմի հրեաներէն ոմանք առաքեալները ծաղրելով ի՞նչ կ'ըսէին:
- 9) Պետրոս առաքեալ բազմութեան առջեւ ելլելով ի՞նչ ըսաւ:
- 10) Զոյջացող հրեաները ի՞նչ ըսին առաքեալներուն:
- 11) Այդ օր քանի՞ հազարի մօտ անձեր Աստուծոյ խօսքը ընդունելով մկրտուեցան:

12) Առաքեալները հրեաներէն ետք որո՞նց քարոզեցին:

13) Ո՞ր առաքեալը եռացած ձեռքի կաթսային մէջ նետեցին:

14) Որո՞ւ կողմէ եւ ո՞ւր սպաննուեցաւ Ջերեմիայի Յակոբոս առաքեալ:

15) Պետրոս առաքեալ ո՞ւր նահատակուեցաւ եւ ինչպէ՞ս:

16) Ո՞ր երկու առաքեալները նահատակուեցան Հայաստանի մէջ:

ԺԵ. Դաս

Պօղոս՝ Հեթանոսաց Առաքեալը

Պօղոս առաքեալ նախապէս կոչուած է Սօղոս կամ Սաւուղ: Ան ծնած ու մեծցած էր Կիլիկիոյ Տարսոն քաղաքին մէջ: Այդ օրերուն Յունա-Հռոմէական քաղաքակրթութեան կեդրոններէն մէկն էր Տարսոն քաղաքը: Նաեւ Հռոմէական կայսրութեան այն բացառիկ քաղաքներէն էր, որուն մէջ ծնող անհատներ կը ստանային Հռոմէական Քաղաքացիութիւն եւ կը կոչուէին Հռոմէացի: Անոնք բացառիկ մենաշնորհներ կը վայելէին կայսրութեան սահմաններէն ներս: Այլ քաղաքներու բնակիչներ Հռոմէական քաղաքացիութիւն ձեռք ձգելու համար բացառիկ ծառայութիւն մը մատուցած պէտք էր ըլլային կայսրութեան: Պօղոս առաքեալ Հռոմէական քաղաքացիութիւն ստացած էր Տարսոնի մէջ ծնած ըլլալուն համար:

Սօղոս Տարսոնի մէջ տիրացած էր յունարէն եւ լատիներէն լեզուներուն: Մանօթ էր այդ ժամանակի զանազան փիլիսոփայութեանց եւ այլեւայլ գիտութիւններուն: Սորված էր նաեւ վրանագործութեան արհեստը՝ ի պահանջել հարկին իր ապրուստը հոգալու համար:

Սօղոս կը սերէր Բենիամինի տոհմին պատկանող յայտնի ընտանիքէ մը: Իր հայրը աւանդապահ փարիսեցի ըլլալով զինք դաստիարակած էր կրօնական շունչով:

Սօղոս հմուտ էր նաեւ երրայերէնի եւ կը ջանար լրիւ գործադրել Մովսիսական օրէնքներն ու պատուիրանները: Իր հօր նման յարած էր փարիսեցիներու ազանդին:

Սօղոս իր անգալին եւ կրօնական ուսումը կատարելագործելու համար գացած էր Երուսաղէմ եւ աշա-

կերտած հրեայ օրինաց վարդապետ հռչակաւոր Գամաղիէլին, եւ ինք ալ դարձած էր նուիրեալ րարբի մը հրեայ ազգին համար: Իր ազգին ու կրօնքին հանդէպ սնուցած նախանձաւորութիւնն ու բծախնդիր օրինապահութիւնը ուշադրութիւնը գրաւած էին հրեայ քահանայապետներուն: Կ'ենթադրուի որ իր երիտասարդ տարիքին անգամ ընտրուած էր Երուսաղէմի հրէական սինոդին:

Սօղոս յստակ եւ ճշգրիտ գաղափար մը չունէր Յիսուս Քրիստոսի փրկագործութեան մասին: Ինք չէր տեսած Յիսուսը: Անոր խաչելութեան եւ յարութեան օրերուն Երուսաղէմի մէջ չէր եղած: Յիսուսի մասին իմացած էր անոր հակառակորդներէն: Կը կարծէր թէ Ան խաբեբայ մը եղած էր ու ինքզինք Աստուծոյ Որդի կոչած՝ հրեայ ազգը իր օրէնքներէն շեղելու համար: Այն համոզումը ունէր թէ Յիսուս յարութիւն չէր առած, այլ անոր աշակերտները իրենց վարդապետին մարմինը գիշերով գողցած էին գերեզմանէն եւ ապա յայտարարած՝ թէ Ան յարութիւն առած էր:

Սօղոս տեղեակ չէր հրեայ քահանայապետներու կամակորութեան եւ նենգամտութեան: Կը կարծէր թէ անոնք Աստուծոյ օրէնքներուն նախանձախնդիր եւ ճշմարտութեան հետամուտ առաջնորդներ էին: Ուստի կը հետեւէր անոնց ցուցմունքներուն եւ Յիսուսի առաքեալներն ու անոնց հետեւորդները հալածելով կը կարծէր Աստուծոյ առջեւ հաճելի գործ կատարած ըլլալ:

Առաջին անգամ Սօղոս երեւցաւ Ստեփանոս սարկաւազի նահատակութեան ստեղծողին՝ որպէս կամակից անոր սպանութեան: Այնուհետեւ հրապարակ իջաւ Յիսուս Քրիստոսի հաւատացողներուն դէմ ահ ու սարսափ սփռող թշնամիի դերով: Ան հրեայ քահանայապետներու հրամանով հաւատացեալներու տուններէն ներս կը մտնէր, կը ձերբակալէր զանոնք ու չարչարանքի կ'ենթարկէր, որպէսզի ուրանային Յիսուս Քրիստոսը: Երուսաղէմի մէջ իր կատարած խժուժութիւններով չքաւարարուելով՝

ուզեց երթալ Դամասկոս եւ այնտեղի հաւատացեալներն ալ Երուսաղէմ բերել դատուելու համար: Իր մտադրութիւնը իրագործելու համար հրեայ քահանայապետներէն յանձնարարական թուղթեր առաւ ու ճամբայ ելաւ: Սակայն մինչ Դամասկոսի մօտեցած էր, ճամբուն վրայ երկինքէն շողացող գերբնական լոյս մը զգեստնեց Սօղոսը եւ անոր աչքերը կուրցուց: Լոյսին մէջէն ձայն մը ըսաւ. «Սօղոս, ինչո՞ւ կը հալածես զիս»: Սօղոս անդրադարձաւ իր ընթացքին սխալ ըլլալուն. խոնարհեցաւ Յիսուսի առջեւ ու աղաղակեց. «Տէ՛ր ի՞նչ կ'ուզես որ ընեմ»: Յիսուս հրամայեց իրեն. «Ելի՛ր ու քաղաք մտի՛ր, եւ հոն բեգի պիտի ըսուի թէ ինչ պիտի ընես»:

Սօղոս հնազանդեցաւ երկնային ձայնին ու մտաւ Դամասկոս: Ծոմապահութեամբ ապաշխարեց եւ խնդրեց Տիրոջ ողորմութիւնը: Անանիայի աղօթքով վերստացաւ իր տեսողութիւնը: Մկրտուեցաւ, սրբուեցաւ եւ ստացաւ Սուրբ Հոգւոյն շնորհքը: Դարձաւ նոր մարդ, նոր արարած, եւ եղաւ ընտրեալ անօթ Յիսուս Քրիստոսի համար:

Սօղոս մի քանի օրեր Դամասկոսի մէջ մնալէ ետք զնաց Արաբիա. հոն անցուց ինքնամոկոկոմի շրջան մը: Մի քանի տարի ետք վերադարձաւ Դամասկոս եւ հրեաներու ժողովարաններուն մէջ քարոզեց Յիսուս Քրիստոսը՝ զարմացնելով ունկնդիրները, որոնք իրարու հարց տալով ըսին. «Այս չէ՞ր այն մարդը որ Երուսաղէմի մէջ կը հալածէր Յիսուսը Տէր եւ Փրկիչ դաւանողները եւ հոս ալ եկեր է զանոնք կապելով քահանայապետներուն տանելու»: Սօղոսին հակառակեցան Դամասկոսի մուսուանդ հրեաները եւ որոշեցին սպաննել զինք ու դարանակալ սպասեցին քաղաքի պարիսպներու դռներուն առջեւ: Բայց հաւատացեալ եղբայրները հրեաներուն դաւադրութեան տեղեակ մնալով, զիչեր ատեն, գաղտնօրէն Սօղոսը զամբիւղով պարիսպէն վար իջեցուցին եւ ճամբեցին:

Սօղոս Դամասկոսէն փախչելէ ետք Երուսաղէմ զնաց եւ ուզեց յարիլ հաւատացեալներուն, սակայն անոնք

վախցան եւ զգուշացան զինք իրենց մէջ ընդունելու: Մինչ այդ առաքելներու անմիջական գործակիցներէն Բառնաբաս տեղեակ ըլլալով Սողոսի դարձին, զինք ներկայացուց Յակոբոս Տեառնեղբայր առաքելին եւ միւս եղբայրներուն, ու պատմեց անոնց Դամասկոսի ճամբուն վրայ Սողոսի ունեցած տեսիլքը:

Սողոս Երուսաղէմի մէջ մնաց միայն տասնհինգ օր, որովհետեւ երբ ինք Աստուծոյ տաճարին մէջ աղօթքի կեցած էր, Յիսուս դարձեալ երեւցաւ իրեն եւ ըսաւ. «Անապարէ՛, Երուսաղէմն ելիք, վասնզի ինձի համար բուրբած վկայութիւնդ պիտի չընդունին... Դնա՛, ես քեզ հեռաւոր հեթանոսներուն պիտի ղրկեմ»:

Արդարեւ Երուսաղէմի մուկեռանդ հրեաներն ալ հակաճառելով չընդունեցին Սողոսին վկայութիւնը եւ ուզեցին զինք սպաննել: Ուստի հաւատացեալ եղբայրները Սողոսը կեսարիա տարին եւ անկէ ալ Տարսոն ղրկեցին:

*
**

Երուսաղէմի մէջ եղած հալածանքներուն պատճառով հաւատացեալներէն շատեր Անտիոք հաստատուած եւ տեղւոյն հրեայ գաղութին քարոզած էին Յիսուս Քրիստոսը, ու մեծ թիւով մարդիկ հաւատքի գալով մկրտուած էին:

Երուսաղէմի եկեղեցին Բառնաբասը Անտիոք ղրկեց նորադարձները հաւատքի մէջ զօրացնելու եւ կազմակերպելու համար: Բառնաբաս նոր խանդ ու եռանդ տուաւ անոնց իր քարոզներով եւ ուսուցումներով: Ժամանակ մը ետք Բառնաբաս Տարսոն գնաց եւ Սողոսը Անտիոք բերաւ Աստուծոյ խօսքին քարոզութիւնը առաւել զօրացնելու մտադրութեամբ:

Սողոս եռանդով լծուեցաւ իր նոր պաշտօնին եւ արդիւնաւոր գործունէութիւն ցուցաբերեց: Բառնաբասի եւ Սողոսի կողքին կային նաեւ այլ վարդապետներ, որոնք կը մեկնէին եւ կ'ուսուցանէին Աստուծոյ խօսքը: Օր մը, մինչ բոլորը ծոմապահութեամբ պաշտամունք կը կատարէին, Սուրբ Հոգին ըսաւ իրենց. «Ջատեցէ՛ք ինձի Բառնաբասն ու Սողոսը այլ գործին համար որուն կանչած եմ զանոնք»:

Այդ պատգամին վրայ Անտիոքի եկեղեցիին Երէցները Բառնաբասին ու Սողոսին վրայ ձեռք դնելով աղօթեցին ու զանոնք յանձնեցին Սուրբ Հոգիին առաջնորդութեան:

Յետ ձեռնադրութեան Սողոս անգամ մը եւս նոյն անունով յիշուելէ ետք այնուհետեւ կոչուած է Պօղոս: Հաւանաբար ձեռնադրութեան տեսն արուած կրնայ ըլլալ այդ անունը իրեն: Այստեղ Անտիոքի մէջ էր որ Քրիստոսի հետեւորդները առաջին անգամ Քրիստոնեայ կոչուեցան:

Պօղոսի առաքելական եռուն գործունէութիւնը կը սկսի իր ձեռնադրութենէն ետք: Բառնաբասի հետ կը ձեռնարկէ աւետարանական քարոզութեան: Միասին կ'այցելեն Կիպրոս. անկէ կ'անցնին Կիլիկիա եւ Ասիա (այժմու Փոքր Ասիան): Իրենց այցելած քաղաքներուն մէջ առաջին հերթին կ'երթան հրեաներու ժողովարանները ու Խորայէլի ազգի զաւակներուն կը պատգամեն Աստուծոյ խօսքը եւ Քրիստոսի բերած փրկութիւնը: Կ'աւետարանեն նաեւ տեղւոյն հեթանոսներուն: Կը կատարեն բժշկութիւններ եւ հրաշքներ Յիսուս Քրիստոսի անունով: Թէ՛ հրեաներէն եւ թէ՛ հեթանոսներէն շատեր հաւատքի կու գան ու մկրտուելով քրիստոնեայ կը դառնան:

Պօղոս եւ Բառնաբաս կը կազմակերպեն նորադարձ քրիստոնեայ համայնքները: Կը հիմնեն եկեղեցիներ ու անոնց վրայ կը ձեռնադրեն Երէցներ: Մի քանի տարուան բեղմնաւոր շրջան մը բոլորելէ ետք կը վերադառնան Անտիոք եւ զեկուցում կու տան տեղւոյն եկեղեցիին՝ իրենց կատարած գործունէութեան մասին:

ժամանակ մը ետք Պողոս կը ձեռնարկէ առաքելական երկրորդ ճամբորդութեան մը Շիղայի հետ: Անտիոքէն ելլելով կ'այցելէ Կիլիկիոյ եւ Ասիոյ մէջ հիմնած իր նախկին եկեղեցիները ու կը խրախուսէ հաւատացեալները: Ասիոյ այլեւայլ քաղաքները պտրտելով կը հասնի մինչեւ Տրովադա ու անկէ կ'անցնի Մակեդոնիա եւ ապա Յունաստանի զանազան քաղաքները: Փիլիպպէի, Թեսաղոնիկէի, Աթէնքի, Կորնթոսի եւ այլ քաղաքներու մէջ եռանդով կը քարոզէ ու կը հիմնէ եկեղեցիներ: Հազարաւորներ կը լուսաւորուին Աստուծոյ խօսքով եւ իրենց մեղսալից կեանքը ձգելով կը հետեւին սրբութեան:

Պողոսի վերջին կայանը կ'ըլլայ Կորնթոս: Ատեն մը հոն մնալէ եւ հաւատացեալները կազմակերպելէ ետք ծովու ճամբով կը վերադառնայ Պաղեստին: Կը հանդիպի Երուսաղէմ. Կողջունէ տեղւոյն Եկեղեցին ու անկէ կը մեկնի Անտիոք:

Պողոս առաքեալ կը կատարէ երրորդ ճամբորդութիւն մը եւս: Դարձեալ կ'երթայ Կիլիկիա, Կապադովկիա, Ասիա, Մակեդոնիա, Աքայիա եւ այլ վայրեր, ու կը քարոզէ: Բիւրաւոր հեթանոսներ դարձի կու գան եւ կը հրաժարին կուրքերու պաշտամունքէն: Իկոնիոն, Եփեսոս, Փիլիպպէ, Թեսաղոնիկէ, Կորնթոս, Կողոսս եւ այլ քաղաքներ կը դառնան քրիստոնէական կեդրոններ:

Պողոս իր առաքելական երրորդ ճամբորդութիւնը կատարելէ կը վերադառնայ Երուսաղէմ: Հոն տաճարին մէջ յարձակումի կ'ենթարկուի մոլեռանդ հրեաներու կողմէ, որոնք զինք տաճարէն դուրս հանելով կը սկսին անխնայ ծեծել. սակայն քաղաքին հազարապետը իր զինուորներով կը հասնի եւ անոնց ձեռքէն կ'ազատէ զինք:

Հրեաներ դաւադրութիւն կը սարքեն եւ կ'ուզեն Պողոսը սպաննել ատեանի մէջ դատուելու ատեն: Հազարապետը ապահովութեան համար զինուորներու հսկողութեամբ զիչերով զինք կը ղրկէ Կեսարիա՝ Փելիքս կուսակալին քով:

Հրեայ իշխանաւորները իրենց քահանայապետին գլխաւորութեամբ կը դիմեն Փելիքս կուսակալին եւ կ'ամբաստանեն Պողոսը որպէս խռովարար: Կուսակալը խնդիրը քննելով թէեւ կը հաստատէ Պողոս առաքելին անմեղութիւնը, սակայն ազատ արձակելու համար կաշառք կ'ակնկալէ ու երկու տարի բանտին մէջ կը պահէ զայն:

Երբ որ Փելիքսին տեղ Փեստոս կուսակալ կը նշանակուի, հրեաներ դաւադրութիւն մը կը սարքեն Պողոսը սպաննելու, եւ իրենց դիտաւորութիւնը յաջողցնելու համար կը դիմեն նոր կուսակալին ու անոր համամտութիւնը կ'առնեն զանիկա Երուսաղէմի հրէական ատեանին մէջ դատելու: Պողոս առաքեալ հրեաներուն կողմէ իր անձին դէմ լարուած դաւադրութիւնը հասկնալով՝ կ'օգտագործէ իր ունեցած հռոմէական քաղաքացիութեան իրաւունքը ու կը մերժէ Երուսաղէմ երթալ եւ կը բողոքէ Հռոմի կայսեր՝ իրեն դէմ եղած անիրաւութեան համար ու կը պահանջէ դատուիլ կայսեր ատեանին առջեւ: Պողոս առաքեալի բողոքին վրայ Փեստոս կուսակալը կը ստիպուի զայն ղրկել Հռոմ՝ կայսեր ատեանին առջեւ դատուելու, եւ չի կրնար զոհացում տալ հրեաներուն:

Պողոս առաքեալ հարիւրապետի մը հսկողութեամբ ուրիշ բանտարկեալներու հետ կ'ուղարկուի Հռոմ: Դժնդակ ճամբորդութիւն մը կ'ունենայ: Կը հանդիպի նաւաբեկութեան: Ի վերջոյ կը հասնի Հռոմ: Հոն տեսակցութիւններ կ'ունենայ տեղւոյն հրեայ գաղութին ներկայացուցիչներուն հետ եւ անոնց կը յայտնէ իր Հռոմ գալուստն պատճառը, ու կը քարոզէ Յիսուս Քրիստոսը:

Իր կարգին կը ներկայանայ կայսեր ատեանին եւ իր անմեղութիւնը փաստելով ազատ կ'արձակուի բանտէն:

Հռոմի մէջ ալ կ'ունենայ առաքելական մեծ գործունէութիւն: Հետագային կ'երթայ նաեւ Սպանիա ու կ'աւետարանէ:

Երբ նորէն Հռոմ կը վերադառնայ, այդ օրերուն կը

սկսին ներո՞ կայսեր հալածանքները քրիստոնեաներու դէմ: Պօղոս առաքեալն ալ կը ձերբակալուի: Կայսեր ատեանին առջեւ քաջարար կը վկայէ Յիսուս Քրիստոսի համար եւ ապա ներոնի հրամանով կը զլիսատուի ու կ'ընդունի նահատակութեան փառաց պսակը Հռոմի մէջ:

Պօղոս եղաւ Քրիստոսի Երեւոսաւաներորդ առաքեալը: Ան մեծ նպաստ բերաւ Աստուծոյ խօսքին քարոզութեան, նամանաւանդ Հեթանոսներու մէջ եւ կոչուեցաւ «Հեթանոսաց Առաքեալ»: Իր առաքելական քարոզութեանց միջոցին շատ նեղութիւններ կրեց՝ թէ՛ հրեաներէն եւ թէ՛ Հեթանոսներէն:

Պօղոս առաքեալ Սուրբ Հոգիին ներշնչումով գրած է տասնչորս թուղթեր (նամակներ), որոնք ուղղուած են զանազան քաղաքներու եկեղեցիներուն եւ կարգ մը պատասխանատու անձնաւորութիւններու: Իր գրած թուղթերը դասաւորուած են Նոր Կտակարանի այլ գիրքերու շարքին ու մաս կը կազմեն Աստուծոյ խօսքին:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Սօղոս ո՞ր ծնած եւ մեծցած է:
- 2) Տարսոն քաղաքը ի՞նչ բանով նշանաւոր էր:
- 3) Սօղոս հրեական ո՞ր ազանդին յարած էր:
- 4) Սօղոս որո՞ւն աշակերտած է Երուսաղէմի մէջ:
- 5) Սօղոս ինչո՞ւ համար կը հալածէր Յիսուսի հաւատացեալները:
- 6) Սօղոս ինչո՞ւ համար Դամասկոս կ'երթար:
- 7) Դամասկոսի ցամբուն վրայ ո՞վ երեւցաւ իրեն:
- 8) Որո՞ւ աղօթքով քացուեցան Սօղոսին աչքերը:
- 9) Սօղոս Դամասկոսէն ինչպէ՞ս փախաւ:
- 10) Երուսաղէմի տաճարին մէջ Յիսուս Սօղոսին երեւցալով ի՞նչ րսաւ:
- 11) Ո՞վ Անտիոք տարաւ Սօղոսը:

12) Սուրբ Հոգին ի՞նչ հրամայեց Սօղոսի եւ Բառնաբասի համար:

13) Իր ձեռնադրութենէն ետք Սօղոս ի՞նչ անունով կը յիշուի:

14) Պօղոս Աւետարանը քարոզելու համար քանի՞ ցամբորդութիւններ կատարեց:

15) Հրեաներ Պօղոսը տաճարին մէջ բռնելով ի՞նչ ըրին:

16) Ո՞վ ազատեց Պօղոսը հրեաներու ձեռքէն:

17) Պօղոս իր ազատութիւնը ձեռք ազելու համար որո՞ւ քողոքեց եւ ո՞ւր գնաց:

18) Պօղոս առաքեալ ո՞ւր նահատակուեցաւ:

19) Քանի՞ թուղթեր գրած է Պօղոս առաքեալ:

Աշխարհի Լոյսն Ի Հայաստան

Յիսուս Քրիստոսի աւետարանին քարոզութենէն առաջ հայ ժողովուրդն ալ ուրիշ հեթանոս ազգերու նման հոգեւորապէս կը խարխափէր անգիտութեան խաւարին մէջ:

Մեր պապերը անտեղեակ էին երկինքն ու երկիրը ստեղծող միակ ճշմարիտ Աստուծոյ զոյութեան եւ անոր յայտնութիւններուն մասին: Սակայն տիեզերքը դիտելով, ծագող արեւուն եւ տեղացող անձրեւին բարիքները վայելելով կ'ենթադրէին թէ մարդկային միտքէն գերիվեր հոսթիւններ ու աստուածներ կային եւ անոնք յառաջ կը բերէին որոտում, կայծակ, հով, փոթորիկ, ծառերու սոսափիւն, եւայլն: Ուստի երեւակայութեամբ շինած էին անոնց արձանները՝ զանոնք պաշտելու եւ իրենց ցանկացած բաները անոնցմէ խնդրելու համար:

Ինչպէս բոլոր հեթանոս ազգերը, նոյնպէս ալ հայերը իրենց քաջարի նահապետներուն յիշատակին համար ալ կանգած էին արձաններ ու զանոնք եւս կը պաշտէին: Նաեւ իրենց դրացի ժողովուրդներու շատուածներէն ոմանց արձանները ընդօրինակած ու բերած էին Հայաստան եւ անոնց ալ կ'երկրպագէին:

Հայոց պաշտած կուռքերուն մէջ նշանաւոր էին Անահիտի, Աստղիկի եւ Վահագնի արձանները: Կը յարգուէին նաեւ Արամազդի, Միհրի, Նանէի, առլէզներու, վիշապներու եւ այլ շատուածներու կուռքերը:

Հեթանոս ժողովուրդներու կարգին հայերն ալ Աստուծոյ պատուիրաններուն անտեղեակ ըլլալով, անգիտակցաբար մէջն էին զանազան մոլութիւններու եւ մեղքերու: Երջանկութիւնը կը փնտռէին փառքի, հարստու-

թեան, կերութումի եւ հաճոյամոլութեան մէջ: Մեհեաններու քուրմերն ու քրմուհիներն ալ կ'օգտագործէին մարդոց սնահաւատութիւնը եւ իրենց կախարչութիւններով ու անպարարութիւններով կը հմայէին եւ կ'ազդեցնէին զանոնք:

Առաջին անգամ Հայաստան եկաւ Յիսուսի տասներկու աշակերտներէն Թադէոս առաքեալ եւ քարոզեց աշխարհի փրկութեան համար Քրիստոսի խաչելութիւնն ու հրաշալի յարութիւնը: Բացատրեց մեր պապերուն Աստուծոյ շնորհած թողութիւնը՝ իրենց մեղքերը խոստովանող մեղաւորներուն, ու հրաւիրեց զանոնք որ հաւատան Աստուծոյ Միածին Որդւոյն փրկագործութեան, պահեն անոր սուրբ պատուիրանները եւ ժառանգորդ դառնան երկինքի արքայութեան:

Թադէոսն ետք Հայաստան եկաւ նաեւ Բարթողոմէոս առաքեալը: Ան ալ քարոզեց Յիսուս Քրիստոսի աւետարանը:

Այս երկու առաքեալներուն քարոզութեամբ Աշխարհի Լոյսը՝ Յիսուս Քրիստոս՝ ճառագայթեց հայ հոգիներէն ներս: Շատեր հաւատացին եւ մկրտուելով քրիստոնեայ դարձան եւ թօթափեցին իրենց կոպակոտական սովորութիւնները, մոլութիւններն ու մեղքերը: Քրիստոնեայ դարձող հայերը հետեւեցան սրբութեան եւ իրենց մաքուր նկարագրով հրապուրեցին ուրիշները քրիստոնեայ դառնալու:

Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոս առաքեալները հիմնեցին Հայաստանի եկեղեցին եւ Աստուծոյ նոր հօտը հովուելու համար սարկաւազներ, երէցներ եւ Եպիսկոպոսներ ձեռնադրեցին անոր վրայ: Երկու առաքեալները եղան Հայոց առաջին լուսաւորիչները:

Օրուան թագաւորը՝ Սանատրուկ հալածանք հանեց նորադարձ քրիստոնեաներուն դէմ եւ անոնցմէ շատերը մահուան դատապարտեց. նոյնիսկ չինայեց իր աղջկան՝

Սանդուխտ կոյսին եւ իր քրոջ՝ Ոգուհի իշխանուհիին ու զանոնք ալ սպաննել տուաւ: Արքայական հրամանով նահատակուեցան նաեւ Թադէոս եւ Բարթողոմէոս առաքեալները:

Հալածանքը չկրցաւ կասեցնել քրիստոնէութեան յառաջխաղացքը Հայաստանի մէջ: Երկու լուսաւորիչ առաքեալներուն կողմէ ցանուած Աստուծոյ խօսքին սերմերը ծիլեր արձակեցին, աճեցան եւ արդիւնաւորուեցան: Անոնց մահէն վերջ Հայաստանի նորակազմ եկեղեցին ունեցաւ իր հովուապետները, որոնք վառ պահեցին Քրիստոսի աւետարանին ջահը: Ս. Թադէոս առաքեալէն ետք Հայ Եկեղեցւոյ հովուապետութիւնը յաջորդաբար ստանձնած են Ջաֆարիա, Ջեմեմոս, Ատրնեքսեհ, Մուշէ, Ծաիէն, Ծաւարշ, Ղեւոնդիոս եւ Մեհրուժան հայրապետները: Սակայն մինչեւ Գրիգոր Լուսաւորիչին քարոզութիւնը Հայաստան իր ամբողջութեան մէջ մնացած էր կռապաշտ: Այդ չըջանի Հայաստանի եկեղեցւոյ գործունէութեան մասին քիչ տեղեկութիւններ հասած են՝ բերանացի՝ աւանդութեամբ, որովհետեւ հայ ժողովուրդը հայերէն գիր ու գրականութիւն չունէր տակաւին:

Երբորդ դարուն վերջերը, հայոց Տրդատ Գ. թագաւորին կողմէ Գրիգոր Պարթեւին կրած տանջանքներէն եւ Հռիփսիմեանց կոյսերուն խողխողումէն ետք քրիստոնեաներու դէմ հանուած սոսկալի հալածանքները պահ մը խանգարեցին Հայաստանի եկեղեցիին ազատ գործունէութիւնը: Բայց անոր հաւատարիմ գաւակները իրենց հաւատքը զաղտնօրէն վառ պահելով պլպլացուցին Քրիստոսի աւետարանին լոյսը եւ աղօթքով ու համբերութեամբ սպասեցին լաւ օրերու:

Աստուածային նախախնամութեամբ դէպքերը յեղաշրջուեցան: Աստուած ողջ պահեց Գրիգոր Պարթեւը Խոր Վիրապի բանտին մէջ: Տրդատ թագաւորն ու անոր պալատականներէն ոմանք պատժուեցան իրենց անզուժ արարքներուն համար եւ զայլախտութեամբ զարնուեցան

Տիրոջ կողմէ: Յիսուս Քրիստոս երազի մէջ յայտնուեցաւ արքայաքոյր Խոսրովիդուխտին եւ ըսաւ թէ Խոր Վիրապի մէջ բանտարկուած Գրիգորը միայն կրնար իր աղօթքովը բժշկել Տրդատ թագաւորը:

Օտա Ամասունի իշխանը անմիջապէս Գրիգորը զուրահանել տուաւ Խոր Վիրապէն: Բազմաչարչար սուրբը աղօթելով բժշկեց աստուածահարեալ թագաւորն ու պալատականները եւ օրհնութիւն բերաւ հայոց աշխարհին:

Տրդատ թագաւոր բժշկուելէ ետք դարձի եկաւ, ընդունեց քրիստոնէութիւնը, զղջաց, ապաշխարեց ու Աստուծոյ ներում խնդրեց իր գործած անգթութիւններուն եւ մեղքերուն համար:

301 թուականին Տրդատ թագաւոր հրովարտակ հանելով Քրիստոնէութիւնը պետական կրօնք հռչակեց Հայաստանի մէջ եւ Հայաստան եղաւ աշխարհի առաջին քրիստոնեայ պետութիւնը: Այնուհետեւ Տրդատ Գրիգոր Պարթեւը Կեսարիա զրկեց՝ զայն Հայաստանի Եպիսկոպոսապետ ձեռնադրել տալու համար:

Գրիգոր Պարթեւ Կեսարիայէն վերադառնալով ըստանձնեց Հայաստանեայց Եկեղեցւոյ հովուապետութիւնը եւ սկսաւ քարոզել ամէն կողմ ու լուսաւորել հայ ժողովուրդը Աւետարանի լոյսով: Հաստատեց եկեղեցիներ եւ անոնց վրայ ձեռնադրեց քահանաներ եւ եպիսկոպոսներ՝ զանազան գաւառներու համար:

Սուրբ Գրիգորի քարոզութեամբ հայ ժողովուրդը զանգուածաբար արթնցաւ իր կռապաշտական թմբիրէն եւ քրիստոնէութիւնը դարձաւ համայն հայութեան կրօնքը:

Հայ ժողովուրդը Ս. Գրիգոր Պարթեւ հայրապետին առաքելական անխոնջ աշխատանքն ու կատարած լուսաւորութիւնը գնահատելով իրեն շնորհեց Լուսաւորիչ պատուանունը եւ պատմութիւնը անանազրեց զինք Երկրորդ Լուսաւորիչ Հայոց Աշխարհի: Ս. Գրիգոր Պարթեւ Ս.

Թաղէոս եւ Ս. Բարթողոմէոս առաքեալներուն նման եղաւ հոգիի լուսաւորիչ հայ ազգին համար:

Ս. Գրիգոր Լուսաւորիչի շառաւիղէն եւ յաշորդներէն՝ Մեծն Ներսէս հայրապետ իր քարոզներովն ու անձնական օրինակովը հայ ժողովուրդի սրտին ներմուծեց Քրիստոսի սիրոյ պատուիրանը: Ան իր հօտը հրաւիրեց զթասիրութեան եւ ողորմածութեան: Հաստատեց աղքատանոցներ, որբանոցներ, հիւանդանոցներ եւ ուրկանոցներ՝ բորոտներու կամ տարափոխիկ հիւանդներու համար, ու նաեւ հիւրանոցներ՝ օտարականներու: Յորդորեց բոլորը որ պահեն Աստուծոյ պատուիրանները, զիրար սիրեն, իրարու վրայ գուրգուրան եւ բարեգործութեան ետեւէ ըլլան:

Մեծն Ներսէս հայ ազգին համար եղաւ սրտի լուսաւորիչ՝ իր մարգասիրական ուսուցումներով եւ գործապուծ գործերով:

Հայ ժողովուրդին մտքի լուսաւորիչներ դարձան Մեծն Ներսէսի որդին՝ Սահակ Կաթողիկոս եւ Մեսրոպ Մաշտոց Վարդապետ: Մեսրոպ Վարդապետ Սահակ Կաթողիկոսին քաջալերութեամբ եւ աջակցութեամբ ու Վառաշապուհ թագաւորին նիւթական օժանդակութեամբ հնարեց հայերէն այբուբէնը: Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ իրենց աշակերտներով Աստուածաշունչը թարգմանեցին հայերէնի ու հայ ժողովուրդին միտքը առաւել լուսաւորեցին Աստուծոյ խօսքով: Աստուածաշունչի հայերէն թարգմանութեամբ քրիստոնէութիւնը խոր արմատներ ձգեց հայ ժողովուրդին մէջ եւ հայ անունը հոմանիչ դարձաւ քրիստոնեայ կոչումին:

Ս. Թաղէոս եւ Ս. Բարթողոմէոս առաքեալներու օրերէն մինչեւ այսօր կը գոյատեւէ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ ամուր պահելով իր հաւատքն ու գաւանդութիւնը Ամենասուրբ Երրորդութեան վրայ եւ կը սպասէ Յիսուս Քրիստոսի երկրորդ գալստեան: Որպէս զինուորեալ ու մարտնչող՝ կը պայքարի ընդդէմ չարին

(սատանային) ու մեղքին. կը յորդորէ իր գաւակները որ արթուն մնան եւ հսկեն, զօրանան Աստուծոյ խօսքով եւ սուրբ եկեղեցոյ խորհուրդներով, որպէսզի արժանի ըլլան ժառանգելու երկինքի արքայութիւնը որ Տէրը պատրաստած է իր սուրբերուն համար:

Իւրաքանչիւր հայու կոչումն ու պարտականութիւնն է հետեւիլ իր Մայրենի Եկեղեցիին օրէնքներուն եւ ցուցմունքներուն:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Աւետարանի քարոզութենէն առաջ հայերը ի՞նչ կը պաշտէին:
- 2) Որո՞նք եղան հայոց առաջին լուսաւորիչները:
- 3) Ո՞ր թագաւորը հալածանք հանեց քրիստոնեաներուն դէմ:
- 4) Ո՞վ էր Սանդուխտ կոյս եւ ի՞նչ եղաւ:
- 5) Ո՞վ էր Ոգուհին եւ ի՞նչ եղաւ:
- 6) Ո՞ր նահատակուեցան Թաղէոս եւ Բարթողոմէոս առաքեալները. որո՞ւ ձեռնով:
- 7) Ո՞վ եղաւ հայոց երկրորդ լուսաւորիչը:
- 8) Ո՞վ բժշկեց Տրդատ թագաւորը:
- 9) Ո՞ր թուականին պետական կրօնի հոշակուեցաւ քրիստոնէութիւնը Հայաստանի համար. ո՞ր թագաւորին օրով:
- 10) Ո՞վ եղաւ հայոց սրտի լուսաւորիչը. ի՞նչ բաներ ըրաւ:
- 11) Որո՞նք եղան հայոց մտքի լուսաւորիչները:
- 12) Ի՞նչ գործեր ըրին Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ. ո՞ր թագաւորին օրով:
- 13) Ի՞նչ են իւրաքանչիւր հայու կոչումն ու պարտականութիւնը իր մայրենի եկեղեցիին հանդէպ:

**Քրիստոնէութիւնը Պետական Կրօնը
Հոռմէական Կայսրութեան**

Աշխարհի չորս ծագերուն մէջ առաքեալներուն կողմէ կատարուած քարոզութեամբ բազմահազար մարդիկ հաւատքի գալով Յիսուս Քրիստոսը Տէր եւ Փրկիչ դաւանեցան: Հոռմէական կայսրութեան ենթակայ երկիրներու եւ անոնցմէ դուրս՝ Պարսկաստանի, Հնդկաստանի եւ հեռաւոր Արեւելքի մէջ կազմուեցան քրիստոնէական համայնքներ ու եկեղեցիներ: Սակայն քրիստոնէութիւնը առաւելարար խոր արմատներ նետեց Հոռմէական կայսրութեան ենթակայ երկիրներուն* մէջ՝ հակառակ իր դէմ գործադրուած սեղմումներուն եւ հալածանքներուն:

Մինչեւ չորրորդ դարուն սկիզբը արդէն բիւրաւոր հեթանոսներ Քրիստոնեայ մկրտուած ըլլալով ձերբազատուած էին կապալաւորութենէն: Սակայն քրիստոնէութիւնը գաղափարական նոր շարժում մը ըլլալուն՝ տակաւին արտօնեալ կրօնք մը չէր Հոռմէական կայսրութեան մէջ եւ յաճախ կ'ենթարկուէր հալածանքի՝ քաղաքական իշխանութեանց կողմէ:

Քրիստոնէութիւնը իր բերած նոր պատգամով եւ պատուիրաններով ցոյց կու տար արտօնեալ կուսակալութեան փուճ ըլլալը եւ մարդոց կը քարոզէր հեռու մնալ կուռքերու պաշտամունքներէն ու մոլութիւններէ: Քրիստոնէութեան կողմէ որդեգրուած սուրբ կեանքը, որ հրա-

*) Հոռմէական կայսրութեան մաս կը կազմէին Եթովպական ծովը կղերող բոլոր երկիրները:

ժարում էր զեղիւթենէ, անբարոյութենէ եւ զանազան աշխարհիկ ցանկութիւններէն, տարօրինակ կը թուէր հեթանոս ազնուականներուն, ընչաքաղց պետական պաշտօնեաներուն եւ հաճոյամոլ զանգուածներուն, որոնք անձնատուր էին իրենց ցանկութիւններուն: Հեթանոս իշխանաւորները կը զայրանային ու կը թշնամանային այն ամենուն դէմ՝ նոյնիսկ իրենց պարագաներուն՝ որոնք քրիստոնէութիւնը ընդգրկելով չէին մասնակցեր մեհեաններու պաշտամունքներուն եւ անոնց պեղիւ խրախճանքներուն:

Մեհեաններու քուրմերն ալ մեծ ընդդիմութիւն ցոյց կու տային քրիստոնեաներուն: Անոնք կը տեսնէին Աւետարանի քարոզութեան պատճառով յառաջ եկող կուսակալութեան սնանկութիւնը եւ մեհեաններու նիւթական եկամուտներուն նուազումը. ուստի հեթանոս ամբոխները քրիստոնեաներու դէմ գրգռելով խռովութիւններ կը ստեղծէին եւ ապա պետութեան առջեւ քրիստոնէութիւնը կը ներկայացնէին որպէս պատճառ խռովութեանց եւ վտանգ՝ քաղաքական իշխանութեան:

Սակայն հակառակ այդ բոլոր նեղութիւններուն եւ հալածանքներուն, Սուրբ Հոգւոյն առաջնորդութեամբ Աստուծոյ խօսքը կ'աճէր ամէն կողմ եւ բանիմաց մարդիկ հետզհետէ կը յարէին քրիստոնէութեան: Անոնք կը հետեւէին պարկեշտ կեանքի ու հաւատքով յանձնառու կ'ըլլային ամէն տեսակ նեղութիւններու, չարչարանքներու եւ նաեւ մահուան՝ Քրիստոսի սիրոյն:

Գտնուեցան կայսրեր՝ ներոնէն սկսեալ, որոնք բոլուն հալածանքներ հանեցին քրիստոնեաներուն դէմ եւ անոնցմէ շատերը բանտարկեցին, չարչարեցին, խաչեցին, առիւծներու առջեւ նետեցին եւ սուրով սպաննեցին, որպէսզի խափանէին Աւետարանի քարոզութիւնը ու չքացնէին քրիստոնէութիւնը, սակայն չյաջողեցան եւ Քրիստոսի լոյսը առաւել տարածուեցաւ կայսրութեան ամէն կողմերը: Թէեւ գտնուեցան մի քանի կայսրեր ալ, որոնք

մեղմ եղան, եւ քրիստոնեաներ այդ առիթները օգտագործեցին Աստուծոյ խօսքը տարածելու համար:

Քրիստոնեայ գանգուածներ մէկ սիրտ եւ մէկ հոգի ըլլալով հաւաքաբար կը դիմադրուէին ամէն դժուարութիւն ու կ'օժանդակէին իրարու, իրենց յոյսը Աստուծոյ վրայ դնելով: Անոնք հարստութեան, փառքի ու հաճոյքի ետեւէ չէին: Անոնց իտէալն էր՝ Քրիստոսով փրկուիլ իրենց մեղքերէն ու ժառանգել երկինքի արքայութիւնը ամէն գնով, նոյն իսկ մահուան մատնուելով: Հետեւաբար ուրացած էին աշխարհը եւ կը հետեւէին Յիսուս Քրիստոսի: Կը կատարէին անոր պատուիրանները ու իրենց նեղիչներուն դարձին եւ փրկութեան համար կ'ազօթէին:

Իւրաքանչիւր քրիստոնեայ տաճար դարձած էր Ամենասուրբ Երրորդութեան եւ Սուրբ Հոգին կը դործէր անոնց միջոցաւ: Այդ հայածանքներուն միջոցին Քրիստոսի եկեղեցին աշխարհի առջեւ թէեւ տկար էր Ֆիզիքապէս ու կը հալածուէր, սակայն հոգեպէս եւ բարոյապէս կ'ուճանար եւ յաղթանակներ կը տանէր Սուրբ Հոգիին առաջնորդութեամբ:

Չորրորդ դարուն սկիզբը քրիստոնէութիւնը դարձած էր նկատառելի ոյժ մը Հռոմէական կայսրութեան տարածքին վրայ՝ իր թուական աճումով ու բեղուն գործունէութեամբ. սակայն պետութիւնը տակաւին պաշտօնական ազատութիւն չէր շնորհած անոր ու քրիստոնեաներ պարտաւորուած էին իրենց արարողութիւնները կատարել գաղտնի վայրերու մէջ:

Մինչ այդ Հայոց Տրդատ Գ. Թագաւորը Հռոմէական կայսրութեան արեւելեան ծայրամասին վրայ 301 թուին քրիստոնէութիւնը պետական կրօնք յայտարարած էր Հայաստանի մէջ եւ նեցուկ դարձած՝ անոր դրացի երկիրներու քրիստոնեաներուն. սակայն կայսրութեան մայրաքաղաք Հռոմի մէջ դեռ եւս կը շարունակուէր քրիստոնեաներու դէմ հալածանքը:

Երբ Մեծն Կոստանդիանոս կայսերական գահ բարձրացաւ, իր դէմ ունեցաւ հակառակորդներ, որոնց մէջ ամենէն վտանգաւորն էր Մաքսենտիոսը, որ կը բռնանար Հռոմի վրայ եւ կ'ուզէր ինք ըլլալ կայսր:

Մաքսենտիոս բռնակալ մըն էր եւ կը հալածէր Քրիստոնեաները. մինչ Կոստանդիանոս ի բնէ բարեւէր էր, իր հօրմէն՝ Կոստանդինէն սորված եւ ժառանգած էր մեղմ ընթացք քրիստոնեաներու հանդէպ:

Կոստանդիանոս իր իշխանութիւնը ամրացնելու եւ գահը ապահովելու համար պարտաւորուած էր Մաքսենտիոսի դէմ պատերազմիլ եւ Հռոմը ազատագրել: 312 թուին կազմակերպեց իր բանակը եւ որոշեց քալել Թշնամիին վրայ. սակայն իր բանակը փոքրաթիւ ըլլալուն շատ մտահոգ էր պատերազմի ելքին մասին: Իրմէ առաջ ուրիշներ կուռքերու օգնութիւնը հայցելով Մաքսենտիոսի վրայ յարձակած եւ չարաչար պարտուած էին: Կոստանդիանոս այդ անցուդարձերուն տեղեակ ըլլալով կը զգար կուռքերուն փուճ ըլլալը եւ կը մտածէր պաշտել քրիստոնեաներուն Աստուածը եւ Անոր վրայ դնել իր յոյսը:

Օր մը, երեկոյեան դէմ, մինչ այդպիսի մտածումի մէջ էր, յանկարծ ինք եւ իրեն ընկերացող զինուորները երկինքի մէջ տեսան լուսեղէն խաչ մը, որուն վրայ գրուած էր՝ «Ա՛յս նշանով պիտի յաղթես»: Նոյն գիշերը իր սաղաւարտին եւ իր բոլոր զինուորներուն վահաններուն վրայ խաչի նշանը դրոշմել տուաւ եւ խաչին զօրութեան ապաւինած յաջորդ օր պատերազմի ելաւ Մաքսենտիոսի դէմ:

Կոստանդիանոս յաղթական երեք ճակատամարտներ մղելով հասաւ Հռոմի առջեւ: Մաքսենտիոս իր բազմաբոխ բանակով չկրցաւ դիմադրել խաչանիչ դրօշակին առաջնորդութեամբ եկող փոքրաթիւ բանակին, ու չարաչար պարտուելէ վերջ, կռիւի ընթացքին Տիբեր գետին մէջ գահավիժելով կորսուեցաւ:

Կոստանդիանոս յաղթական մուտք գործեց Հռոմէն ներս եւ ազատութիւն շնորհեց քրիստոնեաներուն: 313 թուականին Լիկինիոսի հետ Միլանի հրովարտական քրիստոնէութիւնը ազատ կրօնք հռչակեց Հռոմէական կայսրութեան մէջ, իսկ 324-ին ալ՝ պետական կրօնք:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Առաքելներու քարոզութիւնը ի՞նչ արդիւնք տուաւ աշխարհի մէջ եւ յատկապէս Հռոմէական կայսրութեան տարածքին վրայ:
- 2) Ինչո՞ւ համար կը հալածուէին քրիստոնեաները:
- 3) Հալածանքները կը ցա՞նց կասեցնէին քրիստոնէութեան յառաջխաղացքը:
- 4) Զորրորդ դարուն սկիզբը ի՞նչ վիճակ կը պարզէր քրիստոնէութիւնը Հռոմէական կայսրութեան մէջ:
- 5) Ո՞վ էր Կոստանդիանոս եւ ո՞վ էր իր հակառակորդը:
- 6) Կոստանդիանոս ինչո՞ւ համար մտաւ իր պատերազմի ելքի մասին:
- 7) Կոստանդիանոս եւ իր ընկերները ի՞նչ տեսանք երկրին մէջ:
- 8) Ի՞նչ գրուած էր երեւցող լուսեղէն խաչին վերեւ:
- 9) Կոստանդիանոս ի՞նչ նշանով առաջնորդեց իր քանակը:
- 10) Ինչպէ՞ս վերջացաւ պատերազմը:
- 11) Ո՞ր թուականին քրիստոնէութիւնը պետական կրօնք հռչակուեցաւ Հռոմէական կայսրութեան համար:

ԺԸ. Դաս

Ընդհանրական Եկեղեցւոյ Բաժանեալ Ծիղաւորումները

Մեծն Կոստանդիանոս կայսեր կողմէ քրիստոնէութեան պետական կրօնք հռչակուելով, 324-ին, քրիստոնէութիւնը աւելի տարածուեցաւ Հռոմէական կայսրութեան սահմաններուն մէջ ու միլիոնաւոր մարդիկ մը կը բնակուէին քրիստոնեայ դարձան:

Մեծն Կոստանդիանոսի երեք զաւակներուն իշխանութենէն ետք, Յուլիանոս ուրացող կայսրը (361-363) ուզեց կոսապաշտութիւնը վերահաստատել, եւ ատոր համար ալ շատ անգթութիւններ գործեց քրիստոնեաներուն դէմ, սակայն չյաջողեցաւ: Նոյն չորրորդ դարու վերջաւորութեան, Մեծն Թէոդոս կայսեր օրով կոսապաշտութեան մնացորդները անհետացան Հռոմէական կայսրութեան սահմաններէն:

Քրիստոնէութիւնը իր բարոյական սկզբունքներով յեղաշրջեց աշխարհը: Յովութիւնը, անբարոյութիւնը, գերիներու եւ տկարներուն հանդէպ բռնարարքներն ու անգթութիւնները հետզհետէ սկսան նուազիլ զանգուածներու մօտ եւ շատ շատեր իրաւունքի, արդարութեան եւ սրբութեան ետեւէ եղան: Մեծ կարեւորութիւն տրուեցաւ մաքուր նկարագրի կերտումին եւ ընտանեկան սրբութեան:

Աւետարանի քարոզութեան տարածումով հաստատուեցան եպիսկոպոսական աթոռներ զանազան շրջաններու մէջ, եւ ընդհանրական եկեղեցին ունեցաւ նոր ճիւղաւորումներ:

Կայսրութեան գլխաւոր կեդրոն քաղաքներէն Հոռոմի, Անտիոքի եւ Աղեքսանդրիոյ եպիսկոպոսական հովուապետութիւնները Երուսաղէմի Աթոռին օրինակով կոչուեցան պատրիարքութիւն՝ (Հայրապետութիւն) եւ ցոյց տուին եռուն գործունէութիւն իրենց իրաւասութեան ենթակայ սահմաններուն մէջ:

Վերոյիշեալ պատրիարքական Աթոռներու շարքին եւ անոնցմէ առաջ Հայաստանեայց Եկեղեցւոյ Հայրապետական Աթոռն ալ իր առաքելական քարոզութեան բեղուն գործունէութեամբ դարձած էր կարեւորագոյն ճիւղերէն մէկը Քրիստոսի ընդհանրական Սուրբ Եկեղեցւոյն, եւ իր կարգին Աւետարանի լոյսը կը տարածէր դրացի երկիրներու ժողովուրդներուն՝ յատկապէս Վրացիներուն, Աղուաններուն եւ Ալաններուն մէջ:

Այդ օրերուն ընդհանրական եկեղեցւոյ ճիւղերուն բոլոր հովուապետութիւնները կը կազմէին մէկ ամբողջութիւն՝ իրենց միախոհ հաւատքովն ու դաւանութեամբը: Հայրապետական Աթոռները հեռու էին տիրակալական ձգտումներէ: Անոնք իրարու հետ զօրուած էին եղբայրական սիրոյ կապով: Այդ եղբայրական սիրոյ եւ համախոհութեան արտայայտութիւններէն մէկն էր Կոստանդնուպոլսոյ եպիսկոպոսական Աթոռին Պատրիարքութիւն հռչակումը, որ կատարուեցաւ Բ. Տիեզերական ժողովին (381) մասնակցող Հայրապետներուն կողմէ՝ ընդհանրական եկեղեցւոյ պայծառացման համար:

Ընդհանրական Եկեղեցիի մաս կազմող այլացեղ եւ այլալեզու ազգերու հովուապետութիւններ իրենց միջափայրին համեմատ սկսան բարկերգումներ կատարել, արարողութիւնները ճոխացնել, պաշտամունքի վայել ծէսեր եւ զգեստաւորումներ պատշաճեցնել՝ իրենց ժողովուրդներուն հաւատքը զօրացնելու համար, առանց շեղելու Աւետարանի սկզբունքներէն: Սուրբգրային Սաղմոսներու կողքին յօրինուեցան շարականներ, երգեր, աղօթքներ ու մաղթանքներ: Նման բարեկարգութիւններ կատար-

րեցին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ իրմէ ետք զահակաւոյ կաթողիկոսներ Հայ Եկեղեցիէն ներս:

Մինչ ընդհանրական եկեղեցին կը զօրանար եւ ամէն կողմ ծիւեր կ'արձակէր, սուրբ եւ բարեպաշտ Հայրապետներու կողքին երեւան եկան ինքնահաւան, փառասէր ու աթոռամոլ եկեղեցականներ, որոնք թիւր բաներ ուսուցանելով իրենց ետեւէն քաշեցին եւ մոլորեցուցին բազմութիւններ: Անոնց գլխաւորներն են Արիոս, Մակեդոն եւ Նեստոր հերետիկոսները (ուղղափառ հաւատքէն տարբեր բան ուսուցանող): Սակայն ընդհանրական եկեղեցին յաջորդաբար դումարեց 325-ին Նիկիոյ, 381-ին Կոստանդնուպոլսոյ եւ 431-ին Եփեսոսի տիեզերական ժողովները ու հռչակեց ուղղափառութիւնը, բանադրեց հերետիկոսները եւ զգուշացուց այնպարհի բոլոր քրիստոնեայ հաւատացեալները անոնց մոլորութիւններէն:

Տիեզերական երեք ժողովները յստակ բանաձեւեցին քրիստոնէութեան ուղղափառ հաւատքին դաւանութիւնը: Սակայն հետագային ալ գտնուեցան մարդիկ, որոնք նոր մոլորութիւններ յառաջ բերին: Իսկ կարգ մը եկեղեցական ատաղնորդներ ալ հովուապետներէն աւելի նախամեծար եւ յառաջագահ ըլլալու ձգտումներ ունենալով՝ երկփեղկում յառաջ բերին ընդհանրական եկեղեցւոյ միութեան մէջ:

Առաքեալներու ժամանակ եւ անկէ ետք քրիստոնէութեան դէմ եղած հալածանքները բիւրեղացուցած էին Քրիստոսի ընդհանրական եկեղեցին եւ անոր մէջէն նուազած էին նիւթապաշտութեան եւ փառասիրութեան յարող կեղծ բարեպաշտները: Սակայն երբ քրիստոնէութիւնը ազատ կրօնք հռչակուեցաւ եւ խաղաղութեան շրջանը սկսաւ, պատեհապաշտ մարդիկ անարգ շահախնդրութեան համար աստուածապաշտութեան կերպարանք առին ու մուտք գործեցին եկեղեցիէն ներս. փառասիրական ճրգտումներով զիրբերու հասան եւ միամիտ բազմութիւն-

ները իրենց ետեւէն քաշելով պատճառ դարձան խռովութիւններու եւ բաժանումներու:

Ատենին Պօղոս առաքեալ Եփեսոսի եկեղեցիին երէցներուն պատուէր տալու ատեն մարգարէացած եւ ըսած էր թէ յափշտակիչ դաշլեր պիտի գային, որոնք պիտի չխնայէին հօտին, եւ նաեւ պիտի ելլէին մարդիկ, որոնք սխալ բաներ պիտի ուսուցանէին եւ շատեր իրենց ետեւէն պիտի քաշէին (ԳՈՐԾԲ Ի. 28-30):

Առաքեալներուն օրով ալ Եկեղեցւոյ ծոցէն ելած էին հերետիկոսներ, որոնք մոլորեցուցեր էին հաւատացեալները, ըսելով թէ Քրիստոս յարութիւն չէ առած եւ մեռելներն ալ յարութիւն պիտի չառնեն: Պօղոս առաքեալ իր թուղթերուն մէջ ձողկած էր զանոնք եւ զգուշացուցած հաւատացեալները այդպիսիներէն:

431-ին Եփեսոսի մէջ գումարուած Գ. Տիեզերական ժողովին կողմէ դատապարտուած հերետիկոս Նեստորի մոլորութենէն ետք մէջտեղ ելաւ Եւտիքէս անունով յոյն վանական մը, որ նեստորականութեան դէմ պայքարելու ատեն նոր մոլորութիւն մը յառաջ բերաւ եւ յուզեց քրիստոնեայ աշխարհը:

Նեստոր իր սխալ վարդապետութեամբ կ'ուսուցանէր թէ Յիսուս Քրիստոս Ս. Կոյս Մարիամէն ծնած էր սոսկ մարդ, եւ Աստուածութիւնը յետոյ բնակած էր Անոր մէջ: Անոր տեսութեամբ Յիսուս աստուածային եւ մարդկային իրարմէ անջատ բնութիւններ ունէր: Ան կ'ուրանար նաեւ Ս. Կոյս Մարիամին Աստուածածիւն ըլլալը: Իսկ Եւտիքէսն ալ կը վարդապետէր թէ մարդեղութենէն ետքը՝ այլեւս աստուածային բնութիւն միայն մնացած էր Յիսուս Քրիստոսի մէջ՝ անոր մարդկային կերպարանքին ներքեւ:

Եւտիքէսի մոլորութիւնը դատապարտելու համար հարկ չկար Տիեզերական ժողով մը գումարելու, որովհետեւ նախորդ Տիեզերական երեք ժողովներու մէջ բանաձեւուած հաւատոյ հանգանակները ինքնին կը դատապար-

տէին զայն: Դժբախտաբար Կոստանդնուպոլսոյ, Աղեքսանդրիոյ եւ Հռոմի հայրապետական Աթոռները չկրցան իրարու միջեւ սիրոյ մթնոլորտ ստեղծել եւ միացեալ յայտարարութեամբ զգուշացնել հաւատացեալ քրիստոնեայ զանգուածները եւ ընդհանրական եկեղեցւոյ միութիւնը պահպանել: Անոնք թէեւ արտաքնապէս Քրիստոսի անունով հրապարակ իջան, սակայն Անով չժողովեցին Աստուծոյ հօտը եւ պատճառ դարձան ընդհանրական եկեղեցւոյ բաժանումին եւ տկարացումին:

Նախ Կոստանդնուպոլսոյ Փլարիանոս պատրիարքը 448-ին ժողով մը գումարեց Կոստանդնուպոլսոյ մէջ, Եւտիքէսը դատապարտելու համար: Անոր դէմ հակառակ դիրք բռնեց Աղեքսանդրիոյ Դիոսկորոս պատրիարքը եւ ուրիշ ժողով մը գումարեց Եփեսոսի մէջ, 449-ին: Իսկ Հռոմի Պապը՝ Լեոն, Դիոսկորոս պատրիարքին գումարած ժողովը «Աւագակներու ժողով» կոչեց ու Կոստանդնուպոլսոյ պատրիարքին համամտութեամբ եւ Մարկիանոս կայսեր նախազանութեամբ 451-ին գումարել տուաւ Եպիսկոպոսական այլ ժողով մը Քաղկեդոնի մէջ: Հոն դատապարտուեցան Եւտիքէսն ու իր մոլորութիւնը եւ Քրիստոսի բնութեանց մասին ընդունուեցաւ Հռոմի Լեոն Պապին բանաձեւը, որ կ'ըսէր. «Մի Տէր յերկուս բնութիւնս, առանց խառնման եւ առանց փոփոխման» [«երկու բնութիւններ մէկ Տիրոջ մէջ, անխառն եւ անփոփոխ»]:

Աղեքսանդրիոյ պատրիարքութիւնն ու իր համախոհ Եպիսկոպոսները եւ արեւելեան կարգ մը երկիրներու եկեղեցիները չմասնակցեցան Քաղկեդոնի ժողովին, եւ Լեոն Պապին բանաձեւը անհամապատասխան զտան Եփեսոսի՝ Գ. Տիեզերական ժողովի որդեգրած բանաձեւին, որ կ'ըսէր. «Մի բնութիւն Բանին մարմնացելոյ» այսինքն՝ Քրիստոսի մէջ միաւորուած են աստուածայինն ու մարդկայինը, առանց շփոթուելու եւ խառնուելու իրարու մէջ եւ կազմած մէկ անձնաւորութիւն: Այս երկու բանաձեւե-

րու նրբին տարբերութիւնները եւ Հոռմի ու Կոստանդնուպոլսոյ Աթոռներուն գերազահ դառնալու ձգտումները Ընդհանրական Եկեղեցին բաժնեցին երկու հակադիր մասերու: Իսկ հետագային՝ Ը. դարուն Հոռմի եւ Կոստանդնուպոլսոյ հայրապետական Աթոռներուն միջեւ ծագած զանազան տարակարծութիւնները երկուքը վերածեցին երեք բաժանեալ խմբաւորումներու, եւ այդ պատճառով ալ յառաջ եկան անսխորժ դէպքեր ու ցաւալի պատահարներ դարերու ընթացքին:

Հայոց հայրապետութիւնը որեւէ բաժին չունեցաւ Քաղկեդոնի ժողովին եւ անոր յարակից վէճերուն մէջ: Հայ ժողովուրդը 451-ին մահու եւ կենաց կոիւ կը մղէր կրակապաշտ Պարսկաստանի դէմ իր քրիստոնէական հաւատքը պաշտպանելու համար եւ իր նահատակներուն արեան հեղումով կը պայծառացնէր Քրիստոսի սուրբ եկեղեցին: Այդ օրերուն հայ եկեղեցական դասը նուիրուած էր իր հօտին ցաւերը ամոքելու եւ հաւատքը զօրացնելու սրբազան աշխատանքին:

Տարիներ ետք, 506 թուականին, Հայոց Բարզէն Ոթմրսեցի Կաթողիկոսը Դուինի մէջ եկեղեցական մեծ ժողով մը գումարեց, որուն մասնակցեցան Վրացիներու Փարրիէլ եւ Աղուաններու Շուփաշիտէ Կաթողիկոսները իրենց եպիսկոպոսներով: Հոն այլ կարեւոր հարցերու կարգին քննարկուեցան Քաղկեդոնի ժողովին որոշումները, որովհետեւ Կոստանդնուպոլսոյ Յոյն պատրիարքութեան եւ կայսեր կողմէ առաջարկուած էր այս երեք ազգերուն՝ ճանչալ Քաղկեդոնի ժողովը եւ ընդունիլ անոր որոշումները: Յետ քննութեան Դուինի ժողովը մերժեց զայն, որովհետեւ Քաղկեդոնի ժողովը շեղած էր Նիհսոսի ժողովին ուղղափառ դաւանութենէն: Հայաստանեայց եկեղեցին նաեւ նզովեց Սուրբէսն ու անոր մոլորութիւնը ու հաստատ մնաց Տիեզերական առաջին երեք ժողովներու հաւատոյ դաւանութեանց վրայ:

Կոստանդնուպոլսոյ Յոյն պատրիարքութիւնը Քաղ-

կեդոնի ժողովի որոշումներէն քաջալերուած՝ հետզհետէ իրեն ենթարկեց փոքր Ասիոյ բոլոր քրիստոնեայ ժողովուրդները, ու հետագային ալ (608-ին) Վրացիները, եւ իր տիրակալութիւնը ընդարձակելու համար միշտ հետամուտ եղաւ հայ ժողովուրդին ալ ճանչցնել տալ Քաղկեդոնի ժողովը որպէս Չորրորդ Տիեզերական ժողով: Սակայն հայեր անհախտ պահեցին իրենց համոզումը եւ տեղի չտուին յոյն կայսրերու ճնշումին եւ պահեցին Հայ եկեղեցւոյ անկախութիւնը ի դին ամէն զոհողութեանց:

Հոռմի հայրապետութիւնը Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան հետ խզուելէ ետք իրեն վերապահեց կաթօլիկ մակդիրը, որ կը նշանակէ Ընդհանրական: Կոստանդնուպոլսոյ պատրիարքութիւնը ճանչցուեցաւ Յոյն Օրթոտոքս (ուղղափառ) անունով, իսկ Քաղկեդոնի ժողովը չընդունող եկեղեցիները անուանուեցան Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներ:

Քաղկեդոնի ժողովէն ետք Հոռմի եւ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութիւնները միասնաբար գումարած են երեք ժողովներ եւս եւ զանոնք կոչած են տիեզերական: Իսկ իրարմէ անջատուելէ ետք՝ Հոռմէական եկեղեցին գումարած է տասնհինգ ժողովներ եւս՝ զանոնք տիեզերական կոչելով: Վերջին ժողովը տեղի ունեցաւ Վատիկանի մէջ չորս նստաշրջաններով՝ 1962-1965:

Ներկայիս կաթողիկ եկեղեցւոյ հովուապետին՝ Հոռմի Պապին իշխանութեան ենթակայ են տասնչորս պատրիարքութիւններ եւ բազմաթիւ արքեպիսկոպոսութիւններ աշխարհի զանազան կողմերը:

Օրթոտոքս եկեղեցւոյ մաս կը կազմեն յոյն, պուլկար, ռումէն, եուկոսլաւ, ալպան, ռուս, վրացի եւ արաբախօս օրթոտոքս ժողովուրդները, որոնց պատրիարքութիւններն ու արքեպիսկոպոսութիւնները Կոստանդնուպոլսոյ Յոյն Տիեզերական Պատրիարքութիւնը կը ճանչնան նախամեծար Աթոռ իրենց վրայ:

Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու խմբաւորումին մաս կը կազմեն Հայ, ղպտի, Հապէշ, ասորի եւ Հնդիկ մալապար եկեղեցիները, որոնց իւրաքանչիւրը ունի իր կաթողիկոսութիւնը կամ պատրիարքութիւնը:

ԺԶ. դարուն Կաթողիկ եկեղեցւոյ ծոցէն ծնաւ բողոքական շարժումը եւ տարածուեցաւ Եւրոպայի եւ այլ երկրամասերու վրայ՝ կազմելով անհամար ճիւղաւորումներ: Անոնք առհասարակ իրարու ներհակ տեսակէտներ ունենալով անջատ վիճակներ կը կազմեն ու մինչեւ այսօր նորանոր խմբաւորումներու ծնունդ կու տան եւ կը ջլատուին իրարմէ: Բողոքականութեան յարող հաւաքականութիւնները իրենց վրայ առին Նոր Եկեղեցիներ անունը, ու այդ պատճառով նախկին երեք եկեղեցական խմբաւորումներն ալ մականուանուեցան Հիմ Եկեղեցիներ:

Առաջին երեք Տիեզերական ժողովները իրենց հաւատոյ հանգանակներու բանաձեւումով ցոյց տուին քրիստոնէական ուղղափառ հաւատքը՝ Աստուածաշունչի լոյսին տակ, զոր պէտք է դաւանի քրիստոնեայ հաւատացեալը Աստուծոյ որդեգրութեան արժանանալու համար: Հետեւաբար, այն բոլոր եկեղեցիները որոնք առաքելական յաջորդականութեամբ նուիրապետութիւն ունին եւ առաջին Տիեզերական ժողովներու հաւատոյ ուղղափառ դաւանութիւնը ընդունելով Ամենասուրբ Երրորդութեան կ'երկրպագեն ու կը սպասեն իրենց Փրկիչին Յիսուս Քրիստոսի երկրորդ գալստեան, մասնաճիւղերն են Ընդհանրական Եկեղեցւոյ:

Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցւոյ բոլոր մասնաճիւղերուն պարտականութիւնն է քարոզել իր Տիրոջ փրկութեան Աւետարանը եւ հոգիներ շահիլ երկիրքի արքայութեան համար, ու այդ իտէպի ճամբուն վրայ ցոյց տալ եղբայրական սէր իրարու հանդէպ, որպէսզի աշխարհ գիտնայ թէ Աստուծոյ խօսքին քարոզիչները Յիսուս Քրիստոսի աշակերտներն են:

Եղբայրական սիրոյ մթնոլորտին մէջ ապրողներն են որ կ'առաջնորդուին Սուրբ Հոգիէն ու կը դառնան արժանաւոր յաջորդներ սուրբ առաքեալներու:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Քրիստոնէութիւնը ինչպիսի՞ յեղաշրջում յառաջ երբաւ:
- 2) Ո՞ր քաղաքներուն հովուապետները պատրիարք կոչուեցան:
- 3) Ի՞նչ կը նշանակէ Պատրիարք:
- 4) Ի՞նչ կը հասկնանք Ընդհանրական Եկեղեցւոյ ճիւղեր ըսելով:
- 5) Ի՞նչն է համար գումարուեցան Տիեզերական երեք ժողովները:
- 6) Սկզբնական շրջաններուն քրիստոնեայ հովուապետներուն յարաբերութիւնները ինչպէ՞ս էին իրարու հետ:
- 7) Ի՞նչ էր Նեստորի մոլորութիւնը:
- 8) Ո՞վ էր Եւտիքէս եւ ի՞նչ էր անոր մտար վարդապետութիւնը:
- 9) Ի՞նչն է համար գումարուեցաւ Քաղկեդոնի ժողովը. ո՞ր թուականին:
- 10) Որո՞նք չմասնակցեցան Քաղկեդոնի ժողովին:
- 11) Հայաստանեայց Եկեղեցին ի՞նչն է համար մերժեց նանչնալ Քաղկեդոնի ժողովը:
- 12) Հայաստանեայց Եկեղեցին ի՞նչ զիրք բունց Եւտիքէսի մոլորութեան հանդէպ:
- 13) Ընդհանրական Եկեղեցին քանի՞ խմբաւորումներ ունեցաւ: Տուր անունները:
- 14) Ո՞ր ժողովուրդները մաս կը կազմեն Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու խմբաւորումին:

15) Արեւելեան Ուղղափառ եկեղեցիները տիեզերական քանի՞ ժողովներ կ'ընդունին:

16) Բողոքականութիւնը ո՞ր եկեղեցիին ծոցէն ծնաւ, ո՞ր դարուն:

17) Ի՞նչ է պարտականութիւնը Ընդհանրական եկեղեցւոյ միւղաւորումներուն:

ԺԹ. Դաս

Հայաստանեայց Եկեղեցին Ընդհանրական Եկեղեցւոյ Ծիրին Մէջ

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ նուիրապետութիւնը սկսաւ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոս առաքեալներով եւ շարունակուեցաւ անոնց ձեռքով ձեռնադրուած Եպիսկոպոսներու յաջորդականութեամբ: Եղաւ անկախ Եպիսկոպոսութիւն եւ ծիւեր արձակեց Հայաստանի զանազան վայրերուն մէջ: Իր սկզբնական օրերէն յաճախ ենթարկուեցաւ հալածանքներու եւ ժամանակ մը ունեցաւ գաղտնի գործունէութիւն:

301 թուականին, քրիստոնէութեան պետական կրօնը հռչակուեցաւ նոր էջ մը բացուեցաւ Հայ Եկեղեցիին առջեւ: Ս. Գրիգոր Լուսաւորիչի եւ անոր յաջորդող հայրապետներուն ջանքերով Աւետարանին լոյսը սփռուեցաւ Հայաստանի ամէն կողմերը: Անոնք իրենք առաքելական քարոզութիւնը փոխադրեցին նաեւ դրացի երկիրները՝ մասնաւորաբար Վրացիներուն, Աղուաններուն եւ Ալաններուն:

Մեծն Տրդատ Թագաւորի քաջալերութեամբ եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի կազմակերպչական կառոյցով Հայաստանեայց Եկեղեցին ուժեղացաւ եւ զօրացաւ: Հայրապետական Աթոռին հովանաւորութեան ներքեւ իւրաքանչիւր հայ նախարարութիւն ունեցաւ իր ուրոյն Եպիսկոպոսական աթոռը: Հայոց հայրապետութիւնը իր թեւարկութեան տակ առաւ նաեւ Վրացի եւ Աղուան Եկեղեցիները. օժանդակեց անոնց յառաջդիմութեան ու դարձաւ կեդրոն եւ առաջնորդ հիւսիսային երկիրներու (Կովկասի եւ Անդրկովկասի քրիստոնէայ ազգերուն):

Ս. Մեսրոպ Մաշտոց Հայոց այրութենը գտնելէ ետք Վրացիներուն եւ Աղուաններուն համար ալ սեփական գիրեր յօրինեց, որպէսզի անոնք ալ կարենային իրենց մայրենի լեզուով հասկնալ Աստուծոյ խօսքը:

Մինչեւ 451 թուականը, այսինքն Քաղկեդոնի ժողովին գումարումը, Հայաստանեայց Եկեղեցին բարեք յարաբերութիւն ունեցած է Ընդհանրական Եկեղեցւոյ անդամ բոլոր եկեղեցիներուն հետ: Ընդունած է Տրեզորական առաջին երեք ժողովներուն որոշումները եւ կառչած է անոնց ուղղափառ դաւանութեան:

Հայ եկեղեցին Արեւելքի մէջ թումը կանգնեցաւ Պարսից Զրադաշտական կրօնքին դէմ որ կը միտէր կովկասեան բոլոր ժողովուրդները կրակապաշտ դարձնել: Պայքարեցաւ նաեւ Նեստորական աղանդին դէմ, որ կը ջանար մոլորեցնել Պարսկաստանի ուղղափառ քրիստոնեաները:

Հայոց հայրապետութիւնը իր հօտը բարոյապէս դաստիարակելու համար հաստատեց եկեղեցական օրէնքներ ու կանոններ եւ ժողովուրդին մէջէն անհետացուց հեթանոսութենէ մնացած բազմաթիւ ապարարոյ սովորութիւններ: Սակայն չկրցաւ շարունակել իր առաքելական քարոզութիւնը այլ երկիրներու մէջ՝ Հայաստանի մէջ տիրող քաղաքական տագնապալի պայմաններուն պատճառով:

Արչակունեաց թագաւորութեան անկումը, Վարդանանց պատերազմը եւ Վահանեանց ապստամբութիւնը հայ կաթողիկոսները ստիպեցին որ իրենց ուշքը առաւելաբար կեդրոնացնեն հայ ժողովուրդին վրայ միայն՝ անոր ֆիզիքական զոյուրթիւնը եւ հաւատքը պահպանելու առաջադրութեամբ: Անոնք իրենց լայն մասնակցութիւնը բերին հայ ժողովուրդի ազատագրական պայքարներուն, որ կը մղուէին վասն Յիսուսի եւ վասն Հայրենեաց նշանաբանով:

Դժբախտաբար Քրիստոնեայ Յոյն կայսրութիւնը հայ քրիստոնեայ ժողովուրդին օգտակար ըլլալու փոխարէն,

ուզեց օգտուիլ քաղաքական խառնաշփոթ կացութիւններէն եւ ջանաց հայոց պարտադրել Քաղկեդոնի ժողովն ու անոր որոշումները, որպէսզի հայ եկեղեցին ենթարկուէր Կոստանդնուպոլսոյ Յոյն պատրիարքութեան: Սակայն հայ ժողովուրդը ընդդիմացաւ եւ ձախողութեան մատնեց Յոյներուն նենգամտութիւնը, որովհետեւ անոնց յետին նպատակն էր հայ ժողովուրդը ձուլել իրենց մէջ:

Արարական արշաւանքներն ալ մեծ ցնցումներու ենթարկեցին Հայաստանը: Հայ կաթողիկոսները տառապեցան իրենց հօտին ցաւերով եւ աշխատեցան մեղմացնել զանոնք: Յաճախ բռնակալներուն առջեւ ներկայացան ու ողորձական խօսքերով ջանացին անոնց սիրտը շահիլ ի խնդիր հայ ժողովուրդի ապահովութեան եւ բարօրութեան: Այդ թոհուբոհի օրերուն բարեկարգութիւններ ալ կատարեցին ու Աստուծոյ խօսքով դաստիարակեցին ժողովուրդը:

Հայ ժողովուրդը իր հոգեւորական դասուն ջամբած հոգեւոր եւ ազգային դաստիարակութեան շնորհիւ կրցաւ իր հաւատքը վառ պահել արաբական ու մահմետական արշաւանքներուն դիմաց: Մինչ անդին՝ Արաբիոյ, Սիւրիոյ, Պարսկաստանի եւ Հիւսիսային Աֆրիկէի այլեւայլ եկեղեցիները չդիմացան մահմետական արշաւողներուն առջեւ. ոմանք ի սպառ ջնջուեցան, իսկ ուրիշներ ալ շատ տկարացան եւ հազիւ կրցան պահել իրենց զոյուրթիւնը:

Բազրատունեաց թագաւորութեան ծաղկումին հետ Հայ Եկեղեցին ալ բարգաւաճեցաւ: Շինուեցան եկեղեցիներ ու վանքեր: Դժբախտաբար Յոյն կայսրութիւնն ու պատրիարքութիւնը չուզեցին ըմբռնել թէ իրենց արեւելեան սահմանին քով Հայաստանը իր զինուորական ոյժով եւ կազմակերպուած անկախ եկեղեցիով պատուար մըն էր Բիւզանդիոնի կայսրութեան՝ ընդդէմ հեթանոս յորդաններուն եւ մահմետական արշաւանքներուն: Յոյներ իրենց տիրակալական ցանկութենէն դրդուած՝ ի վերջոյ կործանեցին Բազրատունեաց Հայ Թագաւորութիւնը: Հետագա-

յին ալ հետամուտ եղան ջնջելու հայոց կաթողիկոսութիւնը, սակայն չյաջողեցան:

Յոյներուն այդ վատ արարքը պատճառ դարձաւ Սելճուք թուրքերու յառաջխաղացքին՝ յունական սահմաններէն ներս: Անոնք Հայաստանը անպաշտպան գտնելով գրաւեցին ու կողոպտեցին: Հայ ժողովուրդին մեծ մասը գաղթեց իր երկրէն ու տարածուեցաւ Բիւզանդական կայսրութեան խորերը՝ կեանքի ապահովութիւն գտնելու յոյսով:

Հայոց Կաթողիկոսութիւնն ալ իր ժողովուրդին նման դարձաւ աստանդական եւ տեղէ տեղ փոխադրուելէ կտք, ի վերջոյ հաստատուեցաւ Կիլիկիա, ուր Ռուբէն հայ իշխանը կրցած էր իշխանապետութիւն մը հիմնել: Ապահովական նկատառումներով՝ կաթողիկոսական Աթոռը տեղափոխութիւններ ունեցաւ Կիլիկիոյ մէջ ալ, եւ ի վերջոյ հաստատուեցաւ Կիլիկիոյ հայոց թագաւորութեան մայրաքաղաք Սիսի մէջ:

Կիլիկիոյ հայոց իշխանապետութեան օրերուն Եւրոպայէն ճամբայ ելան խաչակիր արշաւախումբեր՝ Երուսաղէմը գրաւելու համար: Անոնք Կիլիկիայէն անցնելու ատեն վայելեցին հայ իշխաններուն աջակցութիւնն ու օժանդակութիւնը:

Ի վերջոյ Կիլիկիոյ հայ իշխանապետութիւնը զօրացաւ. դարձաւ թագաւորութիւն ու բարուք յարաբերութիւններ ունեցաւ խաչակիր իշխաններու եւ թագաւորներու հետ:

Հոռմի պապերը ուզեցին այդ յարաբերութիւնները օգտագործել Հայ Եկեղեցին Հոռմի Աթոռին ենթարկելու համար: Կիլիկիոյ Հեթում Ա. թագաւորի մահէն ետք, հայ թագաւորներէն ու իշխաններէն ոմանք ուզեցին ենթարկուիլ Հոռմի Աթոռին գերիշխանութեան՝ Եւրոպայի լատին պետութիւններէն զինուորական օժանդակութիւն ձեռք ձգելու յոյսով. սակայն հայ ժողովուրդը ծա-

ռացաւ իր իշխանաւորներուն դէմ եւ չթոյլատրեց որ իր մայրենի եկեղեցին կորսնցնէ իր անկախութիւնը:

Կիլիկիոյ Հայոց Թագաւորութեան անկումէն վերջ ալ Հայոց Կաթողիկոսական Աթոռը շարունակեց մնալ Սիսի մէջ: Տագնապայի վիճակներէ անցաւ հայ ժողովուրդը այդ օրերուն, թէ՛ Կիլիկիոյ եւ թէ՛ ալ Հայաստանի մէջ: Առիթէն օգտուելով լատին կրօնաւորներ ամէն կողմ լծուեցան հայ ժողովուրդը կաթոլիկ դարձնելու: Օրուան կաթողիկոսները ի վիճակի չեղան հասնելու ցրուած հօտին հոգեւոր կարիքներուն:

Այդ մռայլ օրերուն արեւելեան Հայաստանի մէջ յառաջ եկած էին ուսեալ եւ գիտակից հայ եկեղեցականներ, որոնք նախանձախնդիր էին Հայ Եկեղեցւոյ ինքնուրոյնութեան, անկախութեան եւ աւանդութիւններուն: Անոնք կը կոչուէին Արեւելեան Վարդապետներ ու կը դաստիարակէին ժողովուրդը՝ յառաջ բերելով կրօնական եւ ազգային արթնութիւն ամէն կողմ: Միեւնոյն ատեն կը զգուշացնէին հայ զանգուածները օտար քարոզիչներու ոտնձգութիւններէն: Անոնց քարոզները մեծ ազդեցութիւն գործեցին Հայ եկեղեցական եւ աշխարհական ղեկավարներուն մօտ, որոնց մէջ ջերմ փափաքը արթնցաւ Հայրապետական Աթոռը հաստատ տեսնելու Մայր Հայաստանի մէջ:

Օրուան հայրապետը՝ Գրիգոր Մուսարէկեան Կաթողիկոս յանձն չառաւ երթալ Էջմիածին՝ Կիլիկիոյ հայութիւնը անտէր չձգելու մտադրութեամբ, սակայն արտօնեց որ հոն ընտրուի նոր կաթողիկոս մը եւ հովուէ Կիլիկիոյ սահմաններէն դուրս գտնուող հայ ժողովուրդը: Այդ օրերուն Սիւրիա եւ Կիլիկիա Եգիպտոսի տիրապետութեան ենթակայ էին, իսկ Հայաստան պարսկական տիրակալութեան ներքեւ էր:

1441-ին Էջմիածնի մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեցաւ Կիրակոս Վիրապեցին: Նորընտիր հայրա-

պետը իր ողջոյնի խօսքը ուղղեց Սիսի մէջ նստող Գրիգոր Մուսարէկեան Կաթողիկոսին եւ ցոյց տուաւ թէ Հայաստանեայց Եկեղեցին պարագաներու բերումով կրնար մէկէ աւելի կաթողիկոսներ ունենալ, սակայն ան իր նուիրապետական բոլոր աթոռներով կը կազմէր մէկ ամբողջութիւն, այսինքն Մէկ Եկեղեցի՝ Մէկ ժողովուրդ:

Հայոց Հայրապետութիւնը էջմիածնի մէջ վերահաստատուելէ ետք որոշ ատեն մը չկրցաւ ակնկալուած փայլուն գործունէութիւնը ցոյց տալ. սակայն կրցաւ իր վրայ կեդրոնացնել Հայաստանի գաւառներու Հայութեան աչքերը:

Հետագային Պարսիկներու եւ Օսմանցիներու միջեւ մղուող պատերազմներն ալ մեծապէս սարսեցին Հայ ժողովուրդը: Եւս Աբբասի ձեռքով բազմաթիւ Հայեր տեղահան եղան իրենց Հայրենիքէն եւ տարուեցան Պարսկաստան: Կաթողիկոսներէն ոմանք ստիպուեցան էջմիածնի մայրավանքէն դուրս ապրիլ: Ի վերջոյ 1629-ին Մովսէս Տաթևացի Հայրապետին գահակալութեամբ լուսաւոր շրջան մը սկսաւ Ամենայն Հայոց Հայրապետութեան առջեւ: Էջմիածինը վերածաղկեցաւ ու հաստատուեցան վանքեր ու դպրոցներ:

Սիսի մէջ իր կաթողիկոսութիւնը շարունակող Գրիգոր Մուսարէկեան Հայրապետի վախճանումէն ետք Կիլիկիոյ Հայերը անոր յաջորդ ընտրեցին Կարապետ Եղգոկիացի կաթողիկոսը: Ստոյ մէջ շարունակուող կաթողիկոսութիւնը հետագային ճանչցուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն անունով:

Ս. էջմիածնի Հայոց Հայրապետութեան ի հոգեւորս ենթակայ են Երուսաղէմի եւ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքական Աթոռները:

Ռուսերու կողմէ հայկական գաւառներու գրաւումը ազատեց Հայոց Հայրապետութիւնը մահմետականներու լուծէն եւ կաթողիկոսներ լծուեցան շինարար աշխատանքի:

տանքի: Էջմիածնի մայրավանքը բարեզարդուեցաւ, ժառանգաւորաց վարժարանը զօրացաւ, ամէն կողմ դպրոցներ հիմնուեցան եւ հրատարակչական գործեր կատարուեցան: Թէեւ գտնուեցան ուսուցարներ ալ, որ հեռանկարներ ունեցան հայ ազգը ուսացնելու ու յանդգնեցան հայ եկեղեցիներու կալուածներն ու գոյքերը գրաւելու, սակայն հանդիպեցան հայ ժողովուրդի միահամուռ ընդդիմութեան եւ տեղի տուին:

ԺԹ. դարու վերջաւորութեան Օսմանեան կայսրութեան մէջ տեղի ունեցող Համիտեան ջարդերը եւ ապա 1915-ին սկսող Հայաստանութիւնը, արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ Հայերուն տեղահանութիւնները, ու հայկական նորաստեղծ հանրապետութեան համայնավարացումը մեծ հարուածներ տուին հայ ժողովուրդին եւ անոր Եկեղեցիին: Բարեբախտաբար Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետութիւնը վերընձիւղեցաւ Լիբանանի մէջ՝ Անթիլիասի իր կաթողիկոսարանով եւ ժառանգաւորաց վարժարանով: Ան իր թեւարկութեան տակ ունէր Լիբանանի, Սիրիոյ եւ Կիպրոսի հայկական գաղութները, իսկ իր հոգեւոր մատակարարութեամբ օգտակար հանդիսացանաւ կարգ մը հայահոծ գաղութներու:

Երուսաղէմի Պատրիարքութիւնն ալ 1915-ի արհաւիրքի օրերէն ետք իր ժառանգաւորաց վարժարանով ջանաց հոգեւոր մշակներ հասցնել սփիւռքի գաղութներուն:

Ս. էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը համայնավար տիրապետութեան տակ սեղմուած ըլլալով թէեւ չկրցաւ ազատօրէն հոգեւոր դաստիարակութիւն տալ իր հօտին, սակայն կրցաւ Լուսաւորիչի լուսոյ կանթեղը վառ պահել Հայաստանի երկնակամարին վերեւ: Իմաստուն կաթողիկոսներ համբերութեամբ տոկացին պարտադրուած զրկանքներուն եւ հետզհետէ որոշ արտօնութիւններ ձեռք ձգելով վերաբացին Ս. էջմիածնի ժա-

ուանգաւորաց վարժարանը ու վերահրատարակեցին կրօնական ամսաթերթ:

Ներկայիս երբ հայոց անկախ պետականութեան վերահաստատումով, նոր եւ ազատ շրջան մը բացուած է Հայաստանի կեանքին մէջ, մեր ժողովուրդը կրօնական կեանքի նոր վերագարթօնք մըն է որ կ'ապրի՝ եկեղեցիներու եւ վանքերու վերաբացումով եւ հոգեւոր ուսման ու պաշտամունքի վերարձարծումով:

*
**

Հայաստանեայց Եկեղեցին իր հիմնադրութեան օրէն իր գաւակները դաստիարակած է Աստուծոյ խօսքով, որպէսզի անոնք ժառանգեն երկինքի արքայութիւնը: Հայոց Հայրապետութիւնը ջանացեր է իր ժողովուրդին բոլոր հատուածները բոլորել մէկ հաւատքի ու մէկ իտէալի շուրջ եւ կրցած է հայ ազգը պահել մէկ ամբողջութիւն: Հայոց Թագաւորութեան կործանումէն ետք հայ կաթողիկոսները լծուած են ապահովելու իրենց հօտին ֆիզիքական գոյութիւնը ու այդ մտահոգութեամբ ջանացած են միշտ բարւոք յարաբերութիւն մշակել օտար եւ այլակրօն բռնակալ իշխանաւորներու հետ:

Հայ ժողովուրդին համար Հայ Եկեղեցին Աստուծոյ տուն եւ աղօթափայր բլլալով հանդերձ դարձած է նաեւ ազգապահպանման կեդրոն: Հայը հոն կ'աղօթէ իր Տիրոջ Յիսուս Քրիստոսի եւ կը հաղորդուի Անոր մարմինով ու արիւնով: Միեւնոյն ատեն հոգիով կը հաղորդակցի իր անցեալի եկեղեցական սուրբ հայրերուն, հայրապետներուն, թագաւորներուն, իշխաններուն, զօրավարներուն, նահատակներուն եւ մարտիրոսներուն հետ: Հայ մարդը իրեն համար պարծանք կը սեպէ հայ Եկեղեցւոյ սուրբ աւագանէն ծնած բլլալը:

Հայաստանեայց Եկեղեցին հետեւած է Յիսուս Քրիստոսի սիրոյ պատուիրանին ու եղբայրական սիրով ողջունած է Քրիստոսի ընդհանրական Եկեղեցւոյ հին թէ նոր այն բոլոր մասնաճիւղերը, որոնք առաջին երեք Տիեզերական ժողովներու հանգանակներուն համաձայն կը դաւանին Ամենասուրբ Երրորդութիւնը եւ Յիսուս Քրիստոսի մարդեղութիւնը: Յարգալիր է այլ եկեղեցիներուն եւ անոնց աւանդութիւններուն հանդէպ:

Ժամանակի ընթացքին՝ քաղաքական պայմաններու բերումով՝ Հայաստանեայց Եկեղեցին ունեցած է մէկէ աւելի կաթողիկոսութիւններ, սակայն մնացած է մէկ Եկեղեցի՝ միեւնոյն հաւատքով, միեւնոյն արարողութեամբ, ծէսով ու լեզուով:

Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետութիւնը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւ Երուսաղէմի եւ Կոստանդնուպոլսոյ Հայոց պատրիարքութիւնները՝ մէկ ամբողջութիւն կազմելով Մէկ Եկեղեցի եւ Մէկ Նաւիրապետութիւն են աշխարհի առջեւ, Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցւոյ ծիրին մէջ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Հայաստանեայց Եկեղեցւոյ նաւիրապետութիւնը ո՞ր առաքեալներով սկսաւ:
- 2) Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ իր յաջորդները առաքելական քարոզութիւնը ո՞ր ազգերուն եւս ըրին:
- 3) Ս. Մեսրոպ հայոց այրութեւնը գտնելէ ետք ուրիշ ո՞ր ազգերուն ալ գիրքեր յօրինեց:
- 4) Արշակունեաց թագաւորութեան անկումէն ետք Հայոց Կաթողիկոսներուն ուշքը առաւելարար ի՞նչ բանի վրայ կեդրոնացաւ:

*) Պետք էր ամփոփ պատմել ե՞րբ եւ ի՞նչպէս սկիզբ առին:

5) Յոյն Լայսերէն ումնէ Ի՞նչ ուզեցին պարտադրել հայոց:

6) Արարական արշաւաններու ատեն հայ կաթողիկոսները Ի՞նչ գործեր տեսան:

7) Որո՞նք կործանեցին Բագրատունեաց թագաւորութիւնը:

8) Հայոց Կաթողիկոսութիւնը ի վերջոյ Կիլիկիոյ ո՞ր քաղաքին մէջ հաստատուեցաւ:

9) Լատին քառօղիները Կիլիկիոյ եւ Հայաստանի մէջ Ի՞նչ կը հետապնդէին:

10) Որո՞նք էին Արեւելեան վարդապետները:

11) Հայոց Կաթողիկոսութիւնը ո՞ր թուականին կը վերահաստատուի էջմիածնի մէջ:

12) Ռուսական տիրապետութեան օրով Ի՞նչ վիճակ կը պարզէր Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը:

13) Կիլիկիոյ պարպումէն ետք Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը ո՞ր հաստատուեցաւ:

14) Ի՞նչ դիրք ունի Հայաստանեայց Եկեղեցին Ընդհանրական Եկեղեցւոյ այլ ճիւղերուն հանդէպ:

Ի. Դաս

Ս. Եկեղեցիին Տօներն Ու Սրբոց Յիշատակութիւնները

Մարդ արարածին համար առաջին տօնը եղած է շարթուան եօթներորդ օրը:

Մովսէս մարգարէն անապատին մէջ երբ Իսրայէլի ժողովուրդը աստուածապաշտութեան կը վարժեցնէր, Աստուծոյ հրամանով պատուէր տուաւ անոնց, որ շարթուան եօթներորդ օրը սուրբ պահեն եւ յատկացնեն պաշտամունքի: Միեւնոյն ատեն անոնց կրօնական զգացումները զօրացնելու եւ Աստուծոյ մեծամեծ գործերն ու հրաշքները որդւոց որդի յիշատակելի դարձնելու համար հաստատեց այլ տօնական օրեր եւ անոնց առընթեր ծէսեր եւ արարողութիւններ:

Մովսէս մարգարէէն ետք, Հետագայ դարերուն Իսրայէլի ազգին արարողութիւնները ճոխացան Դաւիթ թագաւորին եւ այլոց յօրինած երգերով, սաղմոսներով ու աղօթքներով:

Չատկի, երախայրաց, քաւութեան, ամսադլուխներու եւ այլ տօներու առթիւ կատարուող կրօնական արարողութիւններն ու ցնծութիւնները ոգեւորութիւն յառաջ կը բերէին Իսրայէլի ազգին մէջ: Այդ հանդիսութիւնները կը յիշեցնէին իրենց, թէ Իսրայէլի ազգը Աստուծոյ ընտրեալ ժողովուրդն էր որ պիտի ծառայէր Անոր եւ գործադրէր անոր պատուիրանները, օրէնքները, կանոնները ու իր աստուածապաշտութեամբ օրինակ հանդիսանար Հեթանոս ազգերուն, որպէսզի անոնք ալ ճանչնային երկինքն ու երկիրը ստեղծող Եհովա Աստուածը:

Առաքեալներու ժամանակ աշխարհի զանազան կողմերը ցրուած հրեայ համայնքներ իրենց ժողովարաններուն մէջ Շաբաթ օրերը կը կատարէին պաշտամունքներ, որոնց ընթացքին կ'երզուէին սաղմոսներ, կը կարդացուէին Աստուածաշունչէն հատուածներ եւ կ'արտասանուէին աղօթքներ: Տօնական օրերուն այդ կրօնական հաւաքները առաւել փայլ կը ստանային յատուկ արարողութիւններով, երգերով ու քարոզներով. նամանաւանդ Ձատկի կամ Պաւէէի օրերուն կը կատարուէին մեծ տօնախմբութիւններ, որոնք կը յիշեցնէին Իսրայէլի ժողովուրդին կարմիր ծովէն անցքն ու Նզիպտոսի գերութենէն ազատագրումը:

Քրիստոսի Աւետարանին քարոզութեամբ յառաջ եկող քրիստոնէական համայնքները հրէական ժողովարաններու հետեւողութեամբ ունեցան իրենց հաւաքավայրերն ու եկեղեցիները եւ սկսան պաշտամունքներ կատարել: Այդ պաշտամունքներու ընթացքին, որ առաւելաբար կը կատարուէին Շաբաթ երեկոներու արեւամուտէն ետք, երբ Միաշարաթի օրը կը սկսէր, տեղի կ'ունենար հացի քեկում, այսինքն Սուրբ Հաղորդութեան Խորհուրդի արարողութիւն, եւ հաւատացեալները կը ճաշակէին Քրիստոսի մարմինն ու արիւնը:

Միաշարաթի օրը Յիսուսի յարութեամբ սրբուած ըլլալով՝ կոչուեցաւ կիրակի (տէրումի) եւ Քրիստոսի յարութեան յիշատակի օրը, եւ եկեղեցիներ սկսան հանդիսաւոր պաշտամունքով զայն տօնել: Հեթանոսութենէ քրիստոնեայ դարձող ժողովուրդներ հրեայ ազգին վերաբերող օրէնքներէն զերծ ըլլալով Շաբաթի փոխարէն որդեգրեցին կիրակի օրը սուրբ պահել եւ յատկացնել պաշտամունքներու:

Կիրակիներու կողքին քրիստոնեաներ սկսան բացառիկ պաշտամունքներ եւ գոհարանական արարողութիւններ կատարել Քրիստոսի ծննդեան, յայտնութեան, ընծայման

եւ մկրտութեան յիշատակին համար, Յունուար 6-13 օրերու ընթացքին:

Քրիստոնեաներ հրէական Ձատկի տօնին առթիւ կատարուող արարողութիւններուն եւ գառնազենութեան մէջ նշմարեցին խաչին վրայ Քրիստոսի զոհաբոծութեան նախաստուերը (Ա. Կորն. Ե. 7: Եբբ. ԺԱ. 28): Ուստի յարմար դատեցին Ձատկի տօնական օրերուն համընթաց յիշատակել Յիսուսի Երուսաղէմ մուտքը, վերջին ընթրիքը, մատնութիւնը, դատավարութիւնը, չարչարանքները, խաչելութիւնը, թաղումը, հրաշափառ յարութիւնը եւ համբարձումը:

Առջի օրերէն քրիստոնեաներ սկսած են վառ պահել նաեւ հաւատքի համար նահատակուող սուրբերուն յիշատակը: Անոնք հաւաքական այցելութիւններ ըրած են մարտիրոսներու զերեզմանները կամ նահատակութեան վայրերը եւ Հոն պաշտամունքներ կատարելով ուխտած են անոնց օրինակին հետեւիլ, անխախտ պահելով իրենց սուրբ հաւատքը ի զին ամէն զոհողութեան: Նման այցելութիւնները շարունակուած են ամէն տարի եւ ի վերջոյ նահատակներն ու մարտիրոսները ունեցած են իրենց յիշատակելի օրերը եկեղեցիներէն ներս:

Խոստովանող կոչուած եւ յիշատակութեան արժանացած են այն անձերը, որոնք չարչարանքներու, խոշտանգումներու եւ մեծ նեղութիւններու մատնուած են քրիստոնէական հաւատքին համար եւ մնացած են անյողդողդ, եւ բնական մահով աւանդած են իրենց հոգին:

Հետագային եկեղեցին յետ մահու սուրբ հռչակած եւ յիշատակած է նաեւ այն բացառիկ անձերը, որոնք հոգևով սրտով նուիրուած են հոգիներու փրկութեան եւ Աստուծոյ խօսքին տարածումին եւ իրենց մաքուր վարքուրարքով օրինակ հանդիսացած են ուրիշներու:

Ժամանակի ընթացքին հետզհետէ բազմացած են եկեղեցական տօները: Քրիստոսի տնօրինական կեանքին

զանազան դէպքերուն, Հոգեգալստեան, Մարիամ Աստուածածնի եւ Ս. Խաչի յիշատակութեանց յատկացուած են մասնաւոր օրեր, որոնց ընթացքին կատարուած են Հանդիսաւոր արարողութիւններ ու ցնծութեան թափօրներ՝ զԱստուած փառարանելու համար:

Տէրունի տօներէն եւ սրբոց յիշատակութեան օրերէն զատ Եկեղեցին հաստատած է նաեւ ապաշխարութեան եւ պահքի օրեր, որպէսզի հաւատացեալները յաճախ անդրադառնան իրենց թերութիւններուն, սխալներուն եւ աշխարհային ցանկութիւններուն, եւ խոստովանութեամբ ու ապաշխարութեամբ թօթափեն զանոնք:

Վերոյիշեալ տօնախմբութիւններով եւ յիշատակութիւններով Եկեղեցին զԱստուած փառարանելով հանդերձ ջանացած է՝

- 1) ժողովուրդին հաւատքը զօրացնել,
- 2) Յոյց տալ Աստուծոյ մեծամեծ գործերը եւ մարդ արարածին հանդէպ անոր անհուն սէրը,
- 3) Հաւատացեալները ոգեւորել աստուածային պատգամներով,
- 4) Սուրբերուն կեանքը իբր օրինակ ցոյց տալ,
- 5) Մեղաւորները հրաւիրել դարձի եւ զղջումի:

*
* *

Հայաստանեայց Եկեղեցին ունի իր տէրունի տօներն ու սրբոց նուիրուած յիշատակելի օրերը եւ ճոխացուցած է զանոնք Ս. Գրիգոր Լուսաւորիչի օրերէն սկսեալ: Անոնց տօնախմբութիւնները փայլեցուցած է յատուկ շարականներով, սաղմոսներով, սուրբ դրախին ընթերցումներով, աղօթքներով եւ թափօրներով:

Տէրունի կը կոչուին այն տօները, որոնք նուիրուած են Յիսուս Քրիստոսի տնօրինական դէպքերու յիշատա-

կին: Տէրունի կը կոչուին նաեւ Հոգեգալստեան, Սուրբ Աստուածածնին եւ Ս. Խաչին ձօնուած տօները:

Սրբոց տօներ կը կոչուին այն տօները որոնք կը կատարուին սուրբերու յիշատակին:

Հայաստանեայց Եկեղեցւոյ հինգ գլխաւոր տէրունի տօներն են՝

1) Ս. Ծնունդ. — Տօնն է Յիսուսի ծննդեան, յայտնութեան եւ մկրտութեան, որ կը տօնուի Յունուար 6-ին եւ կը տեւէ մինչեւ ամսոյն 13-րդ օրը: Վերջին օրը տօնն է նաեւ Յիսուսի անուանակոչութեան: Ծննդեան նախորդ օրը նրազալոյց կը կոչուի, իսկ յաջորդ օրը յիշատակ մեռելոց է:

2) Ս. Զատիկ. — Տօնն է Յիսուս Քրիստոսի յարութեան: Զատիկի տօնը հաստատ թուական չունի, սակայն զարնան լուսնի լրումին հետ կապուած ըլլալով՝ կը կատարուի Մարտ 22-էն սկսեալ մինչեւ Ապրիլ 25-ի մէջ զանուող Կիրակիներէն միոյն մէջ: Ս. Զատիկի նախընթաց Շաբաթ օրը կը կոչուի ճրագալոյց, իսկ յաջորդող Երկուշաբթի օրը յիշատակ մեռելոց է: Ս. Զատիկը կանխող Կիրակին կը կոչուի Մաղկազարդ եւ այդ օր հանդիսաւորապէս կը տօնուի Յիսուսի Երուսաղէմ մուտքը: Մաղկազարդի երեկոյեան կը կատարուի դնքացէֆի յուզիչ արարողութիւնը, որ ցոյց կու տայ թէ Աստուած փակուած դրախտին դուռը բանալու պատրաստ է բոլոր մեղաւորներուն առջեւ եթէ անոնք խոստովանին իրենց մեղքերը ու ապաշխարեն:

Մաղկազարդին յաջորդող շաբաթը կը կոչուի Աւագ Շաբաթ, որուն օրերը նուիրուած են Յիսուսի կեանքին վերջին տնօրինական դէպքերուն՝ յատկապէս վերջին ընթրիքին, մատնութեան, դատաւարութեան, չարչարանքներուն, խաչելութեան եւ թաղման:

Ս. Զատիկի տօնը կը տեւէ յիսուն օր եւ այդ շրջանը կը կոչուի Յիմոււմ կամ Յիմաւնց Օրեր: Յիսուսը Եկեղեցին

համար հոգեւոր ուրախութեան եւ ուտիքի օրերու շրջան մըն է: Յինունքի Կիրակիներէն իւրաքանչիւրը յիշատակելի օր մըն է հաւատացեալներուն համար: Ս. Զատիին յաջորդող Կիրակիին կը կոչուի նոր Կիրակի կամ Կրկնագատիկ, որ յիշատակութիւնն է Քրիստոսի յարութեամբ մարդ արարածին վրայ կատարուած վերանորոգութեան խորհուրդին: Յինունքի երրորդ Կիրակիին կը կոչուի Աշխարհամատրան կամ Կամայ Կիրակի, ի յիշատակ Քրիստոսի նորաստեղծ եկեղեցիին կազմութեան, ծարձակումին եւ դալարումին: Չորրորդ Կիրակիին կը կոչուի Կարմիր Կիրակի, ի յիշատակ մարտնչող եկեղեցիի յաղթանակին, զոր կը տանի ընդդէմ սատանային ու մեղքին:

Յինունքի հինգերորդ Կիրակիին տօնն է Երեւման Սրբոյ Խաչիմ: Այս տօնը յիշատակութիւնն է չորրորդ դարու կիսուն (351թ.) Երուսաղէմի մէջ՝ Գողգոթայի բարձունքէն մինչեւ Զիթենեաց լեռան դազաթը երկինքի վրայ երեւցող արեգակի լոյսէն աւելի զօրաւոր խաչի շողին, որ տեսան քաղաքին բոլոր բնակիչները:

Յինունքի քառասուներորդ օրը՝ Հինգշաբթին տօնն է Յիսուսի Համբարձման, որուն յաջորդող Կիրակիին կը կոչուի Երկրորդ Ծաղկագարդ: Այդ օրը նուիրուած է Համբարձումէն ետք Յիսուսի երկինք մտնելուն եւ հրեշտակներու կողմէ կատարուած հրճուալի դիմաւորութեան, ընդունելութեան եւ ուրախութեան յիշատակին:

Յինունքի յիսուներորդ օրը կը կոչուի Հոգեգալուստ, որ յիշատակութիւնն է Առաքեալներուն վրայ Սուրբ Հոգւոյն էջքին: Հոգեգալուստը մեծ տօն է Ս. Եկեղեցւոյ համար եւ մեծ հանդիսութեամբ կը կատարուի:

3) Վարդավառ.— Քրիստոսի այլակերպութեան տօնն է, որ կը կատարուի Յուլիս ամսուան Կիրակի օրերէն միոյն մէջ: Յաջորդող Երկուշաբթի օրը յիշատակ մեռելոց է: Վարդավառ կոչուած է, որովհետեւ Հայոց հեթանոսական մէկ տօնն էր նախապէս այդ անունով, ու այդ օր

մարդիկ իրարու վրայ վարդեր կը ցանէին եւ նաեւ ջուր կը սրսկէին: Ս. Գրիգոր Լուսաւորիչ այդ տօնը փոխակերպած ու նուիրած է Քրիստոսի այլակերպութեան յիշատակին: Թէեւ տօնակատարութեան նախկին նպատակը փոխուած է, սակայն Վարդավառ անունն ու ջուրի սրսկումը մինչեւ այսօր որպէս աւանդութիւն պահուած են Հայ ժողովուրդին մէջ:

4) Վերափոխումն Ս. Աստուածածնի.— Յիշատակութիւնն է Ս. Աստուածամօր երկինք վերափոխման: Կը կատարուի Օգոստոս 15-ի ամենամօտիկ Կիրակիին: Յաջորդող օրը յիշատակ է մեռելոց: Վերափոխման օրը Ս. Պատարագի արարողութենէն վերջ կը կատարուի Պաղոկ-օրհնէք:

5) Խաչվերաց.— Յիշատակութիւնն է պարսիկներու ձեռքէն Քրիստոսի խաչափայտին ազատագրումին, որ կատարեց Յունաց Հերակլ կայսրը 628 թուին: Հայ գինուորներ Մէլէ Գնունի գորավարին ղեկավարութեամբ խաչափայտի ազատագրումի պատերազմին յաղթանակին մէջ մեծ դեր ունեցան: Խաչվերացի տօնը կը կատարուի Սեպտեմբեր 14-ի ամենամօտիկ Կիրակիին: Յաջորդող Երկուշաբթի օրը յիշատակ է մեռելոց:

Վերոյիշեալ հինգ մեծ տօները կը կոչուին Տաղաւարաց կամ Տաղաւար Տօներ, որովհետեւ հին ատեն անոնց հանդիսութեանց ներկայ գտնուելու համար հեռաւոր վայրերէ եկող բազմաթիւ ուխտաւորներ իրենց կեցութեան համար փայտերով ու ծառերու ճիւղերով տաղաւարներ կը շինէին եկեղեցիներու եւ վանքերու շրջափակերէն ներս:

Յիսուսի ծնունդէն քառասուն օր ետք Փետրուար 14-ին կը կատարուի Տեառնընդառաջի տօնը, որ յիշատակութիւնն է Յիսուսի տաճար ընծայումին՝ Սիմէոն ծերունի քահանային ձեռքով:

Հոգեգալուստեան յաջորդող երկրորդ Կիրակիին տօնն է Ս. Էջմիածնի կաթողիկէին եւ յիշատակութիւնը Ս. Գրի-

զոր Լուսաւորիչի տեսիլքին: Այս տեսիլքին յիշատակութիւնը կը կատարուի նաեւ Ս. Աստուածածնի վերափոխման տօնին նախընթաց Շաբաթ օրը, Տօն Շողակաթի Սրբոյ Էջմիածնի անուանով:

Տէրունի օրերու կարգին է Հիմ Ուխտի Տապանակիմ տօնը որ կը կատարուի Վարդափառի նախընթաց Շաբաթ օր, որ նոյն ատեն տօնն է նոր Եկեղեցւոյ: Հին Ուխտին տապանակը ընդունարանն էր Սրբութիւն Սրբոցին՝ Աստուծոյ ներկայութեան: Անիկա շուքն էր Քրիստոսի Սուրբ Եկեղեցիին, որ իր մէջ կը վայելէ իր Տիրոջ ներկայութիւնը:

Ս. Աստուածածնի վերափոխումէն զատ կը տօնուի նաեւ անոր աւետումը՝ Ապրիլ 7-ին: Ս. Աստուածածնի տօներէն են՝ անոր գլխանոցի արկղին եւ զօտիի գիւտերուն յիշատակութիւնները: Առաջինը կը կոչուի Տօն Գիւտի Տփոյ Ս. Աստուածածնի. կը կատարուի Հոգեգալուստէն վերջ հինգերորդ կիրակին, իսկ երկրորդը կը կոչուի Տօն Գիւտի Գօււոյ Ս. Աստուածածնի. կը կատարուի Վերափոխման տօնին յաջորդող երկրորդ կիրակին:

Սեպտեմբեր 8-ին կը տօնուի Ս. Աստուածածնի Ծնունդը: Նոյեմբեր 21-ին կը տօնուի անոր Ի Տաճար ընծայումը: Իսկ Դեկտեմբեր 9-ին կը տօնուի Ս. Աստուածածնի յղութիւնը յԱննայէ:

Ս. Աստուածածնի յիշատակութեան օրերը տէրունի օրերու կարգը անցած են, որովհետեւ անոր անձն ու կեանքին դրուագները Քրիստոսի տնօրինութիւններէն անբաժան եղած են:

Պաշկերացէն երկու շաբաթ ետք, կիրակի, տօնն է Վարագայ Ս. Խաչի Նշանին, որ յայտնութեան յիշատակութիւնն է Յիսուսի Պաշափայտի այն մասունքին, որ Ս. Հռիփսիմէ կոյսը իր վիզէն կախած էր եւ հալածանքի ատեն պահած էր Վարագ լերան մէկ քարայրին մէջ:

Պաշկերացի եօթներորդ կիրակին կը կոչուի Գիւտ Պաչ, որ յիշատակութիւնն է Քրիստոսի խաչափայտին գիւտին, որ կատարած է Սեծն Կոստանդիանոսի մայրը՝ Հեղինէ Թագուհին:

Տէրունի օր է նաեւ Ծաղկազարդի նախընթաց Շաբաթ օրը, որ նուիրուած է չորսօրեայ մեռեալ Ղազարոսի յարութեան յիշատակին:

Հայ եկեղեցին առջի օրերէն յարգած է սուրբերուն յիշատակը եւ մասնաւոր օրեր յատկացուցած է հայ թէ օտար սուրբերու յիշատակութեան: Նոյնպէս կը տօնէ Հին Ուխտի Սուրբ նախահայրերուն եւ մարգարէներուն յիշատակը: Նոր Ուխտի առաքեալներուն, աւետարանիչներուն եւ նաեւ հրեշտակներուն յիշատակութեան մասնաւոր օրեր յատկացուցած է:

Հայ ժողովուրդը կրօնական եւ ազգային շուքով կը պանծացնէ՝

1) Հայոց առաջին լուսաւորիչներուն՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոս առաքեալներուն յիշատակը, որ կը կատարուի Նոյեմբերի վերջաւորութեան կամ Դեկտեմբերի սկիզբը հանդիպող Շաբաթ օրը:

2) Սրբոց Թարգմանչաց տօնը, որ Ս. Սահակի, Ս. Մեսրոպի եւ անոնց աշակերտ թարգմանիչ վարդապետներու հոյիին, ու նաեւ հետագային այլ մատենագիրներու եւ շարականագիրներու յիշատակութեան օրն է, որ կը կատարուի Հոկտեմբեր ամսուան առաջին կիսուն:

3) Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից նահատակութեան յիշատակութիւնը, որ կը կատարուի Բուն Բարեկենդանը նախորդող Երեքշաբթին:

4) Սրբոց Վարդանանց զօրավարաց 1036 վկայից յիշատակը, որ կը կատարուի Բուն Բարեկենդանը նախորդող Հինգշաբթին:

5) Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին սոսկալի շարչարանքներուն եւ նոր Վիրապ մտնելուն յիշատակու-

թիւնը, որ կը պատարուի Մեծ Պահճի վեցերորդ Կիրակիին նախընթաց Շաբաթ օրը:

6) Սուրբ Հովհաննէսնայ նահատակութիւնը, որ կը կատարուի Հոգեգալուստէն վերջ առաջին Կիրակիին յաջորդող Երկուշաբթին:

7) Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի Խոր Վիրապէն ելլելուն յիշատակը, որ կը կատարուի Հոգեգալուստէն վերջ երկրորդ Կիրակիին՝ Ս. Էջմիածնայ տօնին նախընթաց Շաբաթ օրը:

8) Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի նշխարներուն Գիւտին յիշատակը, որ կը տօնուի Հոգեգալուստէն վերջ չորրորդ Կիրակիին նախընթաց Շաբաթ օրը:

9) Ամէն տարի Ապրիլ 24-ին Հայ եկեղեցիներուն մէջ կը յիշատակուին մէկ ու կէս միլիոն հայ նահատակները, որոնք շարդուեցան թուրքերու կողմէ 1915 թուին, յանուն քրիստոնէութեան եւ հայրենիքի ազատագրութեան (թէեւ այս նահատակները տակաւին պաշտօնապէս սրբոց կարգը չեն անցած):

Հայաստանեայց եկեղեցին ունի իր պահճի օրերը: Ս. Զատիկի Յինունքի օրերէն եւ Մննդեան, Աստուածածնի վերափոխման ու Խաչվերացին յաջորդող շաբաթներէն զատ մնացեալ բոլոր Զորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը պահճի օրեր նշանակուած են: Նաեւ տաղաւարներն ու կարգ մը այլ տօներ ունին իրենց շաբաթապահճերը: Բուն Բարեկենդանէն մինչեւ Մաղկազարդ՝ քառասնօրեայ Մեծ Պահճի շրջան մըն է, որուն կը յաջորդէ Ս. Զատիկի Աւագ Շաբաթը որ պահճի օրեր են նոյնպէս:

Մեծ Պահճի երկրորդ Կիրակիին կը կոչուի Արտաքսման Կիրակի, որ յիշատակութիւնն է մեր նախածնողաց՝ Ադամի եւ Եւայի Դրախտէն դուրս վնասուելուն: Երրորդ Կիրակիին կը կոչուի Անտակի Կիրակի եւ այդ օր Աւետարանէն կը կարդացուի անառակ որդւոյն առակը: Չորրորդ Կիրակիին կը կոչուի Տնտեսի Կիրակի եւ Աւետարանէն կը կարդացուի տնտեսին առակը: Հինգերորդ Կիրակիին կը կոչուի Դատաւորի Կիրակի, եւ Աւետարանէն կը կարդացուի անիշուալ դատաւորին առակը: Վեցերորդ Կիրակիին կը կոչուի Գալստեան Կիրակի եւ Աւետարանէն կը կարդացուին Երուսաղէմի տաճարին մէջ Յիսուսի խօսած յանդիմանական խօսքերն ու վայերը՝ ուղղուած կեղծաւոր Փարիսեցիներու եւ դպիրներու:

Բուն Բարեկենդանէն երեք շաբաթ առաջ՝ Երկուշաբթիէն սկսեալ, հինգ օր Առաջաւորաց պահճ է, որուն Ուրբաթ օրը յիշատակ է Յովնան մարգարէին քարոզութեամբ Նինուէացիներուն ծոմապահութեամբ ապաշխարութեան: Առաջաւորաց պահճը հաստատուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչին կողմէ՝ ի յիշատակ այն հնգօրեայ ծոմապահութեան, որ ըրաւ հայ ժողովուրդը ազգովին մկրտուելէ առաջ: Առաջաւորաց Պահճի ընթացքին հայ հաւատացեալներէն շատեր երեք օր ծոմապահութեամբ եւ սղոթքով անցընելէ կտք սուրբ հաղորդութիւն կը ստանան:

Ս. Մնունդէն յիսուն օր առաջ կը սկսի Յիսնակաց պահճը, որ կը տեւէ մէկ շաբաթ:

Ամէն շաբաթապահճ սկսելէ առաջ կ'ունենայ իր Բարեկենդանի օրը: Մեծ Պահճին Բարեկենդանը կը կոչուի Բուն Բարեկենդան:

Բարեկենդան կը նշանակէ Բարի Կեանքանութիւն: Այդ օր մարդիկ սովորականէն քիչ մը աւելի զօրաւոր եւ մտեղէն կերակուրներ կ'ուտեն, որպէսզի Ֆիզիքապէս դիմանան գալիք օրերու պահեցողութեան:

Եկեղեցւոյ տօներն ու պահճի օրերը երկու տեսակ դասաւորում ունին. անշարժ եւ շարժական: Անշարժ կը կոչուին այն տօները, որոնք ամէն տարի նոյն թուականին կը տօնուին, որպիսին են՝ Մնունդը, Տեառնընդառաջը, Աւետման տօնը, եւ այլն: Շարժական կը կոչուին այն տօները, որոնք Ս. Զատիկին կապուած ըլլալով՝ թուականի

փոփոխութիւններու կ'ենթարկուին: Նոյնն է պարագան նաեւ Պահքի օրերուն:

Հայ եկեղեցւոյ տօնական եւ պահքի օրերը զիտնալու համար հարկ է որ հաւատացեալները ունենան եկեղեցւոյ կողմէ ամէն տարի հրատարակուող գրպանի օրացոյցը, որուն մէջ ճշգրտօրէն ցոյց տրուած կ'ըլլան տօնական ու պահքի օրերուն թուականները:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ո՞վ հաստատեց հանգստութեան օրը:
- 2) Ինչո՞ւ համար Մովսէս մարգարէն տօնական օրեր հաստատեց:
- 3) Իսրայէլացիները ի՞նչպէս կը տօնէին Շարաթը իրենց ժողովարաններուն մէջ:
- 4) Նորակազմ քրիստոնեայ համայնքները իրենց պաշտամունքներուն ընթացքին ի՞նչ կը բեկանէին:
- 5) Ի՞նչ է հացի բեկանումը:
- 6) Սկզբնական շրջաններուն քրիստոնեաներ ո՞ր տօները սկսան կատարել:
- 7) Ինչպէ՞ս սկսաւ սուրբերու յիշատակութիւնը եկեղեցիներուն մէջ:
- 8) Ինչո՞ւ համար հաստատուած են տօներն ու սրբոց յիշատակութիւնները:
- 9) Ի՞նչ կը նշանակէ խոստովանող:
- 10) Ինչո՞ւ համար նշանակուած են պահքի օրերը:
- 11) Քանի՞ տաղաւար տօներ ունի հայ եկեղեցին:
- 12) Ինչո՞ւ համար տաղաւար կը կոչուին այդ տօները:
- 13) Ի՞նչ կը նշանակէ Տէրունի տօն:
- 14) Յիսուսի Համբարձումը ե՞րբ տեղի ունեցաւ:
- 15) Ո՞ր օրը կը կատարուի Հագեգալստեան տօնը:
- 16) Ինչո՞ւ համար Վարդավառ կը կոչուի Յիսուսի այլակերպութեան տօնը:

17) Հայ Եկեղեցին Ս. Խաչի յիշատակին նուիրուած քանի՞ տօներ ունի:

18) Ս. Աստուածածնի աւետումը ե՞րբ կը տօնուի:

19) Կրնա՞ս ուրիշ տէրունի տօներու անունները յիշել:

20) Հայ եկեղեցին ո՞ր սուրբերուն յիշատակը ազգային շուքով կը պանծացնէ:

21) Ի՞նչ կը նշանակէ Բարեկենդան:

22) Շարթուան ո՞ր օրերը պահքի օրեր են:

23) Առաջաւորաց պահքը ի՞նչ բանի յիշատակութիւնն է:

24) Մեծ Պահքի շրջանը քանի՞ օրեր կը պարունակէ:

ԻԱ. Դաս

Քրիստոնէական Դաստիարակութիւնը Պատճառ Հայ Գիրերու Գիտին Եւ Հայ Մատենագրութեան*

Հայ ժողովուրդը մինչեւ Գրիգոր Լուսաւորիչի քարոզութիւնը գրականութենէ զուրկ էր: Թէեւ Արտաշէս, Մեծն Տիգրան եւ Արտաւազդ թագաւորները իրենց պալատներուն մէջ յոյն գրագէտներ եւ արուեստագէտներ հրաւիրած են եւ զանոնք դասատու ալ կարգած իրենց զաւակներուն, սակայն արքունական եւ իշխանական տուներէն դուրս ժողովուրդը անգրագէտ էր: Հայ գիրերու չգոյութեան պատճառով՝ պետական հրովարտակներն ու արձանագրութիւնները ըստ յարմարութեան կը գրուէին յունարէն կամ պարսկերէն լեզուներով:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ ղեկը ձեռք առնելէ ետք յոյն եւ ասորի ուսեալ եկեղեցականներ բերաւ Հայաստան՝ իր հիմնած դպրոցներուն համար, որպէսզի հայ պատանիները յունարէն եւ ասորերէն կարգալ-գրել սորվելով՝ կարենային քրիստոնէական ուսմանց հետեւիլ ու դառնալ քարոզիչ Աստուծոյ խօսքին:

*) Քրիստոնէական հայեցի դաստիարակութիւնը եւ պնդ աղբյուր հայ մատենագրութեան պատմութիւնը շատ ընդարձակ ըլլալուն, ջանացեր ենք չորս դասերով ամփոփ տեղեկութիւններ տալ այն սքանչելի աշխատանքներուն մասին, որոնք կատարուած են հայ մտքի լուսատոյիչ վարդապետներուն կողմէ՝ դարերու ընթացքին: Մեր օրերուն եւս կը շարունակուի հայ հոգեւոր դպրութիւնը, եւ վստահ ենք որ դեռ եւս պիտի շարունակուի հայ եկեղեցւոյ սպասատուներուն կողմէ, մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչի հիմնած դպրոցներէն յառաջ եկան ուսեալ եկեղեցական քարոզիչներ եւ դաստիարակներ: Անոնցմէ ոմանք առաւել ուսում ստանալու փափաքով գացին արտասահման՝ գրական կեդրոն դարձած քաղաքներ, որպիսին էին՝ Եղեսիա, Մծրին, Անտիոք, Աղեքսանդրիա, Աթէնք, Բիւզանդիոն, եւայլն: Հայ ուսանողներ այդ քաղաքներու բարձրագոյն դպրոցներուն մէջ հմտացան աստուածաբանութեան, հեռտրութեան, քերթողութեան, երաժշտութեան եւ այլ արուեստներու. ապա իրենց ուսումը կատարելագործելէ ետք Հայաստան վերադառնալով գրադիցան ուսուցչական պաշտօնով եւ Աւետարանը քարոզելով:

Մինչեւ հայ գիրերու գիւտը, հայ եկեղեցիներու մէջ վերծառնողներ (կարդացող եւ մեկնող եկեղեցական) Աստուածաշունչը նախ կը կարդային յունարէնով կամ ասորերէնով եւ ապա կը թարգմանէին հայերէնի: Նոյնպէս ալ սաղմոսները, հոգեւոր երգերը, մաղթանքներն ու աղօթքները կ'արտասանուէին յունարէն կամ ասորերէն լեզուներով: Բնականաբար որդեգրուած այդ ձեւը չէր յագեցներ հայ ժողովուրդը եւ թերի կը մնար հոգեւոր դաստիարակութիւնը: Սակայն յաճախակի կրկնուող այդ թարգմանական աշխատանքը վերծանողներու մօտ ինքնաբերաբար յառաջ բերաւ թարգմանական անգիր հայ գրականութիւն մը եւ շատեր սկսան հայերէն լեզուով դոցարտասանել աստուածաշնչական հատուածներ, սաղմոսներ, աղօթքներ եւ երգեր:

Սուրբ Սահակ Պարթեւ հայրապետ կաթողիկոս ընտրուելէ առաջ իր շուրջ բոլորած էր վաթսուների մօտ աշակերտներ: Կը դաստիարակէր զանոնք մտաւորապէս ու հոգեւորապէս, եւ ապա զանոնք կը ղրկէր Հայաստանի գանազան կողմերը քարոզելու համար:

Սուրբ Սահակի նման Մեսրոպ Վարդապետն ալ կազմած էր աշակերտներու հոյլ մը եւ անոնց հետ կ'այցելէր Հայաստանի քաղաքները, գիւղերն ու աւանները՝ Աւետա-

րանը քարոզելու համար: Հաւանական է, որ Ս. Սահակի կաթողիկոս ըլլալէն ետք իր աշակերտներէն շատեր միացած էին Ս. Մեսրոպի վերձանողներու խումբին:

Ս. Մեսրոպ իր ազգին հանդէպ սնուցած անհուն սէրէն եւ Աստուծոյ խօսքը անոր ամէն խաւերուն տարածելու տենչէն մղուած՝ որոշեց հայերէն գիրեր գտնել եւ Աստուածաշունչը թարգմանել հայերէն լեզուի:

Ս. Սահակ Հայրապետ եւ Հայոց Վրամշապուհ Թագաւորը նիւթապէս ու բարոյապէս օժանդակեցին Ս. Մեսրոպի, եւ ան Աստուծոյ առաջնորդութեամբ գլուխ հանեց իր մեծ ծրագիրը: Գիրերու գիւտով եւ Աստուածաշունչի թարգմանութեամբ հիմը դրուեցաւ հայ դպրութեան, գրականութեան ու մատենագրութեան: Հինգերորդ դարը հայուն համար դարձաւ Ոսկեդար:

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ իրենց աշակերտներուն գործակցութեամբ պատրաստեցին այբուբենի տախտակներ եւ դասագիրքեր: Բացին դպրոցներ ու հայ պատանիներուն սորվեցուցին հայերէն կարգալ, հայերէն գրել, հայերէն աղօթել եւ հայերէն երգել:

Սահակ-Մեսրոպեան վարժարանները հետզհետէ ճոխացուցին իրենց դասընթացքները եւ հայ ուսանողներ աստուածաշնչական եւ քրիստոնէական ուսումներու կողքին հետեւեցան նաեւ աշխարհագրութեան, գրչագրութեան, երաժշտութեան, թուարանութեան եւ այլ դասերու:

Այդ դպրոցներու յառաջագէտ շրջանաւարտներէն ոմանք զրկուեցան Եդեսիա, Աղեքսանդրիա, Կոստանդնուպոլիս եւ այլ կրթական օրրաններ՝ բարձրագոյն ուսմանց հետեւելու համար: Անոնք իրենց վերադարձին աշխատանքի լծուելով բարձրացուցին հայ դպրութեան մակարդակը, այնպէս որ հինգերորդ դարու վերջաւորութեան Հայաստանի կարգ մը վանքերուն մէջ սկսաւ բարձրագոյն ուսում ջամբուիլ ու հայ աշակերտներէն շատեր կը

հետեւէին փիլիսոփայութեան, քերթողութեան, հռետորութեան եւ այլ արուեստներու:

Սուրբ Թարգմանիչները Աստուածաշունչի թարգմանութենէն ետք սկսան թարգմանել նաեւ եկեղեցական նշանաւոր հայրերու կողմէ գրուած աստուածաբանական գործեր եւ հոգեշունչ ճառեր ու անոնց աւրնթեր արտադրեցին ինքնատիպ գործեր:

Ս. Սահակ Հայրապետ գրած է Աւագ Շարթու շարականներ, քարոզներ եւ աղօթքներ, ու նաեւ «Կանոնական Թուղթ» մը:

Ս. Մեսրոպ գրած է Մեծ Պահլի շարականներ եւ աղօթքներ: Իրեն կը վերագրուի հայ ծիսարանին պատրաստութիւնը որ իր անունով կոչուած է «Մաշտոց» եւ հետագայ դարերուն ճոխացած է յաւելումներով:

Եզնիկ Կողբացի գրած է իր հռչակաւոր «Եղծ Աղանդոց» գիրքը, ու նաեւ պատմական գործեր եւ յորդորակներ:

Կորիւն գրած է Ս. Մեսրոպ Մաշտոցի կեանքն ու գործերը իր «Վարք Մաշտոցի» կոչուած գիրքին մէջ:

Դաւիթ Անյաղթ փիլիսոփան գրած է «Մեկնութիւն Ստորոգութեանց Արիստոտելի», «Վերլուծութիւն ներածութեան Պորփիրոսի» եւ «Գիրք Սահմանաց կամ Սահմանք Իմաստասիրութեան» գիրքերը:

Եղիշէն գրած է «Պատմութիւն Վարդանանց», «Ճառ Միանձանց», «Մեկնութիւն Յեսուայ եւ Դատաւորաց», «Մեկնութիւն Տերուական Աղօթից» գիրքերը եւ այլ ճառեր:

Մովսէս Խորենացի գրած էր իր նշանաւոր «Պատմութիւն Հայոց» գիրքը եւ այլ գործեր:

Ղազար Փարպեցի եւս գրած է իր «Հայոց Պատմութիւն»ը՝ սկիզբէն մինչեւ Վահան Մամիկոնեանի մարգպանութեան շրջանը:

Գիւտ Կաթողիկոս գրած է աղօթքներ եւ այլ օգտաշատ գործեր, սակայն իր գործերէն երկու «Թուղթեր» միայն հասած են ապագայ սերունդներուն ձեռքը:

Յովհան Մանդակունի հայրապետը գրած է իրատական ճառեր եւ աղօթքներ:

*
**

Վեցերորդ եւ եօթներորդ դարերու քաղաքական տագնապալի ու խռովայոյզ օրերը բաւական ցնցումներ յառաջ բերին Հայաստանի կրթական գործին, սակայն օրուան հայրապետներն ու կրթական մշակները միշտ հետամուտ եղան հայ ժողովուրդի հոգեմտաւոր դաստիարակութեան:

Եօթներորդ դարու աչքառու դաստիարակներ եղած են՝ Աբրահամ Կաթողիկոս, Մաթուսաղա, Սեբէոս Եպիսկոպոս, Անանիա Շիրակացի, Թէոդորոս Բոթենաւոր, Ճոն Բարսեղ, Յովհաննէս Եպիսկոպոս, Փիլոն Վարդապետ Տիրակացի, եւ այլք, որոնք ճոխացուցած են հայ մատենագրութիւնը թարգմանչական եւ առաւել՝ իրենց հեղինակած կրօնական, պատմական, յորդորական, թուաբանական, աստղաբաշխական, աշխարհագրական եւ փիլիսոփայական գիրքերով:

Այդ շրջանին զարգացած են քերթողութիւնը եւ երաժշտութիւնը, ու գրուած են բազմաթիւ շարականներ: Շիրակի գպրեվանքի վանահայր Ճոն Բարսեղ իրեն ընկերակից հմուտ վարդապետներու գլուխն անցնելով հաւաքած է հինգերորդ դարէն սկսեալ գրուած բոլոր շարականները. դասաւորած է զանոնք եւ անոնց մէջէն յարմարագոյնները ընտրելով կազմած է Հայ եկեղեցւոյ «ՇարակԱնց»ը, որ հետագային ճոխացած է այլ շարականագիրներու կողմէ:

Եօթներորդ դարու հայրապետներէն Կոմիտաս Կաթողիկոս յօրինած է Հոսիսիմեանց նահատակ կոյսերուն ձօնուած «Աճճիճճ Նուիրեալք» շարականը: Իսկ Սահակ Զորափորեցի Կաթողիկոս գրած է Սուրբ Խաչին ձօնուած շարականներ:

Ութերորդ եւ իններորդ դարերու քաղաքական անըպաստ անցուդարձերը արգելք եղած են հայ կրթական գործի վերելքին. սակայն կրթական գործիչ վարդապետներէն շատեր այդ նեղ օրերուն մէջ իսկ շարունակած են՝ դաստիարակչական աշխատանքը եւ իրենց ձեռքէն վար չեն ձգած գրելը:

Ութերորդ դարու արժանաւորագոյն մշակներէն են Յովհան Օձնեցի Կաթողիկոս եւ Ստեփանոս Սիւնեցի Եպիսկոպոս, որոնք բազմակողմանի հմտութեանց տէր դաստիարակներ եղած են, ու նաեւ քերթող եւ երաժշտագէտ: Գրած են ի միջի այլոց շարականներ եւ դաստիարակչական երկեր:

Իններորդ դարուն մէջ ապրած է սրբակեաց ուսուցչապետ Մաշտոց Վարդապետը, որ հետագային նստած է կաթողիկոսական Աթոռին վրայ: Մեծ զարկ տուած է կրթական գործին: Իրեն յաջորդած է իր աշակերտներէն Յովհաննէս պատմաբան Կաթողիկոսը որ նոյնպէս եղած է վաստակաւոր դաստիարակ մը:

Իններորդ դարուն որպէս պատմագիր կը յիշուին Շապուհ Բագրատունի Իշխանն ու Թովմա Արծրունի Վարդապետը: Վերջինը գրած է Արծրունեաց նախարարութեան պատմութիւնը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Գրիգոր Լուսաւորիչ ինչո՞ւ համար դպրոցներ բացաւ:
- 2) Ո՞ր լեզուներով կը դասաւանդուէին դասերը հայ աշակերտներուն:
- 3) Հայ եկեղեցիներէն ներս Աստուածաշունչի ընթերցումը ինչպէ՞ս կը կատարուէր:
- 4) Ս. Մեսրոպ ինչո՞ւ համար ձեռնարկեց հայ գիրերու գիւտին:
- 5) Որո՞նք քաջայերեցին Ս. Մեսրոպը եւ օժանդակեցին իր ձեռնարկին:
- 6) Գիրերու գիւտէն ետք քարգրանիչները ի՞նչ ըրին:
- 7) Սահակ-Մեսրոպեան դպրոցներու աշակերտներէն ոմանք ո՞ւր դրկուեցան, ինչո՞ւ համար:
- 8) Ո՞վ գրած է Սուրբ Մեսրոպի կենսագրութիւնը:
- 9) Ո՞վ գրած է «Պատմութիւն Վարդանանց» գիրքը:
- 10) Ո՞րն է Մովսէս Խորենացիին նշանաւոր գիրքը:
- 11) Առաջին անգամ ո՞վ դասաւորած եւ կազմած է «Հայ Շարակնոց»ը:
- 12) Ո՞վ է հեղինակը «Անձինք Նուիրեալք» շարակացին:

ԻՔ. Դաս

Քրիստոնէական Դաստիարակութիւնն Ու Հայ Մատենագրութիւնը Ժ., ԺԱ. Եւ ԺԲ. Դարերուն

885 թուականին Բագրատունեաց թագաւորութեան հաստատումով մեծ զարկ կը տրուի Հայ դաստիարակութեան: Նոր վանքեր կը հիմնուին, ուսման կեդրոնները կը բազմանան, գրչագրութիւնը կը ծաղկի եւ մատենագրանները կը ճոխանան: Կը զարգանան նկարչութեան եւ քանդակագործութեան արուեստներն ալ: Թափ կ'առնէ նաեւ հայկական ճարտարապետութիւնը ու կը կառուցուին հոյակապ եկեղեցիներ, պալատներ եւ ապարանքներ:

Ժ. դարուն Աշոտ Ողորմած թագաւորին կիներ՝ Խոսրովանոյ թագուհին, շինել կու տայ Սանահինի եւ Հաղբատի վանքերը, ուր կը դասաւանդուին աստուածաբանութիւն, հոետորութիւն, փիլիսոփայութիւն, քերթողութիւն, երաժշտութիւն եւ այլ արուեստներ, ու նաեւ բժշկութիւն: Ժամանակ մը ետք Շուշիկ Պահլաւունի Տիկնանց Տիկինը Սանահինի վանքին մէջ իր ծախսով հաստատել կու տայ դարմանատուն մը, ուր կը խնամուին աղքատ հիւանդներ:

Բագրատունեաց շրջանին հռչակաւոր եղած են նաեւ Կամրջաձոր, Հոռոմոսի (Պոչափանք), Ս. Սանդխտոյ (Նարեկայ վանք), Խնածոր, Շիրակայ, եւ Տաթեւի վանքերը իրենց կրթական բարձր մակարդակով եւ հասցուցած աշակերտներով:

Ժ. դարուն մէջ անուանի դաստիարակներ եւ մատենագիրներ եղած են՝ Անանիա Նարեկացի, Խոսրով Անձեւացի, Գրիգոր Նարեկացի, Ստեփանոս Ասողիկ, Ռւստանէս եւ այլ սրբակեաց անձեր: Այդ դարու մատենագիր-

ներուն մէջ բացառիկ փայլ ունի Գրիգոր Նարեկացի Վարդապետը, որ միջադպարին արժէք ունեցող հեղինակ մըն է: Գրած է տաղեր, ճառեր, ներբողներ եւ մեկնութիւններ. նշանաւոր է իր «Մեկնութիւն Արգ Արգոցի» գիրքը: Իսկ իր «Մատեան Ողբերգութեան» աղօթագիրքը որ ներկայիս «Նարեկ» անունով կը ճանչցուի, գլուխ գործոց մըն է հայ մատենագրութեան մէջ:

ԺԱ. դարու նուիրեալ դաստիարակ եւ նշանաւոր մատենագիր եղած է Գրիգոր Մագիստրոս Պահլաւունին, որ աշխարհական մըն էր՝ սերած հայ Պահլաւունի նախարարական գերդաստանէն: Ան հմտացած է յունարէնէն գատարաբերէնի եւ արեւելեան այլ լեզուներու: Տիրացած է փիլիսոփայութեան, հետորութեան, քերթողութեան արուեստներուն եւ բժշկութեան: Ուսուցիչ եղած է Սանահինի վանքին մէջ: Նաեւ վարած է պետական պաշտօններ: Կոստանդնուպոլիս գտնուած միջոցին Յունաց կայսրը անոր հմտութիւնն ու հետորութիւնը տեսնելով գայն զնահատած է՝ շնորհելով մագիստրոսութեան եւ դքսութեան պատիւ: Կուսակալ եղած միջոցին իր իշխանութեան ներքեւ գտնուող վայրերուն մէջ զարկ տուած է հայ դպրութեան եւ դաստիարակութեան: Գրած է կրօնական, պատմական եւ քերականութեան գիրքեր: Ունի նաեւ բանաստեղծութիւններ եւ թարգմանական գործեր:

ԺԱ. դարուն նշանաւոր դաստիարակ եւ պատմագիր եղած է Արիստակէս Լաստիվերտացի եկեղեցականը, որ գրած է Սելճուք թուրքերու արշաւանքներուն եւ Անի քաղաքի կործանումին մասին:

Բագրատունեաց թագաւորութեան անկումէն եւ Սելճուք թուրքերու արշաւանքներէն ետք մեծ գաղթեր տեղի ունեցան Հայաստանէն դէպի արեւմուտք, յատկապէս Կիլիկիա: Հայ իշխաններէն ոմանք Կիլիկիա հաստատուելով կազմեցին իշխանապետութիւն մը, գլխաւորութեամբ Ռուբէն իշխանին: Կիլիկիոյ հայ իշխանապետութեան սահմաններուն մէջ հաստատուեցան վանքեր՝ վայելելով

հայ իշխաններուն հովանաւորութիւնն ու քաջալերութիւնը:

Յոյներ Բագրատունեաց թագաւորութիւնը կործանելէ ու Անին գրաւելէ ետք, ուզեցին նաեւ վերցնել հայոց կաթողիկոսութիւնը եւ յունացնել հայ ժողովուրդը: Նենգամիտ յոյները հայոց Խաչիկ Կաթողիկոսը կոստանդնուպոլիս տարին եւ ստիպեցին որ յունադաւանութիւնն ընդունի: Սակայն արի հայրապետը ամէն տեսակ նեղութիւն յանձն առնելով մերժեց ու քստրական դաւնալով վախճանեցաւ 1061 թուականին:

Խաչիկ Կաթողիկոսի մահէն ետք Յոյներ ուզեցին արգելք ըլլալ նոր կաթողիկոսի ընտրութեան, սակայն ի վերջոյ հայ ժողովուրդի ընդդիմութեան առջեւ զիջեցան եւ թոյլատրեցին որ Գրիգոր Մագիստրոսի որդին՝ Վահրամ Պահլաւունին Կաթողիկոս ընտրուի, պայմանաւ որ իր Աթոռը Հայաստանէն դուրս հաստատէ: Ուստի Վահրամ իրեն համար կայք ընտրեց Ծամնդաւ (Թոմարգա) ւանքը, ու կաթողիկոս դառնալէ ետք կոչուեցաւ Գրիգոր Բ. անուամբ եւ հետագային մականուանուեցաւ Վկայասէր: Նախքան իր կաթողիկոսանալը, իր հօր՝ Գրիգոր Մագիստրոսին տեղ որպէս դուքս կը վարէր Միջագետքի կուսակալութիւնը: Ի սէր հայ ազգին եւ հայոց կաթողիկոսական Աթոռի տեւականացումին յօժարեցաւ 1065-ին ստանձնել հայրապետական պատասխանատու պաշտօնը:

Գրիգոր Վկայասէր իր քառասնամեայ պաշտօնավարութեան ընթացքին կաթողիկոսական գործերը ընդհանրապէս վարած է տեղակալներով եւ առաւելաբար զբաղած է կրթական գործերով ու մատենագրական աշխատանքով: Թափ տուած է հայ դաստիարակութեան: Իր օրով Կիլիկիոյ եւ Եփրատի շրջաններուն մէջ գոյութիւն ունեցած են վաթսունի մօտ վանքեր: Ինք յաճախ այցելութիւններ տուած է անոնց եւ զանոնք վերածած է կրթական օրրաններու: Կազմակերպած է վանական դրութիւնը: Օրէնքներ ու կանոններ գրած ամէն կողմ: Տէր եղած է

անոնց եւ նիւթապէս օժանդակած: Իր շուրջը հաւաքած է գրչի ասակ մշակները, քաջալերած ու մղած է զանոնք որ պտղաբերին: Իր ջանքերուն շնորհիւ յառաջ եկած են բազմաթիւ ուսեալ վարդապետներ, որոնք եղած են անխոնջ դաստիարակներ եւ մատենագիրներ:

Գրիգոր Վկայասէր Կաթողիկոս կոչուած է «Երկրորդ Մեսրոպ»՝ հայ գիրին եւ դպրութեան իր մատուցած անխոնջ ծառայութեանց եւ բերած նպաստին համար: Յաջորդող ԺԲ. դարը հայ դպրութեան ու մատենագրութեան պատմութեան մէջ կոչուած է «Արծաթեայ Դար», որուն կերտիչները եղած են Գրիգոր Վկայասէրի ձեռնասուններն ու անոնց աշակերտները:

Գրիգոր Վկայասէր գրած է «Գործք Առաքելոց»ի մեկնութիւնը եւ կատարած է բազմաթիւ թարգմանութիւններ, որոնց մէջ նշանաւոր են իր կարգաւորած սուրբերուն վկայարանութիւնները:

ԺԲ. դարու ծաղկեալ դպրութեան մասնակցութիւն բերած է Գրիգոր Գ. Պահլաւունի Կաթողիկոսը: Գրած է շարականներ, տաղեր, մեղեդիներ եւ քերթուածներ:

Արծաթեայ դարու մատենագրութեան մեծ փայլ տուած է Գրիգոր Գ. Պահլաւունի Հայրապետին եղբայրը՝ Ներսէս Ծնորհալի Կաթողիկոս: Անոր զրիչէն յառաջ եկած շարականները, հոգեւոր երգերն ու աղօթքները ճոխացուցին Հայ Եկեղեցւոյ շարականագիրքն ու ժամագիրքը: Անոր գրած սուրբ գրային մեկնողական գործերն ու «Ընդհանրական Թուրք»ը մեծապէս նպաստեցին հայ ժողովուրդի կրօնական դաստիարակութեան վերելքին: Դեռ մինչեւ այսօր հայ հաւատացեալներուն հոգիները կը բոցավառին եւ հաւատքով կը զօրանան երբ կ'երգեն Ս. Ներսէս Ծնորհալիի յօրինած «Առաւօտ Լուսոյ», «Այսօր Անճառ», «Նորաստեղծեալ», «Յարեւելից», «Լոյս Արարիչ», «Նայեաց Սիրով», «Նորահրաշ Պսակաւոր» եւ այլ բազմաթիւ շարականներն ու երգերը: Իսկ անոր գրած

«Հաւատով Խոստովանիմ» աղօթքը հաւատացեալ հայորդիները կը յանձնէ Աստուծոյ ինամքին, հոգածութեան եւ պահպանութեան. յոյս կը ներշնչէ մեղաւորին՝ թէ զղումով ու ապաշխարութեամբ կրնայ վերականգնիլ եւ արժանանալ երկինքի արքայութեան՝ Տիրոջ ողորմութեամբ:

Ս. Ներսէս Ծնորհալին վերոյիշեալ գործերէն զատ գրած է «Ողբ Եղեւսի», «Յիսուս Որդի», «Վիպասանութիւն», «Բան Հաւատոյ» եւ բազմաթիւ հանելուկներ եւ երգեր:

Նոյն դարու նշանաւոր մատենագիր եւ ատենարան եղած է Ներսէս Լամբրոնացի Եպիսկոպոսը: Գրած է Ս. Պատարազի մեկնութիւնը: Յունարէնէն հայերէնի թարգմանած է «Յայտնութիւն Յովհաննու» գիրքին մեկնութիւնը: Գրած է նաեւ «Առակաց», «Ժողովողի», «Լիմաստութիւն Աղոմովմի», երկոտասան փոքր մարգարէներու եւ «Դանիէլի» մեկնութիւնները: Գրի առած է իր ատենարանութիւններն ու ճառերը: Թարգմանած է յոյն կայսրերու «Օրինագիրք»ը, անոնց քաղաքական եւ զինուորական օրէնքները եւ շատրներէն լեզուէ՝ «Կարգ Օրինութեան Թագաւորաց»ը: Հաւանաբար վերջին գիրքերը հայերէնի թարգմանած է ի պատրաստութիւն հայոց Լեւոն իշխանապետի թագաւոր օժուելուն:

Արծաթեայ դարու կերտումին իրենց բաժինը բերած են նաեւ՝

Սարգիս Ծնորհալի Վարդապետ իր «Մեկնութիւն Կաթողիկեայց Եօթանց Թղթոց» գործով.

Գրիգոր Տղայ Կաթողիկոս, իր «Ողբ Երուսաղէմի» քերթուածով.

Խաչատուր Վարդապետ Տարօնցի՝ իր գրած «Խորհուրդ Խորին»ով եւ այլ շարականներով.

Իգնատիոս Վարդապետ՝ իր գրած Ղուկասի Աւետարանին մեկնութեամբ:

Կիլիկիոյ եւ շրջակայքի վանքերուն մէջ զարկ տրուած է գրչագրութեան եւ մանրանկարչութեան արուեստներուն ու ընդօրինակուած են բազմաթիւ աւետարաններ եւ այլ գիրքեր:

Կիլիկիոյ մէջ հռչակաւոր եղած է Իրազարկ վանքը իր ջամբած բարձր ուսումով եւ կազմած ճոխ գրադարանով: Կոչուած է նաեւ Աւագ Վանք: Հոն պաշտօնավարած է Մեղրիի մականուանեալ Գէորգ Վարդապետը եւ արդիւնաւոր գործունէութեամբ պայծառացուցած է վանքը ու եկեղեցական մշակներ պատրաստած: Գէորգ Վարդապետը Մեղրիի յորժորջուած է իր քաղցր ուսուցումներուն եւ անուշ բնաւորութեան համար:

Կիլիկիոյ հայոց թագաւորութեան շրջանին վանքերու մէջ կրօնական դասերու կարգին անկ տրուած է բժշկութեան, երկրագործութեան եւ այլ աշխարհիկ դիտարուեստներու: Վանքերու կողքին բացուած են նաեւ քաղաքային դպրոցներ, ուր յաճախած են հայ պատանիներ՝ հայերէն դասերու հետ միասեղ սորվելու նաեւ լատիներէն, ֆրանսերէն եւ այլ լեզուներ ու առեւտրական ծանօթութիւններ:

ԺԲ. դարուն նշանաւոր եղած է մեծ դաստիարակ եւ հռչակաւոր բժշկապետ Միսիթար Հերացին, որ ուսումնասիրած է արաբական, յունական եւ պարսկական բժշկական արուեստները եւ ծանօթացուցած է զանոնք իր աշակերտներուն: Գրած է «Ձերմանց Միսիթարութիւն» անունով գիրք մը, որ ուղեցոյց եղած է բժշկութեան ուսանողներուն:

Այդ օրերուն Հայաստանի արեւելեան գաւառները խաղաղութեան որոշ շրջան մը սկսած են բոլորել Վրաց թագաւորութեան մաս կազմելով: Այդ առիթով Սանահինի եւ Հաղրատի վանքերը ծաղկած են: Այդ երկու վանքերուն մէջ ուսած եւ ապա անուանի ուսուցչապետ դարձած է Յովհաննէս Սարկաւապ Վարդապետը: Իր սրբակեաց կեանքով ու հմտութեամբ յարգուած է Վրաց Դաւիթ թա-

գաւորէն: Հասցուցած է մեծ թիւով ուսեալ վարդապետներ, որոնք հետագային կոչուած են Արեւելեան Վարդապետներ: Այդ դարուն եւ անկէ ետք անոնց յաջորդներն ալ նոյն անունով յորժորջուած են:

ԺԲ. դարու հայ մատենագիրներուն մէջ եզակի դիրք զբաւած է Միսիթար Գոշ Վարդապետը որպէս գիտնական եւ սրբակեաց: Մնած է Գանձակի մէջ: Նախապէս եղած է ամուսնացեալ քահանայ: Իր կնոջ մահէն ետք դարձած է կուսակրօն: Իր ունեցած ուսումէն շրաւարարուելով անցած է արեւմուտք: Այցելած է Կիլիկիոյ Սեաւ լեռներու հայ վանքերը: Ապա վերադարձած է իր հայրենի բնակավայրը եւ զբաղած ուսուցչութեամբ՝ միշտ քարոզելով Աստուծոյ խօսքն ու սէրը:

Իր համբաւը շուտով տարածուած է ամէն կողմ եւ բազմաթիւ աշակերտներ շրջապատած են զինք իր հմտութենէն օգտուելու համար: Հիմնած է Գետիկ վանքը, որ փլած է երկրաշարժէն, սակայն չէ յուսահատած եւ երկրորդ վանք մը եւս շինած է նոյն անունով եւ շարունակած է իր դաստիարակչական գործը: Գրած է իր հռչակաւոր «Դատաստանագիրք»ը ու նաեւ իր ետին թողած է 190 առակներ, սուրբ գրային մեկնութիւններ, խրատական թուղթեր եւ աղօթքներ:

Միսիթար Գոշի մահէն ետք Գետիկ վանքը շարունակած է իր կրթական գործը, ղեկավարութեամբ մեծ գիտնական Յովհաննէս Վարդապետին:

Գետիկ վանքի աշակերտ եղած է ԺԳ. դարու նշանաւոր դաստիարակ եւ մատենագիր Կիրակոս Վարդապետ Գանձակեցին: Ան գրած է իր «Հայոց Պատմութիւն»ը, որուն մէջ յատկապէս կը պատմէ իր օրերուն պատահած քաղաքական անցուդարձերը, որպիսին են՝ թաթարական արշաւանքները, Հեթում Ա. Թագաւորին կատարած ճամբորդութիւնը, դէպի Բաբաքորում, Մանրու Խանին մօտ, եւ շրջանային այլ դէպքեր:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Բագրատունեաց թագաւորութեան հաստատումով ի՞նչ վիճակ ստացաւ հայ դաստիարակութիւնը:
- 2) Ո՞վ շինեւ տուաւ Հաղրատի եւ Սանահինի վան-
քերը:
- 3) Շուշիկ Պակաւունի տիկնանց տիկինը ի՞նչ հաս-
տատեց Սանահինի վանքին մէջ:
- 4) Գրիգոր Նարեկացիի ո՞ր գործը գլուխ գործոց մըն
է հայ մատենագրութեան մէջ:
- 5) Ո՞վ է Գրիգոր Մագիստրոս:
- 6) Ո՞վ է Արիստակէս Լաստիվերտացին:
- 7) Յոյներ ի՞նչ ըրին Խաչիկ Կաթողիկոսին:
- 8) Որո՞ւ որդին էր Գրիգոր Վկայաւեր Կաթողիկոս
եւ ի՞նչ գործեր կատարեց հայ դպրութիւնը ծաղկեցնելու
համար:
- 9) Գրիգոր Վկայաւեր Կաթողիկոսը ի՞նչ կոչուած է:
- 10) Ս. Ներսէս Շնորհալիւն որո՞ւն եղբայրն էր: Ո՞րն
է իր յօրինած նշանաւոր աղօթքը:
- 11) Ուրիշ ի՞նչ բաներ գրած է Ներսէս Շնորհալիւն:
- 12) Ի՞նչ գործեր արտադրած է Ներսէս Եպիսկոպոս
Լամբրոնացին:
- 13) ԺԲ. դարը ի՞նչ կոչուած է:
- 14) Ո՞ր վարդապետը ծաղկեցուցած է Դրազարկ
վանքը:
- 15) Ո՞վ է Մխիթար Հերացին:
- 16) Որո՞նք կոչուած են Արեւելեան Վարդապետներ.
ո՞վ եղած է անոնց դաստիարակը:
- 17) Ո՞վ հիմնած է Գետիկ վանքը:
- 18) Ո՞րն է Մխիթար Գոշի գրած հռչակաւոր գիրքը:
- 19) Կիրակոս Գանձակեցիին ո՞ր գիրքը գրած է:

ԻԳ. Դաս

Քրիստոնէական Դաստիարակութիւնն Ու Հայ Մատենագրութիւնը ԺԳ. — ԺԷ. Դար

ԺԳ. դարու լուսաւոր դէմքերէն եղած է Յովհաննէս Երզնկացի Վարդապետը, որ կոչուած է Պլուզ, իր կարճ հասակին համար: Ան իր ուսումը ստացած է Սեպուհ լեռան Ս. Մինաս վանքին մէջ: Ընդգրկած է կրօնական ասպարէզը եւ զբաղած է ուսուցչութեամբ: Ինքնաշխատութեամբ զարձած է պատկառելի անձնաւորութիւն մը՝ որպէս գիտ-
նական, բանաստեղծ, հռետոր, Սուրբ Գրոց մեկնիչ եւ քերականագէտ: Շրջադայած է Հայաստանի եւ այլ վայ-
րերու հայահոծ կեդրոնները: Իր այցելած կրթական ծաղ-
կաստաններէն հաւաքած է հիւթեր իր մտքի փեթակին համար. միեւնոյն ատեն ալ իր մեղրախորիսիւնէն բաժին հանած է ուրիշներուն: 1289-ին ուխտի դացած է Երու-
սաղէմ եւ վերադարձին այցելած է Կիլիկիա: Օրուան Յակոբ Կլայեցի Կաթողիկոսի հրաւերին ընդառաջելով քերականութեան դասեր աւանդած է Հայրապետանոցի աշակերտներուն եւ պատրաստած է «Մեկնութիւն Գերա-
կանութեան» գիրքը:

Վրաց Վախտանգ իշխանին խնդրանքով գրած է «Բանք Յաղագս Երկնային Շարժմանց» գիտական գիրքը: Ամ-
բողջացուցած է նաեւ Ներսէս Շնորհալիի կիսատ մնացած Մատթէոսի Աւետարանին մեկնութիւնը: Նշանաւոր է իր «Ներբող Ի Սուրբ Լուսաւորիչն» ճառը: Գրած է «Խրատա-
կան Երկասիրութիւններ» գիրքը՝ պարզ եւ դիւրիմաց լեզուով՝ հայ ժողովուրդը քրիստոնէական շունչով դաս-
տիարակելու եւ հաւատքով զօրացնելու համար:

Յովհաննէս Երզնկացին գրած է նաեւ շարականներ, տաղեր, աղօթքներ եւ բանաստեղծութիւններ: Ինքն է հեղինակը ջրօրհնեաց առթիւ երգուող «Յամեճայն ժամ Օրհնեմք» քարոզին եւ «Այսօր Զայնն Հայրական» տաղին: Իրեն կը վերագրուի նաեւ հեղինակութիւնը «Ով Զարմանալի Խորհուրդ Այս Մեծ Յայտնեալ» տաղին:

ԺԳ. դարու դաստիարակութեան մէջ դրական նոր էջ մը բացած է Վարդան Այգեկցի Վարդապետը, որպէս առակազիր: Ժողովրդական խաւերը կրօնաբարոյապէս դաստիարակելու համար գրած է բազմաթիւ առակներ, ճառեր եւ խրատական թուղթեր: Իր առակները հաւաքուած են «Ոսկեփորիկ» եւ «Ազուեսագիրք» հատորներուն մէջ: Մատենագրած է նաեւ «Արմատ Հաւատոյ» գիրքը:

ԺԵ. դարու վերջաւորութեան արեւելեան Հայաստանի մէջ՝ Գլաճոր վանքը դարձած է կրթական մեծ օրրան մը եւ հասած է համալսարանական աստիճանի: ԺԶ. դարուն Գլաճորի վանքին մէջ ուսում առած են Յովհաննէս Որոտնեցիի, Մաղաքիա Ղրիմեցիի եւ Գրիգոր Տաթեւացիի նման հուշակաւոր աստուածաբան-փիլիսոփայ եկեղեցականներ:

Յովհաննէս Որոտնեցին իր կարգին եղած է ուսուցչապետ Գլաճորի վանքին, յաջորդելով իր ուսուցչին՝ Եսայի Նչեցի Վարդապետին: Ապա նոյն պաշտօնը վարած է Ապրակունեաց եւ Տաթեւի վանքերէն ներս: Ունեցած է բեղուն գործունէութիւն՝ հասցնելով ուսեալ եկեղեցականներ հայ ազգին:

Մաղաքիա Վարդապետ Ղրիմեցին աշակերտած է Յովհաննէս Որոտնեցիին եւ եղած է անոր աջ բազուկը: Հաստատած է Ապրակունեաց վանքի վարդապետանոցը եւ ունեւորի զաւակ ըլլալով՝ հոգացած անոր ծախսերը:

Գրիգոր Տաթեւացին եւս աշակերտած է Յովհաննէս Որոտնեցի եպիսկոպոսին եւ անոր ձեռքէն ստացած է վարդապետական աստիճան: Յովհաննէս Որոտնեցիի մահէն ետք՝ 1388-ին ստանձնած է անոր պաշտօնը ու

վարած Ապրակունեաց վանքին ուսուցչապետութիւնը: Սակայն Մաղաքիա Ղրիմեցի Վարդապետին վախճանումով վանքը մատնուած է նիւթական դժուարութեան եւ ինք ստիպուած դարանոցը փոխադրած է Տաթեւի վանքը՝ վայելելով Մմբատ Օրբելեան իշխանին ձեռնտուութիւնը:

Գրիգոր Տաթեւացին եղած է պերճախօս հռետոր եւ փիլիսոփայ, աստուածաբան եւ մանկավարժ: Զինք կոչւած են Վարդապետն Ամեճայն Հայոց: Բազմաթիւ վարդապետներ եւ քահանաներ եղած են իր ձեռնասունները, որոնք ջրուած են հայկական գաւառները, Աւետարանին լոյսը տարածելու համար:

Գրիգոր Տաթեւացին գրած է «Հարցմանց Գիրք»ը, «Ամարան» եւ «Զմեքան» քարոզագիրքերը, «Լուծմունք Աւետարանին Մատթեոսի» եւ այլ դասագիրքեր: Հաստատած է վարդապետական աստիճանի տրւելութեանց յատուկ կանոններ եւ այդ առիթներով գրած է նաեւ աղօթքներ: Գրիգոր Տաթեւացին վախճանած է 1410-ին:

ԺԶ. եւ ԺԷ. դարերուն լատին կրօնաւորներ իրենց համակիր հայ համախոհներով լծուած էին հայ ժողովուրդը կաթողիկ դարձնելու եւ հայ եկեղեցին Հռոմի Պապին գերիշխանութեան ենթարկելու: Յովհաննէս Որոտնեցի, Մաղաքիա Ղրիմեցի եւ Գրիգոր Տաթեւացի իրենց աշակերտներու հոյլով դէմ կեցան անոնց ոտնձգութիւններուն: Հայ վարդապետներ իրենց հոգեշունչ քարոզներով լուսաւորեցին ժողովուրդը եւ հայ եկեղեցւոյ ուղղափառ դաւանութիւնը բացատրելով զգուշացուցին հայ զանգուածները օտար քարոզիչներու որոգայթներէն:

1375-ին Կիլիկիոյ հայոց թագաւորութեան անկումը եւ անկէ ետք վրայ հասնող Լէնկթիմուրեան արշաւանքները հիւժեցին հայ ժողովուրդը: Շատեր լքեցին իրենց բնակավայրերը ու զաղթեցին օտար երկիրներ: Ամայացան եւ կործանեցան բազմաթիւ վանքեր ու կասեցաւ հայ կրթական գործը:

ԺԾ. դարուն սկիզբը Կիլիկիա անկախուն վիճակ մը ունէր եւ այդ պատճառով անշքացած էր հայոց հայրապետական Աթոռը: Լատին կրօնաւորներ երկրին շփոթ վիճակէն օգտուելով կը ջանային հայ ժողովուրդը Հոռոմի Պապին հոգեւոր իշխանութեան ենթարկել՝ յոյս ներշնչելով թէ Պապը կրնար գինուորական աջակցութիւն շնորհել Կիլիկիոյ ազատագրումին համար: Լատին քարոզիչներ Հայաստանի մէջ եւս սկսած էին մեծ գործունէութեան՝ ժողովուրդը կաթողիկ դարձնելու համար, եւ օրուան Կաթողիկոսները ի վիճակի չէին առաջքն առնելու անոնց սանձարձակութիւններուն:

Այդ օրերուն Հայաստանի քաղաքական կացութիւնն ալ նախանձեղի վիճակ մը չունէր, սակայն Կիլիկիոյ հետ բազդատած քիչ մը կայունութիւն հաստատուած էր եւ մի քանի վանքեր ալ սկսած էին վերաբացուիլ եւ յոյս ներշնչել:

Տիրող կացութեան մէջ, Հայաստանի Արեւելեան վարդապետներն ու եպիսկոպոսները, հայ մեծամեծներն ու նաեւ Կիլիկիոյ մաս մը եպիսկոպոսները յարմար տեսան Հայոց Հայրապետական Աթոռը վերադարձնել մայր Հայաստան, որպէսզի ան գերծ մնար լատինական ոտնձգութիւններէն եւ կարենար անկաշկանդ հովուել իր հօտը:

Գրիգոր Մուսարէկեան Կաթողիկոս նկատի առնելով Կիլիկիոյ եւ Հայաստանի քաղաքական տարբեր գոյավիճակները, յարմար չտեսաւ իր տեղէն շարժիլ, սակայն յօժարեցաւ նոր Կաթողիկոսի մը ընտրութեան էջմիածնի մէջ, որ հովուէր Կիլիկիայէն գուրս գտնուող հայութիւնը: Ուստի 1441-ին էջմիածնի մէջ ընտրուեցաւ նոր կաթողիկոս մը:

Դժբախտաբար կաթողիկոսական Աթոռի էջմիածին վերահաստատութենէն ետք ազգային եկեղեցական կեանքէն ներս պատահող անախորժ դէպքեր եւ անոնց յաջորդող քաղաքական վերիվայրումներ ու պատերազմներ արգելք եղան յառաջդիմութեան ամէն շարժումի:

ԺԵ. եւ ԺԶ. դարերը մոռալ շրջաններ եղան հայ ժողովուրդին համար: Հայաստանի եւ Կիլիկիոյ մէջ տիրապետող մահմետական իշխանաւորներուն միջեւ եղած շարունակական պատերազմները, բռնակալներու կողմէ ժողովուրդին վրայ դրուած ծանր տուրքերը եւ անիշխանական վիճակները յառաջացուցին բարքերու անկում: Հայ կրթական օրրաններու ամայացումին եւ ուսեալ եկեղեցականներու նուազումին պատճառով հոգեւոր դաստիարակութենէ զրկուեցան հայ զանգուածները: Տգիտութեան խաւար մը տիրեց ամէն կողմ եւ ժողովուրդը սկսաւ ուժանալ Աստուծոյ պատուիրաններէն, իր սոհմային աւանդութիւններէն եւ մաքուր բարքերէն:

Առիթէն օգտուելով՝ կարգ մը անարժան մարդիկ փառամոլութենէ մղուած կաշառեցին այլակրօն իշխանաւորները եւ անոնց միջամտութեամբ սկսան արժանաւոր հովիւներն ու առաջնորդները հեռացնել իրենց պաշտօններէն, որպէսզի իրենք տէր դառնային վանքերու եւ եկեղեցիներու հասոյթներուն: Բարի հովիւներու նուազումէն բազմաթիւ գիւղերու մէջ եկեղեցական արարողութիւնները դադրեցան ու ժողովուրդը հոգեւորապէս անմխիթար մնաց:

Սակայն այդ մոռալ օրերուն գտնուեցան հոգեւորապէս արթուն սրբակեաց կարգ մը լուսատու դէմքեր ալ, որոնք իրենց փոքր անկիւններէն շողացուցին Աւետարանին լոյսը եւ սկսան քրիստոնէական դաստիարակութիւն ջամբել իրենց շրջապատին ու ծրագիրներ մշակել, վերակենդանացնելու համար հայ կրթական օրրանները:

ԺԶ. դարու վերջաւորութեան Աստուած հայ ժողովուրդին դրկեց Մովսէս Տաթեւացի սրբակեաց վարդապետը որպէս լուսատու շահ: Ան ձեռնադրուած էր կուսակրօն քահանայ եւ պարտած էր զանազան վայրեր ու Երուսաղէմի մէջ ալ լուսարար կարգուած Ս. Յարութեան տաճարին: Այդ առթիւ ստրված էր մոմագործութեան

սրհեստը եւ կրնար դեղին մեղրամոմէն ճերմակ մոմեր պատրաստել:

Այդ ժամանակներուն տեղի ունեցած էր Օսմանցիներու եւ Պարսիկներու պատերազմը եւ Շահ Աբրաաբազմահազար հայեր բռնի տարած էր Պարսկաստան՝ ամայացնելով արեւելեան Հայաստանը: Այդ պատճառով էջմիածնի վանքն ալ ամայացած էր ու տաճարը կիսաւեր մնացած:

Մովսէս Վարդապետ Երուսաղէմի մէջ կը ծանօթանայ հոն ուխտի եկող Սարգիս Պարոնտէր Եպիսկոպոսին եւ կիրակոս Երէցին, որոնք յարմար վայր մը կը փնտէին վանք մը հիմնելու եւ զայն կրթական օրրանի վերածելու: Մովսէս Տաթեւացին անոնց կը թելադրէ երթալ արեւելեան Հայաստան՝ Միւնեաց Անապատը եւ հոն հաստատել իրենց մենաստանը ու կը խոստանայ մօտ ատենէն ինք ալ միանալ իրենց:

Երկու նուիրեալ եկեղեցականները Մովսէսին առաջարկը յարմար գտնելով կ'երթան եւ Միւնեաց աշխարհի Մեծ Անապատին մէջ կը հիմնեն իրենց մենաստանը: Քիչ ետք, 1613-ին Մովսէս Տաթեւացին հայրենիք վերադառնալով կը միանայ իրենց ու մենաստանը կը վերածուի կրթական բարձր օրրանի:

Մովսէս Վարդապետ իր դաստիարակչական գործին առընթեր կ'որոշէ շրջիլ Հայաստանի քաղաքներն ու զիւղերը եւ քարոզել Աւետարանը: Իրմէ առաջ Միւնեաց անապատի միաբան Մովսէսի Պօղոս Վարդապետը արդէն սկսած էր նման ձեռնարկի մը եւ իր քարոզներով ոգեւորութիւն յառաջ բերած էր զէպի աստուածապաշտութիւն: Միւնեոյն իտէալով տոգորուած երկու վարդապետները ձեռք ձեռքի տուած կը շրջին ամէն կողմ ու կը ձեռնարկեն առաքելական մեծ գործունէութեան: Աստուծոյ առաջնորդութեամբ եւ ժողովուրդին ձեռնտուութեամբ կը նորոգեն ու կը վերաբանան բազմաթիւ եկեղե-

ցիներ, կը հաստատեն վանքեր եւ դպրատուներ՝ հայ պատանիներու դաստիարակութեան համար: Վերաբացուող եկեղեցիներուն վրայ կը կարգեն քահանաներ, որպէսզի ամէնօրեայ ժամերգութիւնները անխափան կատարուին:

Երկու վարդապետներու կողմէ տրուած աւետարանական պատգամներէն ժողովուրդը հոգեւորապէս կը սթափի: Հաւատացեալ հայորդիներ յօժարութեամբ կը կատարեն անոնց պատուէրները եւ ուրախութեամբ կը փառաբանեն զԱստուած:

Երեւանի Ամիրզունա պարսիկ խանը Մովսէս Վարդապետին ձեռներէցութիւնը տեսնելով անոր կը շնորհէ քաղաքին մօտ լքուած Անանիայի վանքը: Եռանդուն վարդապետը գործի անցնելով կարճ ժամանակի ընթացքին կը վերանորոգէ զայն ու աշակերտներ հաւաքելով կը վերածէ ծաղկեալ դպրեւանքի, ուր կը կատարուին հոգեպարար ժամերգութիւններ եւ մարդիկ ամէն կողմէ կը փութան մօտիկ ընելու հայ շարականներու երգեցողութիւնը:

Դժբախտաբար Մովսէս Վարդապետ կ'ունենայ հակառակորդներ, որոնք իրենց անձնական շահերէն մղուած կ'ուզեն արգելք ըլլալ իր գործունէութեան, սակայն չեն յաջողիր: Ի վերջոյ, իրեն հակառակորդ եղող օրուան Մելքիսեղեկ աթոռակից Կաթողիկոսը կը խոնարհի անոր գործունէութեան եւ ժողովրդականութեան առջեւ ու եպիսկոպոսական աստիճան կը շնորհէ:

Մովսէս եպիսկոպոս Երուսաղէմի մէջ իր սորված մոմագործութեան արհեստն ալ ի գործ կը դնէ եկեղեցիներու պայծառութեան: Յարմար առիթով մըն ալ իր շինած գեղեցիկ ճերմակ մոմերէն նուէր կը դրկէ Շահ Աբրաասին, պարսիկ պալատականի մը ձեռքով: Շահը մոմերուն գեղեցկութեան վրայ հիանալով անմիջապէս իր մօտ կանչել կու տայ զինք: Մովսէս եպիսկոպոս կը ներկայանայ եւ Շահին խնդրանքին ընդառաջելով անոր մարդոց կը սորվեցնէ մեղրամոմը ճերմկցնելու արհեստը:

Շահ Աբրահամ շատ գոհ մնալով կ'ուզէ նիւթապէս վարձատրել Մովսէս Եպիսկոպոսը, սակայն ան կը փափաքի Շահէն նուէր ստանալ Ս. Էջմիածնի վանքին նորոգութեան հրամանագիրն ու անոր լուսարարապետութեան պաշտօնը: Շահը Մովսէս Տաթևացիին ընթացքէն շատ լաւ տպաւորուելով՝ հրամանագրով մը լուսարարապետ կը կարգէ զինք եւ Ս. Էջմիածնի վանքը կը յանձնէ իրեն:

Մովսէս Տաթևացիին գործի կը լծուի եւ իր շուրջը կը հաւաքէ նուիրեալ եկեղեցականներ: Կը նորոգէ տաճարը, պարիսպներ քաշել կու տայ վանքին շուրջ, եւ նոր շինութիւններ ու սարքաւորումներ կը կատարէ: Կը հիմնէ նաեւ Յովհաննայ վանքին ընծայարանը եւ գայն կ'առնէ Ս. Էջմիածնի հսկողութեան ներքեւ:

Ժողովուրդը կը բոլորուի Մովսէս Տաթևացի Եպիսկոպոսին շուրջ եւ կ'օժանդակէ անոր ազգաշէն ձեռնարկներուն: Իսկ Դաւիթ Կաթողիկոսի մահէն ետք ազգին մեծերը զինք կ'ընտրեն Ամենայն Հայոց Կաթողիկոս, 1629-ին:

Դժբախտաբար կարճ կը տեւէ իր կաթողիկոսութեան շրջանը եւ աշքերը կը փակէ 1632-ին: Սակայն երեքուկէս տարուան կաթողիկոսութեան կարճ շրջանին ալ մեծ գործեր կը տեսնէ: Ս. Էջմիածնի վանքը բարեկարգելէ զատ կը բանայ այլ դպրատուններ. կը վերանորոգէ կիսաւեր վանքերն ու եկեղեցիները եւ Աւետարանին լոյսը կը սփռէ ամէն կողմ: Իրմով կը բացուի նոր էջ մը հայ ժողովուրդին եւ անոր կեդրոն Ս. Էջմիածնի առջեւ:

Իր մահէն ետք Փիլիպպոս Կաթողիկոսն ալ կրթական ձեռնարկներ կը կատարէ: Յովհաննայ վանքի զպրանոցը կը փոխադրէ Էջմիածին եւ կարող ուսուցիչներ պաշտօնի կը կոչէ: Նաեւ նորոգել կու տայ բազմաթիւ վանքեր: 1651-ին կ'այցելէ Հալէպ. հոն կը տեսակցի Մեծի Տանն Կիլիկիոյ Ներսէս Կաթողիկոսին հետ, ու երկու Հայրապետները իրենց Եպիսկոպոսներով կ'երթան Երուսաղէմ եւ ելբայ-

րական սիրով կը կարգադրեն երկու Աթոռներու փոխարարներութեան ինդիքները:

Փիլիպպոս Հայրապետին յաջորդ Յակոբ Զուղայեցի Կաթողիկոսն ալ կ'ըլլայ շինարար: Կը քաջալերէ հայ տպագրութիւնը եւ կը հետապնդէ հայերէն Աստուածաշունչի հրատարակութիւնը, ու այդ նպատակով Մատթէոս Սարկաւազ Ծարեցին կը զրկէ Հոլանտայի Ամսթերտամ քաղաքը: Ծարեցին հոն կը հիմնէ հայ տպարան մը եւ առաջին առթիւ կը տպէ Ս. Ներսէս Ծնորհալիի «Յիսուս Որդի» գիրքը: Սակայն յետոյ հիւանդանալով կը մեռնի: Զուղայեցի Կաթողիկոս Ամսթերտամ կը զրկէ Ռսկան Վարդապետ Երեւանցին, որ տպարանը յանձն առնելէ ետք ի լոյս կը հանէ հայերէն Աստուածաշունչի առաջին տպագրութիւնը 1666-ին:

Ժէ. դարուն կը սկսի ծաղկիլ նաեւ Բաղէշի (Պիթլիս) մօտ Ամրտօլու վանքը, որ դարավերջին կը բարձրանայ համալսարանական աստիճանի:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ո՞վ է հեղինակը «Ով Զարմանալի» եւ «Այսօր Զայնն Հայրական» ջրօրհնաց տաղերուն:
- 2) Ո՞վ է Վարդան Այգեկցիին եւ ի՞նչ բանք գրած է:
- 3) Ո՞ր վանքէն շրջանաւարտ ելած է Յովհաննէս Որոտնեցիին եւ ի՞նչ գործեր կատարած է:
- 4) Ո՞վ հաստատած է Ապրակունեաց վանքի վարդապետանոցը եւ հոգացած անոր ծախսերը:
- 5) Գրիգոր Տաթևացիին որո՞ւ աշակերտած է եւ ի՞նչ գործեր կատարած է:
- 6) Կիլիկիոյ Հայոց Թագաւորութեան անկումէն ետք Հայոց Հայրապետական Աթոռը ի՞նչ վիճակի մէջ էր:
- 7) Լատին կրօնաւորներ Կիլիկիոյ եւ Հայաստանի մէջ ի՞նչ կը հետապնդէին:

8) Ինչո՞ւ համար էջմիածին վերահաստատուեցաւ Հայոց Հայրապետական Աթոռը:

9) ԺԾ. եւ ԺԶ. դարերու ընթացքին հայ դաստիարակութիւնը ի՞նչ վիճակի մէջ էր:

10) Մովսէս Տաթևացիին Երուսաղէմի մէջ ի՞նչ պաշտօն կը վարէր եւ հոն ո՞ր արհեստը սորվեցաւ:

11) Մովսէս Տաթևացիին Երուսաղէմէն Հայաստան վերադառնալէ ետք ի՞նչ գործերու ձեռնարկեց:

12) Մովսէս Տաթևացիին ո՞ր վարդապետին հետ միասին շրջեցաւ հայ ժողովուրդը յուսաւորելու համար:

13) Մովսէս Տաթևացիին Անանիայի վանքը ստանձնելով ի՞նչ բանի վերածեց գայն:

14) Մովսէս Տաթևացիին ինչպէ՞ս կրցաւ ձեռք առնել էջմիածնայ վանքին յուսարարապետութեան պաշտօնը եւ ի՞նչ բաներ ըրաւ հոն:

15) Մովսէս Տաթևացիին քանի՞ տարի նստաւ Կաթողիկոսական Աթոռին վրայ եւ ի՞նչ գործեր տեսաւ:

16) Ո՞վ յաջորդեց Մովսէս Տաթևացիին եւ ի՞նչ գործեր կատարեց:

17) Ո՞ր Կաթողիկոսին օրով եւ որո՞ւ ձեռքով կատարուեցաւ հայերէն Աստուածաշունչի տպագրութիւնը. ո՞ր թուականին:

ԻԳ. Դաս

Քրիստոնէական Դաստիարակութիւնն

Ու Հայ Մատենագրութիւնը ԺԸ. ԺԹ. Եւ Ի. Դարերուն

Ամբաստու վանքի նշանաւոր սաներ եղած են Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցի եւ Գրիգոր Շղթայակիր սրբակեաց վարդապետները:

Յովհաննէս Կոլոտ 1715-ին Կոստանդնուպոլսոյ պատրիարք դառնալէ ետք իր հոգեւոր եղբայրը՝ Գրիգորը Պատրիարք ընտրել տուած է Երուսաղէմի Հայոց, եւ երկուքը ձեռք առնելով մեծ բարեկարգութիւններ կատարած են ու բարի հովուապետի անուն ձգած Հայ եկեղեցւոյ պատմութեան մէջ:

Յովհաննէս Կոլոտ Պոլսոյ մէջ հիմնած է Սկիւտարի դասատունը, որ դարձած է բարձրագոյն ուսմանց կեդրոն: Հոն կազմած է նաեւ ճոխ մատենադարան մը: Իր օրով Պոլսոյ մէջ հաստատուած են Հայ տպարաններ եւ իր քաջալերութեամբ ու հսկողութեան ներքեւ տպագրուած են մօտաւորապէս հարիւր գիրքեր հին մատենագիրներու գործերէն:

Յովհաննէս Կոլոտի ուշիմ աշակերտներէն եղած է իրեն յաջորդող Յակոբ Նալեան Պատրիարքը, որ հիմնած է Պոլսոյ Գում Գափուի մայր դպրատունը եւ հասցուցած է ուսումնական սերունդ մը:

Յակոբ Նալեան Պատրիարքը գրած է «Ձէն Հոգեւոր», «Գանձարան Ծանուցմանց», «Մեկնութիւն Նարեկի» եւ այլ դաստիարակչական գիրքեր:

ԺԹ. դարու սկիզբը որպէս դաստիարակ նշանաւոր եղած է Գրիգոր պատուելի Փէշտիմալճեան, որ ատեն մը

վարած է պատրիարքարանի ընծայարանի ուսուցչապետութիւնը: Գրած է «Լուսաշաւիղ» գիրքը, որուն մէջ շատ գեղեցիկ կերպով կը մեկնէ Նիկիական հանգանակը. նաեւ գրած է «Իմառնութիւն ի Զարչարանս Քրիստոսի», «Հայկազեան Լեզուի Բառագիրք», «Կրթութիւն Քաղաքավարութեան», «Վարժութիւն Բարոյն Խոստովանութեան», «Տրամարանութիւն Կամ Արուեստ Բանական» գիրքերը եւ քերթուածներ:

ԺԹ. դարու Հայ դաստիարակութեան իր մեծ բաժինը բերած է Ներսէս Աշտարակեցի Կաթողիկոս եւ հիմնած է Թիֆլիսի Ներսէսեան ձեռարանը:

ԺԺ. դարու Հայ հոգեւոր դաստիարակութեան իրենց մեծ բաժինը բերած են նաեւ՝

Խրիմեան Հայրիկ, որ Պոլսոյ մէջ հաստատած է սպարան, զոր յետոյ փոխադրած է Վարազայ վանք եւ ապա Մուշ: Վարազայ վանքին մէջ բացած է ժառանգաւորաց վարժարան: Հայ ժողովուրդին ազգային եւ կրօնական զգացումները զօրացնելու համար հրատարակած է «Արժուի Վասպուրակամի» եւ «Արժուիկ Տարօնոյ» պարբերաթերթերը: Գրած է «Մարգարիտ Արեւայութեան Երկնից», «Խաչի Ճառ», «Պապիկ եւ Թոռնիկ», «Իրախտի Ընտանիք», «Հրաւիրակ Արարատեան», «Հրաւիրակ Երկրին Աւետեաց» եւ այլ գիրքեր:

Ներսէս Վարժապետեան Պատրիարք, որ նախ եղած է կրթական մշակ եւ ապա կուսակրօն հոգեւորական: Հիմնած է դպրոցներ: Հրատարակած է «Համարարբառ» գիրքը որ չորս Աւետարաններու համադրութիւնն ու մեկնութիւնն է: Նաեւ գրած է «Քրիստոսի Սուրբ Եկեղեցին եւ Անոր Հակառակորդները» գրքոյկը:

Խորէն Պատրիարք Աշըգեան, որ հիմնած է Արմաշի Դպրեվանքը, 1889 թուականին, եւ հրատարակած է «Կենցաղ Հայ Եկեղեցականաց» գիրքը:

Գեորգ Դ. Կաթողիկոս, որ կազմակերպած է արե-

ւելեան Հայաստանի կրթական գործը, բազմացուցած է ծխական վարժարանները եւ մշակել տուած է կրթական ծրագիր մը: Էջմիածնի մէջ հիմնած է Գէորգեան ձեռարանը:

Մաղափա Արքեպիսկոպոս Օրմանեան, եղած է նշանաւոր բանասէր, պատմաբան, դաստիարակ, բեմբասաց եւ մատենագիր, եւ առաջին վերատեսուչը՝ Արմաշի Դպրեվանքին: Եթէ տարիներ նուիրումով վարած է այդ պաշտօնը՝ մինչեւ իր Պատրիարք ընտրուելը: Պատրիարքութեան շրջանին ալ միշտ իր հոգածութեան ներքեւ պահած է այդ հաստատութիւնը: Իր գրական գլխաւոր գործերն են՝ «Ազգապատում», «Համապատում Զորս Աւետարաններու», «Հայոց Եկեղեցին», «Խոհք եւ Խօսք»: Գրած է նաեւ քարոզներ:

Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեան՝ բազմապատակ դաստիարակ, բանաստեղծ եւ մատենագիր՝ որ Մաղափա Արք. Օրմանեանի վերատեսչութեան ներքեւ վարած է Արմաշի Դպրեվանքին վանահայրութիւնն ու փոխ տեսչութիւնը: Իսկ անոր Պատրիարք ընտրուելէն ետք՝ 1896-ին ստանձնած է Դպրեվանքին վերատեսչութիւնը: 1909-ին Կոստանդնուպոլսոյ Պատրիարք ընտրուելով՝ մէկուկէս տարի նստած է Աթոռին վրայ եւ ապա նորէն նուիրուած է դաստիարակչական աշխատանքի: 1921-ին ընտրուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարք: Եղիշէ Պատրիարք Դուրեանի հմտութենէն ու կատարած բարեկարգութիւններէն մեծապէս օգտուած է Երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարանը: Իր գրական գործերն են՝ «Հովուական Սրինգ», «Իրուագներ Մանուկ Յիսուսի Կեանքէն», «Հայոց Հին Կրօնը», «Պատմութիւն Հայ Մատենագրութեան», «Հայոց Պատմութիւն», «Ընթացք Ի Գրոց Բարբառ», «Բառագիտութիւն Կամ Ուր Մասունք Բանի» եւ այլ գիրքեր:

Սահակ Բ. Կաթողիկոս Խաչայեան, որ իր ուսումը եւ ձեռնադրութիւնը ստացած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքին մէջ, եղած է պերճախօս քարոզիչ եւ նուիր-

եալ դաստիարակ Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանէն ներս: Հեղինակած է Ս. Գրոց, աշխահագրութեան, պատմութեան, տիեզերագրութեան դասագիրքեր եւ այլ գործեր: Ստանձնած է Երուսաղէմի Պատրիարքութեան պաշտօնաթերթ «Սիռն»ի խմբագրապետութիւնը: Եպիսկոպոս ձեռնադրուելէ ետք վարած է Երուսաղէմի վանքին լուսարարապետութեան բարձր պաշտօնը տասնրեօթը տարիներ: 1903-ին օծուած է Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ: Միշտ ջանադիր եղած է իր հօտին կրօնաբարոյական դաստիարակութեան, սակայն քաղաքական աննպաստ պայմանները թոյլատու չեն եղած իրեն որ Սիսի մայրավանքին մէջ կարենար ձեռնարկել կրթական մեծ գործի: Կիլիկիոյ պարպումէն ետք իր հօտին նման ինքն ալ թափառական ըլլալով ի վերջոյ իր Աթոռը հաստատած է Լիբանանի Անթիլիաս գիւղաքաղաքին մէջ: Յառաջացեալ տարիքին պատճառով իրեն Աթոռակից Կաթողիկոս ձեռնադրած է բազմավաստակ Բարգէն Եպիսկոպոս Կիւէխէրեանը: Իր փափաքով, Բարգէն Աթոռակից Կաթողիկոսին ջանքով եւ Շահէ վարդապետ Գասպարեանի (յետոյ եպիսկոպոս) վերատեսչութեամբ Անթիլիասի մայրավանքին մէջ հաստատուած է Ժառանգաւորաց վարժարան մը, 1931-ին, եկեղեցական ու կրթական մշակներ հասցնելու համար հայ ազգին:

Բարգէն Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, որ եղած է Արմաշի Դպրեվանքին առաջին շրջանաւարտներէն: Առաջին օրէն իր ուշքը կեդրոնացուցած է հայ եկեղեցւոյ բարեկարգութեան եւ հայ ժողովուրդի հոգեւոր դաստիարակութեան վրայ: Պոյսոյ մէջ հրատարակած է «Լոյս» կրօնական շաբաթաթերթը, 1905-1906 տարիներուն. իսկ Ամերիկա եղած միջոցին՝ 1918-1919՝ հրատարակած է «Տաւրոս» շաբաթաթերթը: 1925-ին Երուսաղէմ երթալով ստանձնած է «Սիռն»ի խմբագրապետութիւնը եւ միեւնոյն ատեն Ժառանգաւորաց վարժարանի աշակերտներուն դասաւանդած է Ս. Գրոց, հայ մատենագրութիւն,

եկեղեցական պատմութիւն եւ այլ կարեւոր դասեր: Իր ջանքերով եւ Սահակ Կաթողիկոսի արտօնութեամբ 1929-ին ծնունդ առած են Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցները Կիլիկեան թեմերէն ներս: 1931-ին Կաթողիկոս օծուելէ ետք, իր ազգային-կրօնական բազմազրաղ գործերուն մէջ մեծ կարեւորութիւն տուած է կրթական գործին՝ անձամբ վերցնելով կարգ մը դասաւանդութիւններ Ժառանգաւորաց վարժարանէն ներս: Հաստատած է տպարան եւ 1932-ին լոյս ընծայած է Կաթողիկոսարանի «Հասկ» պաշտօնաթերթը: Հիմնած է նաեւ Անթիլիասի մատենադարանը: Գրած է «Դասեր Աւետարանէն» (Ա. եւ Բ. հատորներ), «Բարեկարգութիւն Հայ Եկեղեցւոյ», «Հայ Եկեղեցի», «Քրիստոնէական», «Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ» գիրքերը եւ այլ գործեր ու յօդուածներ: Հայաստան թուրքերէնի թարգմանած է Ժամագիրքը՝ թրքախօս հայ զանգուածներու համար. իսկ հայ մանուկները եկեղեցական երաժշտութեան վարժեցնելու համար պատրաստած է «Փոքրիկներու Ժամագիրքը»:

Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեան, որ եղած է սրբակեաց, խոհուն, պերճախօս եւ Աստուծոյ շնորհներով օծուն եկեղեցական մը, նախանձախնդիր հայ եկեղեցւոյ աւանդութիւններուն: Արմաշի վանքէն շրջանաւարտ ըլլալէ ետք իր կարգին դաստիարակած է հայ պատանիները: Վարած է առաջնորդական պաշտօններ զանազան տեղեր: Մեծ կարեւորութիւն տուած է կրթական ու դաստիարակչական գործերուն: Իր հոգեշունչ քարոզներով Աստուծոյ շաւիղները ցոյց տուած է հայ բազմութիւններուն: Եղիչէ Պատրիարք Դուրեանի վախճանումէն ետք՝ 1931-ին ընտրուած է Երուսաղէմի Պատրիարք եւ ունեցած է բեղուն գործունէութիւն: Ֆրանսերէն լեզուէն կատարած է բանասիրական, փիլիսոփայական, հոգեբանական եւ մանկավարժական թարգմանութիւններ: Հայ ժողովուրդին կրօնական զգացումները առաւել զօրացնելու համար մաքուր

աշխարհարարի թարգմանած է «Նարեկ» աղօթամատենանը: Գրած է «Սուրբ եւ Տօնք», «Բարեկարգութիւն Հայ Եկեղեցւոյ», «Աւետարանի ձամբէն» եւ այլ գիրքեր, ու նաեւ հոգեչունչ քարոզներ եւ յօդուածներ:

*
* *

Հայ գիրերու գիւտը եւ անով սկսած քրիստոնէական հայեցի դաստիարակութիւնը նոր կերպարանք տուին Հայ ժողովուրդին: Ինքնուրոյն եւ անկախ մշակոյթը Հայուն քրիստոնէական հաւատքին հետ միատեղ զօրացուց անոր ազգային գիտակցութիւնը, սրով ան կրցաւ դիմադրել զինք կլանել ուզող իրմէ գերադաս ոյժերու յորձանքներուն:

Գասներորդ դարուն, դժբախտաբար քրիստոնէական դաստիարակութիւնը տեղքայլ ըրած է եւ հետզհետէ տկարացած: Հայրենիքի մէջ տիրող վարչակարգը ամբողջութեամբ վերցուցած էր կրօնական դասերը. իսկ զազթաշխարհի հայ վարժարաններու մէջ կիրարկուող դասացուցակներուն վրայ քիչ տեղ տրուած է Հայ քրիստոնէականին, օտար լեզուական դասերու խճողումին պատճառով: Քրիստոնէական դաստիարակութեան անբաւարարութիւնը պատճառ դարձած է որ Հայ երիտասարդներն ու չափահասները պէտք եղած չափով չճանչնան իրենց մայրենի եկեղեցին ու չփարին անոր, որուն աւագանէն ծնած են:

Ներկայիս հայաստանեայց եկեղեցին ունի Ս. Էջմիածնի, Անթիլիասի մայրավանքի եւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ժառանգաւորաց վարժարանները: Հայ ժողովուրդը իր աչքերը սեւեռած է այդ երեք կրթական օրրաններուն՝ Աւետարանին լոյսը ըմբռնելու եւ անով վառ պահելու իր ազգային ինքնուրոյն պայծառ նկարագիրը Աստուծոյ նայուածքին տակ ու աշխարհի ազգերուն մէջ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Յովհաննէս Կոլտ եւ Գրիգոր Պատրիարքները ո՞ր վանքին սաներն եղած են:
- 2) Ի՞նչ գործեր կատարած է Յովհաննէս Կոլտ Պատրիարքը:
- 3) Ո՞վ յաջորդած է Յովհաննէս Կոլտ Պատրիարքին:
- 4) Ո՞վ է Գրիգոր Պատուելի Փէշտիմալեան:
- 5) Ո՞վ հիմնած է Ներսէսեան ձեմարանը Թիֆլիսի մէջ:
- 6) Ո՞վ հրատարակած է «Արժուի Վասպուրականի» եւ «Արժուիկ Տարօնոյ» պարբերաթերթերը: Ուրիշ ի՞նչ գիրքեր հրատարակած է նոյն անձը:
- 7) Ո՞ր գիրքերը գրած է Ներսէս Վարժապետեան Պատրիարք:
- 8) Ո՞վ է հիմնադիրը Արմաշի դպրեվանքին:
- 9) Ո՞վ հիմնած է Էջմիածնի Գէորգեան ձեմարանը:
- 10) Ո՞վ եղած է Արմաշի դպրեվանքին առաջին վերատեսուչը:
- 11) Ո՞ր գիրքերը գրած է Մաղափա Արք. Օրմանեան:
- 12) Մաղափա Արք. Օրմանեանի Պատրիարք ընտրուելէն ետք ո՞վ ստանձնած է Արմաշի դպրեվանքին վերատեսուչութիւնը:
- 13) Գրական ի՞նչ գործեր արտադրած է Եղիշէ Պատրիարք Դուրեան:
- 14) Սահակ Խապայեան ո՞ր Աթոռին համար Կաթողիկոս օծուեցաւ:
- 15) Ո՞ւր հաստատուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռը:
- 16) Ո՞վ եղած է Սահակ Հայրապետին Աթոռակից կաթողիկոս:
- 17) Ո՞վ է հիմնադիրը Անթիլիասի Կաթողիկոսարանի «Հասկ» պաշտօնաթերթին:

18) Բարգէն Կաթողիկոս գրական ի՞նչ գործեր արտադրած է:

19) Նկարագրի ուշագրաւ ի՞նչ գիծեր ունեցած է Թորգոմ Պատրիարք Գուշակեան:

20) Հայաստանեայց Եկեղեցիին ներկայիս քանի՞ ժառանգաւորաց վարժարաններ ունի:

Ի Ե. Դաս

Կիրակնօրեայ Դպրոցը եւ Անոր Մուտքը Հայաստանեայց Եկեղեցոյ Ծիրէն Ներս

Անգլիոյ Կլուէսթըր քաղաքին մէջ, շարաթաթերթի խմբագիրը մը՝ Ռոպէրթ Ռէյքս անունով, փողոցներու մէջ թշուառ մանուկներուն թափառելը տեսնելով կը խղճայ անոնց վրայ եւ կը մտածէ թէ ի՞նչ միջոցներու կրնայ դիմել զանոնք կրթելու համար:

1780 թուականին, Յուլիսեան Կիրակի օր մը, քաղաքի թաղերէն մէկուն մէջ ցրուած մանուկները ի մի հաւաքելու եւ զանոնք դաստիարակելու գեղեցիկ գաղափարը կը ծագի Ռոպէրթ Ռէյքսի մտքին մէջ: Անմիջապէս գործի կը լծուի եւ տան մը մէջ կը սկսի Մուրրզըրայի պատմութիւններով եւ բարոյախօսութիւններով առինքնել իր հաւաքած մանուկները: Յաջորդող Կիրակիներուն կը շարունակէ իր սկսած գործը՝ հետաքրքրութիւն յառաջացնելով շրջապատին մէջ: Կ'ունենայ օգնական ընկերներ եւ հետզհետէ կ'ընդարձակէ իր ձեռնարկը՝ այլ թաղերու մէջ եւս կիրակնօրեայ դպրոցներ հաստատելով:

Ռոպէրթ իր թերթին միջոցաւ հանրութեան կը ծանօթացնէ դաստիարակչական այս կարեւոր շարժումը եւ իր շուրջը կը բոլորէ համակիրներ՝ գործը աւելի յառաջ տանելու համար:

Կ'ունենայ նաեւ հակառակորդներ իր այս գեղեցիկ ձեռնարկին եւ վերապահ եկեղեցականներ: Սակայն Ռոպէրթ չի յուսահատիր, այլ համբերութեամբ կը դիմադրուէ իր դէմ ցցուող արգելքները եւ հաւատքով կը շարունակէ իր աշխատանքը: Ի վերջոյ կիրակնօրեայ դպրոցներ

րուն բերած կրթական ու բարոյական նպաստը կը հարթէ իր երթի ուղին: Կը չքացնէ բոլոր խոչընդոտները եւ լայն կը բանայ յաջողութեան դուռը: Անգլիոյ թագուհին իր հովանաւորութիւնը կը շնորհէ այս օգտաշատ ձեռնարկին եւ կիրակնօրեայ դպրոցները կը տարածուին երկրին ամէն կողմերը:

Անգլիոյ մէջ կիրակնօրեայ դպրոցներու կողմէ ջամբուած կրօնաբարոյական դաստիարակութեան բերած բարիքները կը հրապուրեն այլ երկիրներու եկեղեցական առաջնորդները եւ անոնք ալ կը սկսին իրենց թեմերուն մէջ կիրարկել կիրակնօրեայ դպրոցի դրութիւնը, ու ժամանակի ընթացքին աշխարհի այլեւայլ շրջաններուն մէջ կը հաստատուին բազմաթիւ կիրակնօրեայ դպրոցներ:

*
* *

Հայ եկեղեցւոյ պատմութիւնը մեզի ցոյց կու տայ թէ մեր սուրբ հայրապետները մեծ կարեւորութիւն տուած են կրօնաբարոյական դաստիարակութեան: Անցեալին ունեցած ենք նուիրեալ վարդապետներ, քահանաներ եւ տիրացու վարժապետներ, որոնք կիրակնօրեայ դպրոցի դրութեան անտեղեակ ըլլալով հանդերձ, անոր իտէալը ունեցած են իրենց սրտին մէջ եւ իրենց ազատ պահերուն յաճախ հաւաքած են հայ մանուկներն ու պատանիները եւ զանոնք վարժեցուցած են աստուածաբանութեան՝ սորվեցնելով անոնց աղօթք, շարական, սաղմոս կամ մաղթանք: Պատմած են Աստուածաշունչէն կամ սուրբերու կեանքէն դրուագներ եւ հայ տղոց մէջ վառ պահած են Հայ եկեղեցւոյ աւանդութիւններն ու ազգային տոհմիկ բարի սովորութիւնները:

*
* *

Հայաստանեայց Եկեղեցւոյ ծիրէն ներս կիրակնօրեայ դպրոցներու որդեգրումը անհրաժեշտութիւն դարձած է առաւելաբար 1915-ի ջարդերէն եւ վերապրող հայոց տարագրութենէն ետք: Նախապէս մեր հայրենի բնագաւառներուն մէջ հայ ազգային վարժարաններու դասացուցակներուն վրայ լայն տեղ տրուած էր կրօնական դաստիարակութեան: Հայերէն լեզուի համար պատրաստուած ընթերցանութեան գիրքերը կը պարունակէին բազմաթիւ կրօնաշունչ պատմուածքներ եւ քերթուածներ՝ յատկապէս զբարար դասագիրքերը: Իսկ քրիստոնէական կրօնի ուսման կը յատկացուէին առաւել պահեր: Սակայն տարագրութենէն եւ կիլիկիոյ պարպումէն ետք երբ հայութիւնը կը գաղթէ Սիւրիա, Լիբանան եւ ի սփիւռս աշխարհի, կը հարկադրուի ապրիլ նոր պայմաններու տակ: Նորակազմ հայ դպրոցները հիւրընկալ երկիրներու պետական ուսումնական ծրագիրները գործադրելու հարկադրանքին տակ ըլլալով, կը ստիպուին կրճատել հայոց պատմութեան եւ կրօնի դասապահները:

Տիրող նոր կացութեան մէջ աւելի կը շեշտուի կիրակնօրեայ դպրոցներուն կարիքը՝ հայ մանուկներու կրօնաբարոյական դաստիարակութեան համար:

Իր հօտին հետ գաղթական Մեծի Տանն կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան ծերունագարդ Կաթողիկոսը, նախանձախնդիր հայ զանգուածներու կրօնաբարոյական դաստիարակութեան՝ նամանաւանդ նորահաս սերունդին, այդ օրերուն անհրաժեշտ նկատած է նախ կայք մը ունենալ իր Աթոռին համար եւ ապա հաստատել դպրեվանք մը՝ եկեղեցականներ հասցնելու ծրագրով:

Սահակ Կաթողիկոս իր յառաջացեալ տարիքը նկատի ունենալով 1928-ին կը դիմէ Երուսաղէմի վանքին մէջ

պաշտօնավարող բազմամաստակ Բարգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեանին եւ կ'առաջարկէ անոր ըլլալ իրեն աթոռակից կաթողիկոս: Բարգէն սրբազան Սահակ Կաթողիկոսին կ'այցելէ եւ համամտութիւն կը յայտնէ իրեն եղած առաջարկին ու կը վերադառնայ Երուսաղէմ, ժամանակ մը եւս շարունակելու իր դաստիարակչական ու խմբագրական պաշտօնները Երուսաղէմի վանքէն ներս: Միեւնոյն ատեն այնտեղէն կապի մէջ կը մտնէ Սահակ Կաթողիկոսին հետ եւ մօտէն կը հետաքրքրուի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ապագայով: 1930 թուին երբ կաթողիկոսական Աթոռը Անթիլիաս կը հաստատուի, Բարգէն Եպիսկոպոս Լիբանան գալով ձեռք կ'առնէ կաթողիկոսարանին գործերը ու կը լծուի դպրեմանքի հաստատումին եւ վերելքին: Իսկ 1931-ին Սահակ Կաթողիկոսի ձեռքով կ'օժուի Մեծի Տանն Կիլիկիոյ աթոռակից Կաթողիկոս, Հալէպի մէջ:

1929 թուին համաշխարհային կիրակնօրեայ դպրոցներու Ամերիկեան ընկերութիւնը կ'որոշէ Լիբանանի Պաալպէք քաղաքին մէջ համաժողով մը գումարել՝ սուրբ գրային երկիրներու մէջ կիրակնօրեայ դպրոցներ հաստատելու միտումով: Ընկերութեան պատասխանատուներէն Տաքթոր Շիրրը, իրեն գործակից ունենալով Պրն. Լեւոն Զէնեանը, Երուսաղէմ կ'երթայ եւ կը տեսակցի Բարգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեանին հետ. ապա կը ներկայանայ Երուսաղէմի Հայոց Պատրիարք Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեանին ու կը խնդրէ որ հայաստանեայց եկեղեցին եւս իր կողմէ ներկայացուցիչ մը ղրկէ համաժողովին:

Յետ խորհրդակցութեան, Եղիշէ Պատրիարքին հաւանութեամբ Բարգէն Եպիսկոպոս Պէյրութ կու գայ եւ Համաշխարհային Կիրակնօրեայ Դպրոցներու Միութեան ներկայացուցիչներուն հետ կը ներկայանայ Սահակ Կաթողիկոսին: Վեհափառ Հայրապետը իր հաւանութիւնը կը յայտնէ որ Բարգէն Եպիսկոպոս Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ներկայացնէ Պաալպէքի համաժողովին մէջ: Բար-

գէն Եպիսկոպոս անցեալին իր հրատարակած «Լոյս» շաբաթաթերթով եւ զանազան յօդուածներով հետամտած էր լուսաւորել հայ ժողովուրդը ու բարեկարգել անոր կրօնաբարոյական կենցաղը: Միշտ ջատագոված էր այլ ազգերու մէջ կիրարկուող կիրակնօրեայ դպրոցներու դրութիւնը եւ փափաքած էր որ Հայ Եկեղեցիէն ներս ալ որդեգրուէր ան:

Բարգէն Եպիսկոպոս, իրեն հետ ունենալով Արտաւազը Մայրազոյն Վարդապետ Միւրմէեանն ու լեզուագէտ Դիոնիսիոս Քահանայ Տրէգեանը, կը մասնակցի Պաալպէքի համաժողովին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան անունով:

Պաալպէքի համաժողովը կ'որոշէ կիրակնօրեայ դպրոցներ հաստատել հայ մանուկներու համար՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ հովանաւորութեան ներքեւ, ու այդ գործին վարիչ տնօրէնութեան պաշտօնին համար ալ թեկնածու կը ներկայացնէ Պրն. Լեւոն Զէնեանը, որ Հայ Առաքելական Եկեղեցւոյ զաւակ էր եւ որպէս մանկավարժ ստացած էր համալսարանական ուսում:

Միջանկեալ յիշենք, որ Հայ Եկեղեցւոյ ծիրէն ներս առաջին կիրակնօրեայ դպրոցը սկսած է գործել 1923 թուին Հալէպի մէջ՝ Սահակ Կաթողիկոսի թոյլտուութեամբ, սակայն ան տեղական բնոյթ ունեցած է եւ չէ բնդհանրացած:

Սահակ Կաթողիկոս Պաալպէքի համաժողովին հաղորդագրութիւնը ստանալով կ'օրհնէ առաջարկուած ձեռնարկը ու կ'արտօնէ կիրակնօրեայ դպրոցներ բանալ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերէն ներս:

Պրն. Լեւոն Զէնեան Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ-Տնօրէն նշանակուելով կը սկսի գործի 1929 թուին, Հալէպի մէջ: Նախ իր շուրջը կը բոլորէ նուիրեալ երիտասարդ-երիտասարդուհիներ եւ ամառուան ընթացքին մասնաւոր դասընթացքով զանոնք կը պատրաստէ կիրակնօրեայ դպրոցի ուսուցչութեան

պաշտօնին. իսկ աշնան, Հալէպի ազգային առաջնորդարանի մանկապարտէզի սրահին մէջ պաշտօնապէս կը բանայ կիրակնօրեայ դպրոցը, որուն նշանաբանը կ'ըլլայ Յիսուս Քրիստոսի հետեւեալ պատգամը. — «Թո՛ղ տու՛ մանկուռնդ գալ առ իս, եւ մի՛ արգելու՛ գդոսա» (Թո՛ղ տու՛էք որ այդ մանուկները ինծի դան եւ մի՛ արգելէք զանոնք) (ՄԱՐԿ. Ժ. 14):

Այս յոյժ կարեւոր գործն ալ իր սկզբնական օրերուն կ'ունենայ իր հակառակորդները եւ կարգ մը մարդիկ կ'ուզեն արգելք ըլլալ անոր. սակայն Սահակ Կաթողիկոս իմաստութեամբ առաջքը կ'առնէ: Անմիջապէս կը հաղորդակցի Բարգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեանին հետ եւ 1930 Յունիս 28-ին կը հրապարակէ իր Կոնդակը ու կը յորդորէ եւ կը հրահանգէ որ ամէն տեղ կիրակնօրեայ դպրոցներ հաստատուին՝ հայ մանուկներու կրօնաբարոյական դաստիարակութեան համար:

1931-ին Վեհափառ Բարգէն Աթոռակից Կաթողիկոս եւ Պրն. Լեւոն Զէնեան կը խմբագրեն Հայաստանեայց Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներու կանոնադիրը, որ վաւերացուելէ ետք կը ղրկուի բոլոր թեմերուն:

Պէյրուսի մէջ առաջին անգամ կիրակնօրեայ դպրոցը կը սկսի Նոր Մարաշի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյն մէջ, եւ հետզհետէ բոլոր թաղերն ալ կ'ունենան իրենց կիրակնօրեայ դպրոցները: Ներկայիս Սիւրիոյ եւ Լիբանանի թեմերէն զատ կիրակնօրեայ դպրոցներ ունին Կիպրոսի, Քուէյթի, Յունաստանի եւ Ամերիկայի գանազան շրջաններու հայ գաղութները:

Կիրակնօրեայ դպրոցներու գրութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ ծիրէն ներս որդեգրուելով՝ դրօշմուած է հայկականութեամբ: Կիրակնօրեայ դպրոցէն ներս հայ մանուկներն ու պատանիները իրենց կրօնաբարոյական դաստիարակութիւնը կը ստանան հայ եկեղեցւոյ դաւանութեան, վարդապետութեան եւ աւանդութիւններուն

համաձայն: Նորահաս հայ սերունդը հոն կը սորվի Աստուծոյ օրէնքներն ու պատուիրանները, իր սուրբ հայրապետներուն յօրինած շարականներն ու աղօթքները, իր Մայրենի Եկեղեցիին աւանդութիւններն ու սուրբերու վարքը, որպէսզի դառնան տիպար հայորդիներ՝ կուս հաստքով, հայուն վայել անվեհեր հոգիով եւ մաքուր նկարագրով:

Իր հիմնադրութեան օրէն սկսեալ Հայաստանեայց Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներու Վարիչ Տնօրէնութեան գրասենեակը իր դասագիրքերէն զատ հրատարակած է բազմաթիւ կրօնաբարոյական եւ դաստիարակչական գիրքեր, երգարաններ եւ սուրբ դրայի նկարներ: Ունեցած է «Մեր Կեանքը» անուն ամսաթերթը, որ հետագային վերահրատարակուած է «Իրազարկ» անունով: Ժամանակ մը «Իրազարկ»ը լոյս տեսած է որպէս տարեգիրք: Իսկ այժմ՝ լոյս կը տեսնէ որպէս ամսաթերթ, «Նոր Իրազարկ» անունով:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ո՞ր թուականին հիմնուած է առաջին կիրակնօրեայ դպրոցը. ո՞ր երկրին մէջ. ո՞վ է հիմնադիրը:
- 2) Ռոպերթ Ռէյքս Ի՞նչ բան է թելադրուած կը հիմնէ կիրակնօրեայ դպրոցները:
- 3) Կիրակնօրեայ դպրոցներու շարժումը Անգլիայէն ո՞ւր կը տարածուի:
- 4) Հայաստանեայց եկեղեցւոյ ծիրէն ներս տեղական քնոյթ ունեցող առաջին կիրակնօրեայ դպրոցը ո՞ր թուականին եւ ո՞ր քաղաքին մէջ բացուած է բայց չէ ընդհանրացած:
- 5) Ո՞ր Կաթողիկոսին հրամանով եւ Կոնդակով ծնունդ առած են հայաստանեայց եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցները:

6) Պատվաբեհի համաժողովը ի՞նչ նպատակով գումարում է:

7) Այդ համաժողովին մէջ ո՞վ ներկայացուցած է Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը:

8) Պատվաբեհի համաժողովը ի՞նչ որոշում առած է հայ մանուկներու կրօնական դաստիարակութեան համար:

9) Ո՞վ եղած է առաջին Վարիչ-Տնօրէնը Հայաստանեայց Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներուն:

10) Քրիստոսի ո՞ր իօսէր նշանաբան ընտրուած է Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցներուն համար:

11) Պրն. Լեւոն Զեմեան ինչպէ՞ս սկսած է իր գործը եւ առաջին անգամ ո՞ր քաղաքին մէջ բացած է կիրակնօրեայ դպրոցը. ո՞ր թուականին:

12) Հայաստանեայց Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներու հիմնադրութեան նպատակը ի՞նչ է:

13) Ներկայիս ի՞նչ անունով կը հրատարակուի Հայաստանեայց Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներու պաշտօնաթերթը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
Երկու խօսք	3
Յառաջաբան	7
Դաս	
1.— Մարդ Արարածը Եւ Աստուծոյ Փրկագործութեան Խորհուրդը	9
2.— Աստուածաշունչ Մատեան (Ա. Մաս)	15
3.— Աստուածաշունչ Մատեան (Բ. Մաս)	20
4.— Հին Ուխտի Մարգարէները (Ա. Մաս)	25
5.— Հին Ուխտի Մարգարէները (Բ. Մաս)	30
6.— Քրիստոսի Առաքելութիւնը	37
7.— Ինչ Երանիները	44
8.— Տէրունական Աղօթքը	50
9.— Յիսուսի Առակները	56
10.— Յիսուսի Հրաշքները	60
11.— Յիսուս Քրիստոսի Հակառակորդները	64
12.— Յիսուսի Խաչելութիւնն ու Յարութիւնը եւ Հրեայ Ազգին Կամակորութիւնը	70
13.— Քրիստոսի Տասներկու Առաքելները	77
14.— Սուրբ Հոգիին Էջքը եւ Առաքելներուն Բարոզութիւնը	83
15.— Պօղոս՝ Հեթանոսաց Առաքելը	89
16.— Աշխարհի Լոյսն ի Հայաստան	98

17.— Բրիտոններինը Պետական Կրօնը Հոռմէական Կայսրութեան	104
18.— Ընդհանրական Եկեղեցոյ Բաժանեալ Ժողատրումները	109
19.— Հայաստանեայց Եկեղեցին Ընդհանրական Եկեղեցոյ Ծիրին Մէջ	119
20.— Տօներ եւ Սրբոց Յիշատակութիւններ	129
21.— Բրիտոնէական Դաստիարակութիւնը Պատճառ Հայ Գիրերու Գիտին եւ Հայ Մատենագրութեան	142
22.— Բրիտոնէական Դաստիարակութիւնն ու Հայ Մատենագրութիւնը Ժ., ԺԱ., եւ ԺԲ. Դարերուն	149
23.— Բրիտոնէական Դաստիարակութիւնն ու Հայ Մատենագրութիւնը ԺԳ. դարէն մինչեւ ԺԷ. Դար	157
24.— Բրիտոնէական Դաստիարակութիւնն ու Հայ Մատենագրութիւնը ԺԸ., ԺԹ. եւ Ի. Դարերուն:	167
25.— Կիրակօրեայ Դարոցը եւ Անոր Մուտքը Հայաստանեայց Եկեղեցոյ Ծիրէն Ներս	175